

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՍԱԴՐԱՄ

Արմեն Աղայան

## ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԷՌԵՑՈՒԸ,  
ԶԵՎԱՎՈՐՈՒԸ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ (Ներածության փոխարեն)

Մարդկության պատմությունը հարուստ է ազգերի ու պետությունների վերացման բազում օրինակներով և յուրաքանչյուր դեպքում դա կարելի է մեկնաբանել որպես ազգին ուղղված վտանգները չկանխելու արդյունք։ Սակայն անվտանգության խնդիրները մինչև XX դարը նույնացվել են երկրի պաշտպանունակության հետ։ Երկու աշխարհամարտերն այնքան մոտեցրեցին երկրները միմյանց, այնքան խճճեցին նրանց փոխհարաբերությունները, ծնելով պատերազմի նոր տեսակներ՝ ինֆորմացիոն-զաղափառախոսական, սպառազինությունների սառը մրցավագք, տնտեսական, մշակութային-քաղաքակրթական, և այլն, որ պաշտպանունակությունը վերածվեց Ազգային անվտանգության (այսուհետ՝ ԱԱ) ենթահարցերից մեկի։ Այդ պատերազմները ունակ են նորովի ստրկացմելու ազգերն ամբողջությամբ՝ լիովին կոտրելով նրանց դիմադրողականությունը և աստիճանաբար ոչնչացնելով ազգային նկարագիրը, կամ առնվազն տևականորեն խոչընդոտել նրանց զարգացմանը՝ այլ ժողովուրդների համեմատ դարձնելով անմրցունակ։

Տեխնոլոգիաների զարգացման արդյունքում աշխարհը, իսկապես, գնալով փոքրանում է, ժողովուրդներին մոտեցնում է միմյանց։ Ազգերի ու պետությունների փոխհարաբերությունները շատ ավելի բազմաբնույթ ու ծավալում են դարձել, և ավելի հաճախ են խաչաձևվում նրանց շահերը ամենատարբեր ոլորտներում նույնիսկ այն դեպքերում, երբ հարաբերությունները բոլորովին անտոգոնիզմ չեն պարունակում։ Աշխարհը վաղուց արդեն ձևավորվել է որպես ազգերի (սուբէկտների) մեկ ամբողջական համակցություն՝ միջակցության ընդհանուր կանոններով։ Պատերազմն նոր ձևերի արդյունքում հատկապես, բայց նաև օբյեկտիվ զարգացումների հետևանքով, յուրաքանչյուր երկրի կամ ժողովրդի առջև, ամենատարբեր բնագավառներում ծառանում են խնդիրներ, որոնց չլուծվածությունը կարող է վտանգավոր լինել նրանց զարգացման կամ նույնիսկ գոյության համար։

ԱԱ հասկացությունը ժամանակակից քաղաքական բառապաշտիկ կարևոր բաղկացուցիչներից է։ ԱԱ-ն համակարգերով այսօր պայմանա-

Վորվում են երկրների ու ժողովուրդների գարգացման հեռանկարային ուղղությունը և ռազմավարությունը: Պետությունների ԱԱ-ն հարցերը տնօրինող մարմինները գերակայություն են ծեռք բերում գործադիր իշխանության մյուս մարմինների նկատմամբ: ԱԱ-նն ուղղված սպառնալիքով հիմնավորվում և արդարացվում են պետությունների սովորաբար դատապարտելի առանձին գործողություններ՝ լինի արտաքին ագրեսիա կամ իրավունքների սահմանափակում սեփական երկրում:

Առաջին աշխարհամարտը հարուստ պաշար տվեց պետություններին ԱԱ-ն կարևորելու իմաստով, սակայն երկրորդը և նրան հաջորդած սառը պատերազմներն էին, որ պարտադրեցին երկրներին ստեղծել ԱԱ կուր համակարգեր՝ իրենց օրենսդրությամբ և հատուկ մարմիններով: Առաջին անգամ ԱԱ մասին օրենք ընդունվել է Միացյալ Նահանգներում 1947թ, որով ստեղծվել է ԱԱ Խորհրդորդը: ԱԱ անվտանգության համակարգը, կամ գոնե նրա արտաքին կաղապարը, օրինակելի է դարձել բազմաթիվ, այդ թվում նախկին ԽՍՀՄ, երկրների համար: Սակայն միշտ չէ, որ կաղապարը նաև նույն բովանդակությունն է պարունակում: ԱԱ-ի և Հայաստանի նման փոքր երկրների հանգամանքները, հետևաբար նաև անվտանգության խնդիրները, եապես տարբերվում են և պահանջում համապատասխան լուծումներ, ինչը անհնար է դարձնում այս երկրների ԱԱ համակարգերի համենատության չափանիշներ գտնելը:

Առանձին երկրների դեպքում ԱԱ ապահովման բեռք դրված է այլ հասարակական ինստիտուտների վրա: Այս տեսակետից հետաքրիր են մեր հարևանները՝ ԻԻՇ-ում Այաթոլլարի ինստիտուտը, կամ Գլխավոր Շտաբի դերակատարությունը Թուրքիայում: Բազմաթիվ երկրներ, չունենալով ինքնուրույն աշխարհաքաղաքական դերակատարություն, հավակնություններ կամ կարևորություն՝ ոչ աշխարհում և ոչ էլ տարածաշրջանում, իսկ հաճախ գտնվելով այս կամ այն, ավելի հզոր սուրբեկտի ազդեցության ոլորտում, ազգային անվտանգության համակարգը (մասսամբ կամ ամբողջովին) փոխարինում են կոլեկտիվ անվտանգության որևէ համակարգում մասնակցությամբ: Ուրիշները նման համակարգերը դիտարկում են որպես կոնպրոմիս կամ օգտագործում են որպես գործիք իրենց խնդիրները լուծելու համար: Արդյունքում գոյություն ունեն կոլեկտիվ անվտանգության մի շարք ինստիտուտներ՝ ՄԱԿ, ԵԱՀԿ, ՆԱՏՕ, Արաբական «Լիգան», երկողմ և բազմակողմ համաձայնագրեր, այլ տարածաշրջանային կազմա-

կերպություններ, որոնք վերածվել են ազգերի միջև պայքարի մրցարեմի:

Մեզանում ԱԱ մասին պատկերացումները այսօր ձևավորվում են խիստ տարաբնույթ ստերեոտիպների հիման վրա: Առաջին հերթին դա ՊԱԿ-ի մասին հիշողություններն են, որոնցում ԱԱ-ը ընկալվում է որպես պետական փակ ռեժիմ և այն ապահովող քաղաքական ուստիկանություն: Մյուս կողմից այն նույնացվում է հատուկ ծառայությունների հետ, որոնք գերպետությունների ձեռքին գործիք են համաշխարհային տիրապետության համար պայքարում: Արանից բացի, արևանյան գաղափարախոսական ազդեցության մեծացմանը մեր տրամաբանության մեջ ներդրվում են այսպես կոչված միջազգային ստանդարտները, որոնցում ԱԱ հաճախ նույնացվում է գլոբալ կամ տարածաշրջանային կոլեկտիվ անվտանգության հետ: Եվ, վերջապես, Հայաստանի աշխարհաքաղաքական պայմանները հիշեցնում են բարդագույն խնդիրների առկայության մասին, որոնց լուծնաը, ենթադրվում է, որ պետք է ծառայի հենց մեր ԱԱ ինքնատիպ համակարգը:

Արդյունքում ԱԱ ասելով սովորաբար հասկանում են արտաքին և ներքին սպառնալիքներից անձի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության վիճակը:<sup>1</sup> Ընդ որում՝ կենսականորեն կարևոր շահեր ասելով՝ հասկանում են պահանջնունքների ամբողջություն, որոնց բավարարումը ապահովում է անձի, հասարակության և պետության գոյության ու առաջնարար գարգացման հնարավորություն: Այս ձևակերպումից հետո բոլորովին պատահական չէ, որ օրենսդրական նախագծերում ազգային բառը աստիճանաբար և բնականորեն քննարկումից դուրս մղվեց, քանի որ դիտարկելով որպես անվտանգության օբյեկտ անձի, հասարակության և նույնիսկ պետության դեմ ուղղված վտանգները, մենք ամենին դրա մեջ չենք տեղավորում դրանց ազգային պատկանելության ուղղված սպառնալիքները:

«Անվտանգություն» հասկացությունը առանձին վերցրած նշանակում է օրյեկտի գոյությանը և նորմալ կենսագործունեությանն ուղղված վտանգների չեզոքացում: Ավելի բարդ է սահմանել «ազգայինը»: Այս բառը մեզանում, վերջին շրջանում գործածվում է նաև անգլերեն national իմաստով: Տարբեր երկրներում խոսելով ԱԱ մասին հենց այդ՝ համերկրային կամ հա-

<sup>1</sup> Տես «Անվտանգության մասին» ՀՀ օրենքի նախագիծ և Հյուսիսական պայմանագրի համապատասխանություն»:

մապետական իմաստն են օգտագործում: Միջազգային հանրությունը, որպես կանոն, համաշխարհային համակցության սուբյեկտ է դիտարկում ոչ թե էրնիկ կազմավորումները՝ ազգերը, այլ պետություններն իրենց ժողովուրդներով, որոնք կարող են լինել միատարր կամ խառը, ներառել որևէ ազգի հիմնական հատվածը կամ նրա մի փոքր մասը միայն: Մյուս կողմից անվտանգության ապահովումը դիտարկվում է բացառապես որպես պետության գործառույթ, որը պետությունները պետք է փորձեն իրականացնել որպես իրենց տարածքում ապրող բոլոր ազգերի ներկայացուցիչ:

Եթե առկա է պետության բացահայտ ազգայնականությունը առերևույթ արգելող սահմանափակում, ապա միայն այս պատճառով Դայաստանի համար կարող է և ընդունելի լինել անվտանգության վերոնշյալ օրենսդրական սահմանումը, պայմանով, որ դրա կողքին լինեն իրական մեխանիզմներ նաև ԱԱ ապահովելու համար: Սակայն կարծում ենք, որ հենց ԱԱ օրենսդրական սահմանման օգուտմերը շատ ավելի մեծ են, քան միջազգային հանրության կողմից չհասկացվելու վտանգը:

Ազգի և պետության անվտանգություն հասկացությունները չի կարելի միմյանց հակադրել: Դատկապես դա չի հաջողվի անել, եթե պետական սահմանները ենթադրվում է, որ հանընկնում են տվյալ պետականակերտ ազգի հայրենիքի սահմանների հետ: Մյուս դեպքերում պետական սահմանները, լեզվի և կրոնի պես, ժամանակի ընթացքում էապես նպաստում են ազգակազմությանը՝ էրնիկ միատարրությանը, դրա համար ապահովելով հարաբերականորեն ինքնամփոփ լեզվամշակութային և տնտեսական միջավայր: Սա թույլ է տալիս պետություններին խառը էրնիկ կազմ ունեցող իրենց ժողովուրդներին ձուլել մեկ ազգի մեջ: Մյուս կողմից՝ ազգերը ձգտում են ինքնիշխանության իրենց հայրենիքի ողջ տարածքում. և հաջողության դեպքում ձևավորում ազգ-պետություն: Այսպիսով, ազգը և պետությունը հիմնականում փոխայմանավորված են միմյանցով, սակայն էրնիկ ազգը շատ ավելի մնայուն (ավելի մեծ իներցիա ունեցող) երևույթ է, քան պետությունները՝ այդ թվում իր կողմից ստեղծվածները: Կարող են լինել պետականագործ ազգեր, սակայն չեն կարող լինել պետություններ, որոնք չունենան ազգային պատկանելություն:

**ԱԱՆ-Ը ԱՎԱՏՐԱԼԻԱՆ, ԿԱՆԱԴԱՆ, ԱՐԳԵԲՆՍԻՆԱՆ և ԲՐԱՋԻԼԻԱՆ նույնպես ունեն այդ ազգային պատկանելությունը: Ենթա է, նրանք ձևավորվել են որպես ԵՎՐՈՊԱԿԱՆ երկրների գաղութներ և միառժամանակ հիշյալ պե-**

**տությունները պատկանել են այդ երկրներին, սակայն ընդհանուր տարածքը և նոր մշակույթի ձևավորումը հանգեցրել են նոր ազգերի կայացմանը՝ ինչքան էլ ասենք, որ ամերիկացի ազգություն գոյություն չունի: Այդ նոր ազգերն էլ հենց տերն են նախկին գաղութի տարածքում ձևավորված պետությունների:**

Ազգը, առնվազն պետության պես, մարդկային համակցության սուլույնը է և որպես այդպիսին յուրահատուկ է, այն կատարում է նպատակային գործողություններ և դրանցով հարաբերությունների մեջ է նտնօւմ այլ սուլույնների հետ: Ազգի այս հատկությունը պետության կորստից հետո երկար ժամանակ չի կորչում և չի սահմանափակվում նրա սահմաններով: Ցանկացած էրնիկ կազմավորման համար առկա են վտանգներ, որոնց թիրախը հենց ազգային ինքնատիպությունն է, այլ ոչ թե ստեղծած պետությունը: Այսինքն, ԱԱ խնդիրը գոյություն ունի ինքնին՝ ազգայինի հայերեն իմաստով, ինչպես որ այն մեզ համար գոյություն ուներ դարեր շարունակ, եթե գրված էինք պետությունից: Այսպիսով պետության անվտանգությունը պետք է ստորադասվի ազգայինին:

Նման վտանգ է այսօր առկա այն հին ազգ-պետությունների համար, որոնք ունեն ներգաղթի պրոբլեմ: Արաբները, թուրքերը և չինացիները, հակառակ սահմանափակող միջոցառումների, աստիճանաբար ողողում են ԵՎՐՈՊԱՆ շատ ավելի մեծ չափերով, քան այդ երկրները կարող են մարսել: Մյուս կողմից՝ ամերիկանիզմի մշակութային էքսպանսիան ստիպում է, օրինակ, Ֆրանսիային պաշտպանական միջոցառումներ իրականացնել: Այս վտանգները չեն սպառնում ԵՎՐՈՊԱԿԱՆ պետություններին, քայլ սպառնում են նրանց ազգային ինքնատիպությանը, ինչն, ի դեպ, նրանց բարգավաճման հիմնական պատճառն է:

ԱԱ համատեքստում ազգային սելիվ նաև պետք է պարզել, թե ինչպես է այն հարաբերվում մի կողմից անհատ քաղաքացիների, անդրազգային այլ հավաքականությունների և, մյուս կողմից, Վերազգային՝ տարածաշրջանային կամ գլոբալ անվտանգության հետ: ԱԱ ասելով պետք է նկատի ունենալ ողջ ազգի՝ որպես համաշխարհային համակցության մեջ հավաքական սուլույնի անվտանգություն, այլ ոչ թե նրա անհատ ներկայացուցիչների կամ ներքին այլ սուլույնների անվտանգությունների հանրագումար: Առավել ևս ԱԱ չի կարող հասկացվել որպես գլոբալ անվտանգության տեղայնացված մասնավորություն: Նրա առանձին տարրերը կարող

Են համընկնել կամ չհամընկնել անհատի, ընտանիքի, շրջանի բնակչության, խավի, մյուս կողմից՝ մարդկության, միևնույն տարածաշրջանի, կրոնի պատկանող կամ զարգացածության միևնույն մակարդակում գտնվող ժողովուրդների անվտանգության խնդիրների հետ: Պետությունը ունի պարտավորություններ ինչպես իր քաղաքացիների անվտանգությունը ապահովելու տեսանկյունից, այնպես էլ միջազգային պարտավորություններ, սակայն դրանք չի կարելի շփոթել ազգային անվտանգությունն ապահովելու պետական գործառույթի հետ:

Այսպիսով, ԱԱ ոչ թե անձի կամ պետության, այլ ազգի կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածությունն է, որը հնարավորություն է տալիս պահպանվել և զարգանալ որպես ազգ: Ապահովել ԱԱ նշանակում է չեզոքացնել ազգի, նրա ինքնատիպ գոյության և մրցունակ զարգացման դեմ ուղղված վտանգները: ԱԱ համակարգը հասարակության կողմից և հասարակության համար սահմանված ազգային վտանգները հայտնաբերող, կանխարգելող և հակազդող պայմանակարգ (ռեժիմ) է, որի նպատակն է ազգին, որպես հավաքականությանը, սպառնացող վտանգների չեզոքացումը:

Իհարկե, կա տեսակետ, որ զարգացումը չունի ազգային բնույթ, ավելին, որ ազգային պատկանելությունը սահմանափակում է զարգացումը, որ այսօր մշակույթը, տնտեսությունը համամարդկային են<sup>2</sup>: Այդ դեպքում պետք է ընդունել, որ անվտանգությունն էլ է համամարդկային, ազգապահպանման խնդիր չկա, հետևաբար՝ ԱԱ անհրաժեշտություն էլ չկա: Սակայն այս աշխատությունը փորձելու է կարևորել զարգացման և անվտանգության հենց ազգային բնույթը:

Յասկանալու համար ԱԱ եռթյունը թերևս անհրաժեշտ է սկսել նրա օրյեկտի և սուբյեկտի ուսումնասիրությունից:

## Օբյեկտը

Անվտանգության տարրեր (ոչ ազգային) համակարգերի համար հաճախ որպես օբյեկտ են դիտարկվում մի կողմից պաշտպանվող, իսկ մյուս կողմից՝ վտանգի աղբյուր հանդիսացող օբյեկտները<sup>3</sup>: Սա միանգամայն ընդունելի մոտեցում է անվտանգության ծառայությունների համար, երբ առկա է տվյալ օբյեկտի անվտանգությունը կոնկրետ վտանգներից ապահովելու հանձնարարական: Սակայն, երբ տրված չեն վտանգները, երբ խոսքը առաջին հերթին դրանք սահմանող, հայտնաբերող, գնահատող և ապա միայն վնասազերծող համակարգի նասին է, ապա օբյեկտ պետք է դիտարկել վտանգը: Վտանգի բացակայությունը կամ չգիտակցվածությունը անհմաստ է դարձնում դրանք վնասազերծող ծառայություններ ստեղծելը:

ԱԱ համակարգի օբյեկտը ազգային վտանգներն են: Այլ կերպ ասած՝ դրանք ազգի գոյության դեմ ուղղված և (կամ) նրա նորմալ կենսագործունեությունը, առաջընթաց զարգացումը սահմանափակող վտանգներն են: Եթե դիտարկենք միայն վտանգի աղբյուրները, ապա դրանք կարող են լինել այլ համակցության սուբյեկտների գործողություններ, այդ բվում՝ դիտավորությամբ կատարվածները, կամ օրյեկտիվ, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործընթացները: Ազգային վտանգները, և հետևաբար ԱԱ համակարգային խնդիրը ծագում է, որովհետև առկա երկու պայման:

1. Ազգը տարրեր համակցությունների շրջանակներում բազմաբնույթ հարաբերություններ ունի այլ սուբյեկտների հետ: (Սուբյեկտ ասելով հասկանում ենք ազգեր, ազգերի դաշինքներ և որոշակի առաքելությամբ օժտված կերպագային կազմակերպություններ, որոնք ունեն նպատակ և այն իրականացնելու համար կատարում են գործողություններ):

2. Ազգերը ունեն նպատակ, կենսական շահեր կամ իրավունքներ, որոնք նրանք գիտակցում են և ձգտում իրականացնել:

Եվ իսկապես, բոլոր մեծ ու փոքր, հեռու ու մոտիկ սուբյեկտները իրենց շահերից ելնելով, գիտակցված կամ ինքնաբերաբար կատարում են գործողություններ, որոնք կարող են տվյալ ազգի շահերի տեսանկյունից բացասական ազդեցություն ունենալ իրադրության վրա: Կղզիացվածությունը կամ լիակատար մեկուսացվածությունը, այլ ազգային սուբյեկտների

<sup>2</sup> Նման գաղափարների կարելի է հանդիպել Վ.Պողոսյանի և Ա. Սիմոնյանի «Գաղափարախոսությունը և սահմանադրությունը» գրքույկում:

<sup>3</sup> Մոտավորապես նոյն սկզբունքները դրված նաև ՀՀ Անվտանգության նասին օրենքի նախագծում և «Անվտանգության նարմինների նասին» ՇՖ ֆեդերալ օրենքում:

հետ հարաբերությունների (այդ թվում նոցակցության), բացակայությունը կազմատեր անվտանգության պրոբլեմից, որովհետև նման պայմաններում ինչպիսի վտանգավոր զարգացումներ էլ որ լինեն, ազգը, միևնույն է, կմնա որպես այդպիսին և որևէ մեկի համեմատ աննպաստ վիճակում չի կարող հայտնվել: Նրա համար աշխարհը վերջանում է իրենով և անիմաստ դարձնում հենց ազգ հասկացությունն ինքնին:

Եթե համակցության այլ սուբյեկտների հետ ունեցած փոխհարաբերություններում ազգը ենթարկվում է որոշակի ազդեցության, ապա այդ ազդեցության ցանկալի կամ ոչ ցանկալի լինելը նա պետք է դիտի իր ուզածի պրիզմայով: Եթե կամ այդպիսի հարաբերություններ այլ սուբյեկտների հետ, բայց ազգը չունի նպատակ, կամ այն խստ սահմանափակ է, ուրեմն չկա նաև այդ պրիզման, և նա պատրաստ է ընդունելու ցանկացած ազդեցություն, նույնիսկ իրաժարվելու ազգային ինքնատիպությունից և ծովագույն ուրիշներին: Եթե ազգը չի տեսնում զարգացման ազգային ուղի, ապա այդպիսի «ամնապատակ» ազգը չի կարող արտաքին ազդեցությունների մեջ որևէ վտանգ տեսնել, նրան ոչինչ չի կարող սպառնալ: Դա հնարավոր է նաև այն պատճառով, որ արտաքին ազդեցությունների մեջ ազգը տեսնում է իր համար նպաստավոր հեռանկար (նրան նպատակ է առաջարկվում), և այն տեղափորելով ազգային զարգացման նախն իր պատկերացուներում, կատարելագործում է դրանք (ընդունում է իրեն առաջարկված նպատակը):

Բոլոր վտանգները պայմանականորեն կարելի է համարել արտաքին, քանի որ դրանք ծագում են համակցության այլ սուբյեկտների հետ փոխազդեցության ընթացքում: Սակայն, բաժանում կատարելիս ավելի ծիշտ է արտաքին վտանգ համարել այլ սուբյեկտների գործողությունների արդյունքում առաջացողները: Փորձենք ավելի լավ պատկերացնել ազգային նպատակը և հարաբերությունները համակցության այլ սուբյեկտների հետ:

Ազգային նպատակ հասկացությունը առաջին հայացքից իրացիոնալ կամ «կեղծ» կատեգորիա է: Որևէ ժամանակ, որևէ մեկը չի կարող անվիճարկելորեն պնդել, թե ազգային նպատակը այս է և ոչ այլ բան: Ինչը հիմք է տալիս նաև պնդելու հակառակը՝ որ այդպիսի բան ընդհանրապես գոյություն չունի: Միաժամանակ ոչ չի կարող վիճարկել անհատի կամ, ասենք, որևէ կազմակերպության կանոնադրական նպատակի գոյությունը:

Թերևս տեսականորեն կարելի է նաև կազմակերպել հանրաքվեներ ազգային նպատակը որոշելու և հետագայում ժամանակ առ ժամանակ թարմացնելու համար: Սակայն արդյոք այդ դեպքում մենք անառարկելիորեն տրված կունենա՞նք ազգային նպատակի ծշմարիտ սահմանումը: Կատահբար կարելի է պնդել, որ քվեարկված նպատակը էլ ավելի շատ կվիճարկվի, ինչպես որ կարող են վիճարկվել նաև կազմակերպության իրական նպատակների համապատասխանությունը կանոնադրայինին: Ուրեմն, կա՞ իրականում ազգային նպատակ, թե՞ ոչ:

Յարցին պատասխանելու համար նախ պետք է տարբերել հայտարարվող և իրական նպատակները, ապա իրական և գործնական նպատակները, կամ այն նպատակները, որոնց իսկապես հետամուտ ենք մեր ամենօրյա գործողություններով: Յայտարարվող նպատակը այն է, ինչը հայտարարողը ուզում է, որ ուրիշներն ընդունեն որպես իր նպատակ, որը կարող է և չի ամապատասխանել իրականին: Իրական նպատակը, եթե գիտակցվում է որպես իրատեսական, վերածվում է գործնական նպատակի՝ հիմնված դրա իրագործնանը նպաստող նյութական, հոգևոր, կազմակերպչական և այլ ռեսուրսների և գոյություն ունեցող արտաքին ու ներքին սահմանափակումների հաշվարկի վրա: Ազգային նպատակի չգոյության փաստարկներից մեկը հենց հայտարարվող նպատակի իրատեսականությունը օբյեկտիվորեն ապացուցելու անհնարինությունն է, քանի որ դա կարող է անել միայն կյանքը: Թեկուզ ուշացումով, բայց կյանքը դա անում է պատմականորեն մեկնաբանելով գործողությունների մեջ թաքնված նպատակները և գնահատելով դրանց իրագործման արդյունքները:

Դայ հեռուստադիտողը Երևան-Բաքու հեռուստակամուլքի ժամանակ հարց տվեց աղրբեջանական կողմին: «Եթե ասում եք, որ Ղարաբաղը ձերն է, ուրեմն ինչո՞ւ չպաշտպանեցիք»: Այսօր կարելի է նախնական գնահատական տալ, որ աղրբեջանիների կողմից, իրոք, Ղարաբաղը պահպանելու նպատակ գտնել 1992-94թթ. դրված չէր: Սակայն, դատելով նրանց գործողություններից, այդպիսի նպատակ դրված էր մինչև 1992թ. և ռեսուրսների վերահաշվարկն էր (հակառակորդը ավելի հզոր է), որ ստիպեց նրանց վերանայել իրենց նպատակը (զիջել Ղարաբաղը):

Ազգային նպատակը որոշելու համար կարևոր է նաև ժամանակի գործոնը: Ի տարբերություն անհատի, ազգը ավելի տևական երևույթ է և ազգային նպատակները որոշելիս չենք կարող սահմանափակվել մեկ մարդկային կյանքի ժամանակահատվածով: Մարդու, նաև սերմոդի, համար նպա-

տակը չի կարող գոյություն ունենալ առանց իրազործման ժամկետի, իսկ ազգի համար ժամկետներ սահմանելու պարտադրանքը բացակայում է: Ենիշտ է, յուրաքանչյուր պահին «որն է ազգային նպատակը» հարցին պատասխանող տվյալ սերունդն է, սակայն նա հարցին պատասխանում է նկատի ունենալով ազգի հարատևությունը: Յուրաքանչյուր սերունդ իր համար սահմանում է իր պատկերացումները ազգային ձգտումների (ուղղում եմ, որ ազգս լինի) կամ առաքելության (համոզված եմ, որ ազգին տրված է լինելու) մասին՝ հաճախ նույնացնելով դրանք, և որոշում է, թե ինքը ինչ պետք է անի, և ինչ միջոցներով, ինչ է պատրաստ զոհաբերելու հանուն այդ առաքելության իրազործման: Այս իմաստով սերնդի շահերը, այնպես, ինչպես դրանք գիտակցվում են նրա կողմից, կարող են թելադրել որոշակի շեղում նույն այդ սերնդի ազգային նպատակի ընթանումից: Այսինքն՝ յուրաքանչյուր սերունդ «սահմանում է» իր պատկերացրած նպատակը ու երբեմն էլ վերանայում այն, սակայն իրական ազգային նպատակը ենթադրվում է, որ պետք է լինի ավելի մնայուն և վերանայվի իրադրության օբյեկտիվ փոփոխությունների, այլ ոչ թե տվյալ սերնդի սուբյեկտիվ գնահատումների արդյունքում:

Չնայած նրան, որ մենք գործ ունենք ինչպես ռեսուրսների ու սահմանափակումների, այնպես էլ առաքելության և շահի սուբյեկտիվ գնահատումների հետ, դա ոչ միայն չի բացառում, այլև նույնիսկ հաստատում է օբյեկտիվ ազգային նպատակի գոյությունը: Ազգային նպատակը, անկախ իր գիտակցվածությունից կամ ձևակերպվածությունից, օբյեկտիվորեն գոյություն ունի և տվյալ ժամանակաշրջանում ազգային զարգացման ուղղությունը որոշող նշանակետն է:

Լայն իմաստով ազգային նպատակը ազգային գոյության և առաջընթաց զարգացման ապահովումն է: Թե գոյությունը և թե զարգացումը ընկալվում են որպես անքակտելի իրավունք: Նետարար խոսելով ազգային նպատակի մասին՝ պետք է հասկանալ նաև իրավունք:

Մենք նկատի չունենք իրավունքի իրավաբանական իմաստը, որը բացառում է նույն օբյեկտի նկատմամբ տարրեր սուբյեկտների միաժամանակայի իրավունքը: Մեր դեպքում իրավունքները իրենց համար սահմանում են ազգերը, իսկ միջազգային իրավունքի սահմանափակումները դժգոհությամբ ընդունվում են միայն այն դեպքում երբ պարտադրվում են:

1. Ազգային նպատակը կամ իրավունքը սահմանվում է նպատակադր-

ման չորս գործոնների համադրումով.

2. Ազգային առաքելության մասին պատկերացումներ:
3. Ազգային ձգտումների (շահերի) մասին պատկերացումներ:
4. Ազգի հոգևոր և նյութական ներուժի գնահատական տևական ժամանակաշրջանի համար:

Ազգային ներուժի օգտագործման սահմանափակումները տևական ժամանակաշրջանի համար:

Ազգային առաքելությունը (պարտքը մարդկության հանդեպ), ինչպես որ ազգերը այն պատկերացնում են, և ձգտումները հաճախ համընկնում են իրար: Այլ կերպ ասած՝ ազգերը ձգտում են իրենց առաքելությանը: Թեկուզ այն կարող է և վիճարկվել այլ ազգերի կողմից, սակայն ազգից դուրս ազգի համար առաքելություն սահմանող փաստորեն գոյություն չունի: Ազգային ներուժը և նրա կիրառման սահմանափակումները պատասխանում են այն հարցին, թե ազգը ինչ ծավալներով կշարունակի իրականացնել իր առաքելություն-նպատակը: Քանի որ ազգային նպատակը սահմանվում է տևական (անվերջի ձգտող) ժամանակաշրջանի համար, ապա ներուժը հաշվարկվում է նույն տրամաբանությամբ՝ գնահատելով նաև այն աճեցնելու հիմարավորությունը:

Ազգային իրավունքների մասին պատկերացումները ընդհանուր ձևով կարելի է սահմանել որպես ազգային արժեքային համակարգի և հոգևոր-մշակութային ինքնության զարգացող վերարտադրության իրավունք: Ոչ տնտեսական բարգավաճումը և բարեկեցությունը, ոչ երկրի պաշտպանվածությունը, և ոչ էլ այլ խնդիր չի կարող դրվել ազգային նպատակի հիմքում, քանի որ ազգի յուրահատկությունը, որպես համաշխարհային համակցության սուբյեկտ, հենց մշակութային (բարի ամենալայն իմաստով) ինքնության մեջ է կայանում: Ավելին, տնտեսական բարգավաճումը և պաշտպանվածությունը հաճախ կարող են ձեռք բերվել ի հաշիվ ազգային ինքնատիպության կորստի:

Ազգային իրավունքի մասին պատկերացումները կարող են տարբերվել սերնդից սերունդ: Ավելի տևական ժամանակաշրջանի համար սահմանվող ազգային նպատակը պետք է ինտեգրի կամ միջինացնի այդ ժամանակաշրջանի առանձին պահերին ձևավորվող սերունդներից յուրաքանչյուրի նպատակները: Տարակարծություն կարող է լինել նաև յուրաքանչյուր սերնդի ներսում: Նետարար՝ ազգային նպատակը կամ իրավունքը ինտեգրալ կատեգորիա է: Տարբեր ժամանակահատվածներում, ազգի ներ-

քին բոլոր սուբյեկտների կողմից (փաստացիորեն) սահմանված ազգային նպատակների համադրումը, ըստ այդ սուբյեկտների ունեցած ազդեցության չափի, տալիս է իրական ազգային նպատակի հարթությունը:

Ազգային անվտանգության հարցերի քննարկման համատեքստում առավել կիրառական նշանակություն ունի ինչն յուրաքանչյուր սերնդի նպատակը՝ սահմանված առաջիկա ժամանակաշրջանի համար: Ազգային նպատակը այս դեպքում գիտակցվում է որպես հանձնարարական և համադրվում է տվյալ սերնդի շահերի հետ: Այս դեպքում նպատակադրում գործոնները կարելի է ձևակերպել այսպես:

1. Ազգային իրավունքների մասին պատկերացումներ:

2. Ներկա սերնդի շահի մասին պատկերացումներ:

3. Տվյալ ժամանակաշրջանում առկա ռեսուրսների գնահատում:

4. Ռեսուրսների օգտագործման սահմանափակումների գնահատում:

Առաջին գույգը որոշում է սերնդի ծգտումները՝ համադրելով ազգային նպատակ-իրավունքի և սեփական շահի մասին նրա պատկերացումները, իսկ երկրորդ գույգը՝ հնարավորությունները՝ տվյալ պահին առկա ռեսուրսների և սահմանափակումների հարաբերակցությունը: Եթե այս երկրորդ գույգը կարելի է որոշել փաստերի համեմատաբար օբյեկտիվ գնահատմամբ, ապա առաջին գույգը իրենից ներկայացնում է ժողովրդի կարծիք և այդ պատճառով միատարր և հաստատուն չէ: Առաջիկա ժամանակաշրջանում սերնդի շահը ենթակա է ընթացիկ շրջանի դաստիարակչական, քարոզչական ազդեցությունների, կարող է լինել ռեակտիվ մտածողության (եթե սրանից հետո, ապա այդ պատճառով) արդյունք: Ազգային իրավունքների մասին պատկերացումները նույնպես առանձին վերցրած կարծ ժամանակաշրջանի համար, պատճական փուլի ազդեցության տակ, դարձյալ կարող են արձանագրել մեծ շեղումներ: Այս շեղումները կարող են իրենց ազդեցությունն ունենալ նաև որոշ ռեսուրսների ավել կամ պակաս կարևորական, և (կամ) որոշ սահմանափակումների ընդունման կամ անտեսման համար:

ԱՄՆ-ն սեպտեմբեր 11-ից հետո ինքն իրեն շատ արտոնություններ է տվել, որոնք սահմանափակված էին ինչ՝ որ տարուներով, որովհետև դրել է նպատակ, որին հնարավոր չէ հասնել առանց այդ արգելվները շրջանցելու:

1988-ի հայրենասիրական վերելքը կամավորականների ռեսուրսի ի

հայտ գալու պատճառ դարձավ, ինչը և վճռական դեր խաղաց Արցախյան պատերազմում:

«Ազգային իրավունք» համեմատ, սերունդի նպատակի մնացյալ տարրերը հանդես են գալիս որպես յուրօրինակ սահմանափակումներ: Եթե այդ սահմանափակումները մեծ են, ապա սերնդի նպատակը, զարգացման համատեքստում, կարող է սահմանվել որպես հոգևոր-մշակութային ինքնության պահպանություն, իսկ եթե փոքր են, ապա կարող է դրվել հոգևոր-մշակութային ազդեցությունը ընդարձակելու նպատակ: Երկու դեպքում էլ այն սերունդի կողմից ընկալվում է որպես ազգի անքակտելի՝ գոյության և զարգացման իրավունք:

Պետք է նաև նշել, որ սերունդի նպատակը, ինչպես դա գիտակցվում է անհատների կողմից, նրանց համար վերածվում է հանձնարարականի և համադրվում անձնական շահերի հետ:

Քանի որ սերունդի նպատակը սահմանվում է ապագա ժամանակաշրջանի համար, հետևաբար այն որոշողը պետք է մի կողմից գուշակի նպատակադրում վրա ազդող գործոնների դիմանմիկան, մյուս կողմից՝ հաշվի առնի նաև սեփական քարոզչական ազդեցությունը այդ գործոնների ճանաչման վրա: Դրանից հետո ԱԱ յուրաքանչյուր սուբյեկտ սահմանում է ԱԱ տեսականորեն միանգամայն վիճարկելի նպատակը, որի համապատասխանությունը իրականին որոշում է միայն պատմությունը:

Ազգային նպատակի սահմանումից հետո ԱԱ սուբյեկտները պետք է հայտնաբերեն այդ նպատակի իրագործմանը խանգարող (արտաքին) վտանգները: Որտե՞ղ՝ Առանձնացնենք սուբյեկտների փոխհարաբերություններից ծագող վտանգների մի քանի տեսակ:

Առաջին. Որևէ սուբյեկտի համար վտանգը կարող է ծագել, եթե մեկ այլ սուբյեկտի սեփական իրավունքի մասին պատկերացումները մասամբ ծածկում են նույն իր իրավունքների դաշտը: Այս դեպքում երկուստեք ձևավորվում է վտանգ: Այս տարբերակում վտանգի աղբյուր է հանդիսանում «թշնամի» սուբյեկտը:

Դայերը, քրդերը և բուրքերը, իրեամերը և պահեստինցի արարմերը, սերբերը և բալկանյան բրբակեզու ցեղերը նույն շրջանները համարում են իրենց հայրենիքը: ԱՄՆ-ն (կամ Եվրամիությունը) իր տեսակետից արդար և անվտանգ համաշխարհային (տարածաշրջանային) կարգ սահմանելը, ազատության, ընտրական դեմոկրատիայի և տնտեսական ազատականության արժեքների տարածումը ողջ աշխարհում համարում է իր արդար

**իրավունքը և պարտքը, սակայն որոշ ազգեր դրամում տեսնում են իրենց արժեքային համակարգին սպառնացող վտանգ:**

Երկրորդ. Սուրբեկտների միջև առկա հարաբերությունները հավակնուտ չեն և փոխադարձաբար վտանգ չեն ներկայացնում, սակայն արտաքին օբյեկտիվ գործընթացները կամ ներքին ռեսուրսների կրծատումը կարող է սուրբեկտներից մեկին անմրցունակ դարձնել և վտանգել նրա ազգային զարգացումը, դատապարտել հետամնացության մյուսների համենատ: Այս պայմաններում այլ սուրբեկտները վտանգի աղբյուր չեն հանդիսանում, ավելին դրանց պատճառները կարող են միայն ներքին լինել:

Եվրոյի ընդունման արդյունքում, ըստ կամխատեսումների, Եվրոպական տնտեսության աճին զուգահեռ ամերիկյանը լուրջ խնդիրներ կունենա, որը կազդի նրանց քաղաքական կշռի և ազդեցության վրա: Աշխատուժի շարժի համաշխարհայնացման միտումները հետամնացներից դեպի զարգացած երկրներ նպաստում են առաջիններում հետամնացության հավերժացմանը:

Երրորդ. Երբ գործ ունենք անհամենատ հզոր սուրբեկտների հետ (գերտերություններ, վերազգային կազմակերպություններ) հաճախ ականատես ենք լինում «կանոնների սահմանման» երևոյթի: Սա ոչ այլ ինչ է, քան ենթակա կամ ավելի փոքր սուրբեկտների հնարավորությունների սահմանափակում, ինչի հետևանքով նպատակների ամբողջական իրագործումը դառնում է անհնար: Ընդ որում, սահմանված կանոնները կարող են կիրառվել երկակի ստանդարտով, իսկ դրանց չենթարկվելով կարող է հանգեցնել հզոր սուրբեկտի հետ թշնամական հարաբերությունների:

Սահմանների անխախտելիության սկզբունքը է ական սահմանափակում է տարածքային խնդիրներ ունեցող երկրների համար: Մարդու իրավունքների խախտումները, ընտրական դեմոկրատիայի բացակայությունը կարող են հանգեցնել «մեղավոր» երկրների քննադատման, սանկցիաների, մեկուսացման կամ նույնիսկ կառավարող ռեժիմի դեմ գործողությունների:

Չորրորդ. Սուրբեկտներից երկուսի կամ ավելիի շահերը կարող են որոշակի հանգամանքներում ամբողջությամբ կամ նաև համընկնել՝ նույնափակի կամ տարբեր առաջնահերթություններով: Այս դեպքում սուրբեկտների ռեսուրսները կարող են համատեղվել՝ երկուստեք ապահովելով ավելի մեծ արդյունավետություն: Փաստորեն սուրբեկտներից յուրաքանչյուրն իր նպատակը որոշում է նաև դաշնակցի ռեսուրսները հաշվի առնելով: Սա-

կայն, եթե սուրբեկտներից մեկը վերանայի իր նպատակը կամ առաջնահերթությունները նրանում, ի վեհանում մյուսի, ապա վերջինիս համար կարձանագրվի ռեսուրսների վտանգավոր կորուստ:

Դայաստանի դաշնակից ՌԴ ազդեցության աստիճանական թուլացումը կամ այդ ֆոնի վրա քաղաքականության վերանայումը աշխարհում ու տարածաշրջանում և Աղրբեջանի հետ նրա հարաբերությունների ակտիվացումը էապես թուլացնում են Դայաստանի, և ուժեղացնում Աղրբեջանի դաշնակցային ռեսուրսը:

Առանձնահատուվկ ուշադրության է արժանի երկրորդ դեպքը, երբ ռեսուրսների վտանգավոր կորուստ է արձանագրվում ազգի ներքին կազմակերպական հոգևոր- գաղափարախոսական անարդյունավետության և նյութական պաշարների օբյեկտիվ կրծատման պատճառներով: Սա, ինչպես նաև էկոլոգիական կամ տեխնոլոգիական աղետների, բնական կատակլիզմների հետևանքով ազգին սպառնացող վտանգներն իրենց ծագումով ԱԱ խնդիրներ չեն, այսինքն՝ չեն ծագել սուրբեկտների միջև փոխհարաբերություններում, և դառնում են այդպիսին միայն այն պատճառով, որ ազդում են այդ հարաբերությունների վրա՝ փոքրացնելով ազգի ներուժը, նրան դնում են զանազան համակցություններում նրանցիների նկատմանը աննպաստ, իսկ պոտենցիալ դաշնակցների համար անհրապույր պայմաններում:

Մերիիայի անհաջողությունների պատճառ է նաև համարվում Միլոշկչի քաղաքականությունը, որը թուլացրեց երկիրը և անխուսափելի դարձրեց մասնատումը: 1992-94թթ. իրենց անհաջողություններն աղրբեջանցիները հաճախ բացատրում են երկրի ներքաղաքական անկայունությամբ:

Ներքին վտանգները հաճախ ավելի էական են քան արտաքինները: Դրա պատճառն այն է, որ ներքին վտանգները ավելի լուծելի են, քանի որ պահանջում են բացառապես ներքին լուծումներ, հաղթել ներքին թշնամուն: Իսկ արտաքին վտանգների չեզոքացումը հնարավոր է միայն արտաքին թշնամուն հաղթելու դեպքում: Երբ արտաքին թշնամին ուժեղ է, դա հնարավոր է միայն ներքին բոլոր թշնամիներից ազատվելուց, ազգային ողջ ներուժը արդյունավետորեն կազմակերպելուց հետո:

Այս արտաքին և ներքին վտանգների ամբողջությունը հանդիսանում է ԱԱ օբյեկտը:

## Սուրբեկտը

Լայն իմաստով ԱԱ սուրբեկտ է հենց ինքը՝ ազգը: Ազգը, ինչպես և ամեն բան բնության մեջ, պետք է ունենա և ունի ինքնապաշտպանական բնագդ և պետք է մասնակի գոյության կովին՝ պայքարելով աշխարհում ավելի արժանավոր տեղ գրադարձնելու համար: Ազգերը ձգտում են հավերժության, իսկ դրա համար անհրաժեշտ է պահպանել ազգը բնորոշող հոգևոր մշակութային ինքնությունը, ապահովել այն կրող ժողովորդի համար զարգացման պայմանների և կենսական տարածքի անվտանգությունը:

Լինելով բարդ օրգանիզմ՝ ազգը, որպես համակցություն, գործում է իր բազմաթիվ ներքին սուրբեկտներով՝ բազմաբնույթ հաստատություններով (պետություն, նրա որոշակի ինքնուրույնություն ունեցող թերզ՝ բանակ, ֆինանսական ինստիտուտներ, դատական համակարգ և այլն, ոչ պետական ազգային հաստատություններ՝ եկեղեցի, ակադեմիա, արհմիություններ, մանուկի համակարգ, համազգային հասարակական կազմակերպություններ, կրթական համակարգ, ընտանիքի ինստիտուտ և այլն), ինքնակազմակերպված խմբերով (կուսակցություններ, ֆինանսական խմբեր, ոչ համազգային հասարակական կազմակերպություններ, կլանային և հանգագործ խմբեր), ընդհուպ մինչև անհատներով:

Անհատները, որպես ազգային ներքին սուրբեկտ, հանդես են գալիս նաև միջնորդավորված կերպով՝ այնքանով, որքանով նրանք ներկայացված են ԱԱ ինքնակազմակերպված սուրբեկտներում, ինչպիսին հասարակական նպատակների և կամ ֆինանսական շահերի վրա հիմնված կազմակերպություններն ու միություններն են, ինչպես նաև պետությունում, նրա առանձին թերում և ազգային այլ հաստատություններում:

Ինքնակազմակերպված խմբերն, իրենց հերթին, հաճախ հանդես են գալիս միջնորդավորված, ինչպես խորհրդարանական կուսակցություններ՝ կառավարության, ֆինանսական խմբեր՝ ֆինանսական ինստիտուտների, տարբեր հոսանքները՝ հասարակական կառույցների մեջ ներկայացվածության միջոցով: Միջնորդավորված հանդես գալու անհրաժեշտությունը պայմանավորված է ազգ-համակցության ներքին ավելի ազդեցիկ սուրբեկտների միջոցով սեփական առաջարկները ավելի արդյունավետ կերպով անցկացնելու ցանկությամբ, իսկ փոքր, այդ թվում անհատ սուրբեկտների համար դրա գործնական անհնարինությամբ:

Առանձին դեպքերում, երբ ավելի հզր և կազմակերպվածության ավելի բարձր աստիճան ունեցող սուրբեկտը, ինչ-ինչ սահմանափակումների պատճառով կամ արդյունավետության նկատառումներով, չի կարող կամ չի ուզում կատարել որոշ քայլեր, նա դա կոմպենսացնում է՝ օգտագործելով իր ազդեցությունը այլ սուրբեկտների վրա և մղելով նրանց ցանկալի գործողությունների: Այս դեպքում միջնորդավորվածությունը հանդես է գալիս հակադարձ ձևով: Օրինակ, պետությունը՝ անցկացնելու համար ոչ պոպուլյատական ծրագիր, կարող է հայտարարել հակառակ ծրագրի մասին և օգտագործելով իր ազդեցությունը կուսակցությունների վրա՝ առաջացնել ընդդիմադիր շարժում վերջինիս նկատմամբ, հետո «զիշելով» ընդունել իր ուզած ալտերնատիվը: Կամ՝ ֆինանսական խմբերը, ֆինանսավորելով որոշ շարժումներ, իրենց շահերը կարող են ներկայացնել որպես ժողովրդային պահանջ և այլն: Այս օրինակներում կուսակցություններն ու շարժումները բավական ինքնուրույն սուրբեկտներ են, սակայն նրանց որոշումների վրա առկա է այլ, որպես կանոն, ավելի հզր սուրբեկտների ազդեցությունը:

Քանի որ ազգի նպատակները և գործողությունները վերջին հաշվով որոշվում են նրա ներքին սուրբեկտների նպատակներով և գործողություններով, ուստի նեղ իմաստով ԱԱ սուրբեկտներ են ազգ համակցության բոլոր այն ներքին սուրբեկտները, որոնք դերակատարություն ունեն ազգային խնդիրների լուծման գործում, դա ամբողջովին կամ մասամբ իրենց պարտականությունն է, և կամ գիտակցում են ազգային անվտանգության խնդիրը, պատրաստակամ են և ունեն հնարավորություն մասնակցելու դրա լուծմանը: Իհարկե դրանց շարքում առաջինը պետությունն է որպես ազգը ներկայացնող և նրա հիմնական ռեսուրսները տնօրինող գլխավոր հաստատություն, իր պատասխանատվության և գործառությունների ողջ շրջանակով: Սակայն ոչ պակաս կարևորություն ունեն հասարակական-քաղաքական դաշտը, բիզնեսը, մանուլը, եկեղեցին, սփյուռքյան հաստատությունները, բանակը և այլն, որոնք իրենց առջև խնդիրներ կարող են դնել և լուծել նաև առանց պետության: Այլ կերպ ասած, ԱԱ ապահովումը համաժողովրդական գործ է, ուր պետությունը ունի մեծ պատասխանատվություն՝ նաև հասարակական այլ ուժերի ներգրավվածությունը ապահովելու և աշխատանքները համադրելու ինաստով:

Փոքր-ինչ ծայրահեղացնելով հարցը՝ նաև անհատի համար կարող ենք

ճանաչել ԱԱ ապահովելու իրավունք:

Օրենսդրություններում ԱԱ սուբյեկտներ են դիտարկվում լայն իմաստով պետությունը, իսկ նեղ իմաստով այն բոլոր պետական մարմինները, գերատեսչությունները և ծառայությունները, որոնք ունեն համապատասխան պարտավորություններ<sup>4</sup>: Պետությունը ԱԱ միակ սուբյեկտ դիտարկելու կողմնակիցները համարում են, որ այն ազգային մանդատ ունեցող միակ կառույցն է, իսկ ազգի բոլոր մյուս թվարկված ներքին սուբյեկտները այդպիսի մանդատ չունեն: Սակայն անվիճարկելի է, որ ցանկացած հասարակարգում պետության դերը քիչ կամ շատ սահմանափակված է: Սահմանից այն կողմ եղած հատվածը նույնաեւ ազգային է և չի կարող դուրս լինել ազգային վտանգ-հակազդեցություն համակարգից: Միաժամանակ անվիճարկելի է, որ պետության քաղաքականության վրա քաղաքացիները միևնույն ազդեցությունը չունեն, ինչպես որ դա ենթադրվում է սահմանադրությունից: Բիզնեսը, ազդեցիկ քաղաքական գործիչներն ու կառույցները, 4-րդ իշխանությունը, արտաքին ուժերը ավելի ազդեցիկ են, քան չկազմակերպված անհատները: Այդ ազդեցությունը մեր օրերում արտահայտվում է նաև նրանում, որ որոշ կարևորագույն ոլորտներ ուղղակիրեն հանված են պետության վերահսկողությունից և ունեն գաղափարախոսական հիմնավորումներ՝ ժողովրդավարություն, խոսքի ազատություն և տնտեսական ազատականություն:

«Պետությունը - միակ սուբյեկտ» դրույթի կողմնակիցների մյուս փաստարկը հակասություններն են, որ կարող են ծագել նույն ազգի անվտանգության տարբեր սուբյեկտների միջև: Եվ, իսկապես, հակասությունները բացառված չեն: Սակայն պետության ճշմարիտ լինելը նման հակասությունների դեպքում նույնաեւ երաշխավորված չէ: Ավելին, ծայրահեղ դեպքերում պետությունը կարող է և ընդհանրապես զգիտակել անվտանգության պրոբլեմը: Նման դեպքերում կարող է հանդես գալ հասարակական այլ սուբյեկտ՝ հեղափոխական շարժման տեսքով և արմատապես փոխել հենց գլխավոր սուբյեկտը՝ ազգային-պետական համակարգը (այլ ոչ թե գործող կառավարությունը՝ ընտրությունների միջոցով):

ԱԱ տարբեր սուբյեկտների միջև հնարավոր հակասությունները օբյեկտիվ են և անխուսակելի: Միաժամանակ դրանից վախենալ պետք չէ և

անհրաժեշտ է բազմասուբյեկտությունը դիտարկել որպես ազգ միասնական սուբյեկտի դրսնորման միակ և անբողջական ծև, որն ունակ է ապահովելու գարգացում այս հարցում:

Պետք է նաև նկատի ունենալ այն հանգամանքը, որ ԱԱ սուբյեկտները ունեն տարբեր, երբեմն մյուս սուբյեկտներով միշնորդավորված, ազդեցություն ու նաև այլ փոքր սուբյեկտների ճնշելու հնարավորություն: Սա նույնպես մաս է կազմում օբյեկտիվ իրողության: Հակասությունների դեպքում հաղթում է սուբյեկտներից ուժեղների կարծիքը (իհարկե, թեև այդ հաղթանակի արդարացիությունը կարող է պարզել միայն ժամանակը):

Անկախ այն բանից՝ ընդունում ենք բազմասուբյեկտությունը, թե ոչ, ԱԱ ապահովելու ուղղությամբ որևէ սուբյեկտի գործունեությունը ենթադրում է նրա կողմից սահմանված կենսագործունեության պայմանակարգի (ռեժիմի) առկայություն: Միայն անվտանգության ռեժիմում գործունեությունը կազմակերպելու դեպքում է, որ որոշումների կայացման վրա կողմնորոշիչ ազդեցություն են ունենում անվտանգության պահանջները: Այդպիսի պայմանակարգը ենթադրում է համապատասխան օրենքների, ծրագրային միջոցառումների և պայմանակարգի իրականացումն ապահովող ժառայությունների գոյություն: Նման ռեժիմ սահմանելը ԱԱ սուբյեկտները սկսում են սահմանելով ազգային նպատակը, որից հետո միայն կարելի է որոշել, թե ինչ բովանդակություն պետք է ունենա այդ պայմանակարգը:

Դրա համար սուբյեկտը պետք է փոքրի կանխագուշակել կոնկրետ ժամանակահատվածներում ազգային նպատակի և ներկա սերնդի շահերի մասին ժողովորի պատկերացումները: Նաև պետք է ծցտի, թե որ սահմանափակումներն է ճանաչում որպես այդպիսին և իր կարծիքով իր նպատակին հասնելու ինչպիսի ռեսուրսների է տիրապետում ազգը:

Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում տվյալ ազգի՝ արդեն ձևավորված իրական և գործնական նպատակը որոշելիս գործ ենք ունենում բացառապես սուբյեկտիվ գնահատականների հետ: Այն էլ ավելի սուբյեկտիվ է դաշտանում, երբ միախառնվում է տվյալ սուբյեկտի շահերի հետ: Սուբյեկտիվ է նաև պետության սահմանած նպատակը: Պետական ծառայողներն ու նրանց վրա ազդեցություն ունեցողները, ուժային ու ֆինանսական ռեսուրսները տնօրինողներն են թելադրում այդ սուբյեկտիվությունը: Ընդունում պետության, այսինքն՝ ընտրողների, կողմից նպատակի որոշում ասելով, երբեք նկատի չունենք քվեարկության մեխանիզմ: Ընտրողների՝

<sup>4</sup> «Անվտանգության մասին» ՀՀ օրենքի նախագծում արգելվում է օրենքով չնախատեսված անվտանգության ապահովման մարմինների ստեղծումը:

որպես ազգ համակցության բավական քոյլ սուրյեկտների պատկերացումները խնդրի շուրջ քարոզական արդյունք կարող են լինել միայն: Նրանք ուղղակիորեն չեն կարող որոշել ազգային նպատակը, այն էլ ապագա ինչ-որ ժամանակաշրջանի համար:

Ապագա ժամանակաշրջանի համար ազգի կամ սերնդի նպատակը կարող է որոշվել միայն մասնագիտական աշխատանքի արդյունքում: Ավելին, պետությունը նաև իր կողմից սահմանված ԱԱ համակարգը՝ նրա գործադրող կառույցը ղեկավարողն է, հետևաբար նպատակը սահմանելիս նաև պարտավոր է հաշվի առնել իր գործունեության քարոզության, սերնդի դաստիարակության և մթնոլորտի փոփոխության արդյունքում ազգի՝ իր նպատակների մասին պատկերացումների փոփոխությունը նույնպես: Նմանապես պետք է հաշվի առնվեն նաև ազգ համակցության մյուս սուրյեկտների և օտար սուրյեկտների արտաքին ազդեցությունները:

Բոլոր մյուս սուրյեկտների կողմից նույնպես նպատակի որոշումը մասնագիտական կանխագուշակություն պետք է լինի՝ վերոնշյալ բոլոր գործուների հաշվառումով: Այն հաշվի առնելով նաև սեփական նպատակները սահմանելիս, սուրյեկտները կարող են ստանձնել ԱԱ ապահովելու պատասխանատվություն: Ցանկացած սուրյեկտի կողմից նման պատասխանատվություն ստանձնելու համար բավարար պայմաններն են.

1. ԱԱ ապահովելու գործում պատասխանատվության գգացումը:
2. ԱԱ գոյություն ունեցող համակարգի անկատարության գիտակցումը:
3. ԱԱ համակարգը բարեփոխելու առաջարկ-քայլի կամ ծրագրի առկայությունը:
4. Այդ ծրագրի իրագործման հնարավորության գիտակցումը՝ հիմնված ռեսուրսների և սահմանափակումների հաշվարկի վրա:

Վերոնշյալ պայմանների համադրման դրական արդյունքի դեպքում ազգ համակցության ցանկացած ներքին սուրյեկտ այս կամ այն չափով հանդես է գալիս նաև որպես ԱԱ սուրյեկտ: Եթե ընդունում ենք, որ սուրյեկտները կարող են շատ լինել, ապա ԱԱ համակարգը բոլոր սուրյեկտների կողմից սահմանված պայմանակարգերի, այն ապահովող կառույցների ամբողջությունն է:

Քանի որ ազգ-համակցության անհատ սուրյեկտների համար գուտ տեսական է որպես ԱԱ ինքնուրույն սուրյեկտ հանդես գալու հավանականությունը, իսկ հանդես գալու դեպքում էլ դա դրսևորվում է այլ անհատների

հետ ինքնակազմակերպված խմբերում միավորվելու միջոցով, ապա ներ իմաստով անհատներին կարելի է և չդիտարկել որպես ԱԱ համակարգի սուրյեկտ:

Ինքնակազմակերպված խմբերն ել, եթե նրանց նպատակը ԱԱ գործող համակարգը արմատապես (հեղափոխություն) փոխելը չէ, ապա որպես ԱԱ սուրյեկտ նրանց գործողությունները ուղղված են պետության և այլ հաստատություն-սուրյեկտների կողմից իրենց «բարեփոխման առաջարկությունները» ընդունելուն: Այս իմաստով նաև ինքնակազմակերպված խմբերը կարելի է չդիտարկել որպես ԱԱ համակարգի սուրյեկտ:

Ավելին, ինքնակազմակերպվող սուրյեկտները կազմակերպվում են հենց այնպիսի սկզբունքով, որպեսզի ներկայացվեն այս կամ այն ոլորտում: Դա, իհարկե, ակնհայտ է կուսակցություններ-կառավարություն դեպքում, իսկ օրինակ Եկեղեցին, երբ նա գերակշռող է տվյալ ազգի համար, փորձում է թաքցնել իր ներքին խնդրումները: Բիզնեսի և ֆինանսների ոլորտում թեև օլիգարխիական կամ պակաս ազդեցիկ խմբերը ավելի հեշտ են ճանաչվում, ապա հենց իրենք՝ բիզնեսը և ֆինանսական համակարգը դժվար են ընկալվում որպես հաստատություններ: Որպես ինքնուրույն հաստատություններ նաև կարող են վիճարկվել բանակը կամ ոստիկանությունը, քանի որ նրանք պետության անբաժանելի մասն են, ազգային հասարակական կազմակերպությունները (քանի որ ըստ իրավական կարգավիճակի նրանք կամավոր միություններ են) և այլն:

Բաժանելով ինքնակազմակերպվող խմբերը և ազգային հաստատությունները միմյանցից, իսկ վերջիններս դնելով պետության կողքին, հիմքում դնում ենք հետևյալ հատկանիշները:

Ազգ համակցության հաստատություն կամ համակարգային սուրյեկտները այն կազմակերպված սուրյեկտներն են, որոնք ընկալվում են անհատների կողմից որպես տևական ժամանակաշրջանի համար օբյեկտիվորեն գոյություն ունեցող, համեմատաբար հաստատում հասարակական կառույցներ կամ ինստիտուտներ, բնութագրվում են իրենց որակական ու քանակական հատկանիշներով, նաև իրենց ամբողջությամբ են փոխադրեցության մեջ մտնում պետության և այլ ազգային հաստատությունների հետ և ենթադրում են իրենց ներսում ենթասուրյեկտների շահերի, կարծիքների ու ինքնուրույն գործողությունների առկայություն, այդ թվում հաստատության կամ համակարգի՝ որպես ամբողջական սուրյեկտի,

նպատակի և քայլերի վրա ազդող:

Ինքնակազմակերպված սուբյեկտները ունեն ավելի հստակ նպատակ-ներ կամ շահեր, և ունեն այնքան կյանք, որքան որ առկա են այդ ընդհանուր նպատակները: Բացի բուն նպատակից, ինքնակազմակերպված սուբյեկտները ունեն տակտիկական նպատակ՝ մեծացնել սեփական ազդեցությունը այն համակարգում կամ հաստատությունում, հատկապես որում գործելու համար էլ սուբյեկտը ինքնակազմակերպվել է: Հաճախ ինքնուրույն ծևավորվելով, ժամանակի ընթացքում սուբյեկտները հասնում են այնպիսի ազդեցության, որ վերածվում են հաստատության:

ԽՄԿ-ն ծևավորվելով որպես գաղափարակիցների կուսակցություն, միակուսակցական համակարգի հաստատումով վերածվեց մի համակարգային սուբյեկտի, որի մեջ անհատները կամ նրանց թիմերը ձգտում էին մեծացնել իրենց ազդեցությունը՝ ունենալով անհատական կամ խմբակային շահեր: Փաստորեն խորհրդային բազմակուսակցականությունը սահմանափակ ծևով գործում էր միակ կուսակցության մեջ: Բազմակուսակցական համակարգերը նույնպես հանդես են գալիս, որպես հաստատություն: Դեմոկրատներն ու Շանրապետականները ԱՍՄ-ում, ԽՄԿ-ի պես, վաղուց վերածվել են հաստատությունների, որոնք քաղաքական նպատակներ ունեցող խմբերի կողմից ընկալվում են որպես գործունեության դաշտ, որը նրանք պետք է նվազեն:

Դայաստամում (նաև նոր ընտրական համակարգերի մեջ մասում) դեռևս քաղաքական դաշտը, որպես հաստատություն, կազմակերպված չէ: Դեռ չկա երկու-երեք կուսակցություններից բաղկացած բազմակուսակցական համակարգ, և բոլոր կուսակցությունները ինքնակազմակերպված, հետևաբար խիստ ժամանակավոր, ծրագրային նպատակները հաճախ փոփոխող, անհատների կարիքիստական և խմբակային-ֆինանսական շահերի շուրջ համախմբված սուբյեկտներ են: Միաժամանակ դա չի նշանակում, որ չկա քաղաքական համակարգ: Այն կարելի է բնորոշել որպես սահմանափակ միարեն՝ երբ բոլոր ինքնակազմակերպված սուբյեկտները դասակարգվում են ըստ այդ բներին մոտիվության:

Նույնպես նաև բիզնեսում: Առանձին ընկերությունները ծևավորվում են որպես ինքնակազմակերպվող սուբյեկտներ, սակայն հարստանալով և ուժեղանալով, միավորվելով այլ ազդեցիկ սուբյեկտների հետ, աներևույթ համաձայնություն են կայացնում՝ սահմանելով խաղի մնայուն կանոններ

իրենց համար և սահմանափակելով նորեկների մուտքը, վերածվում են ազգային բոլոր հարցերում մեծ ազդեցության ունեցող համակարգային սուբյեկտի:

Բանակը և ոստիկանությունը մեր բոլորի պատկերացումներում պետքությանը կից ամրողական օրգանիզմներ են, որոնցում պետք է բացառվեն ներքին ինքնուրույն կազմակերպված սուբյեկտները: Սակայն զալտնիք չէ, որ բազմաթիվ երկրներում բանակայինների և այլ ուժայինների տրամադրություններն են որոշում քաղաքական ուժերի հաջողությունները, և հաղթում են նրանք, ովքեր վերահսկում են ուժայիններին: Բանակը և ոստիկանությունը հազվադեպ են մասնակցում ազգային որոշումների կայացմանը, սակայն երբ մասնակցում են, այդ մասնակցությունը լինում է վճռորոշ:

Ի տարրերություն բանակի, կրթական համակարգի ազդեցությունը պակելի պասիվ է, քանի որ նախ՝ այն չունի կուր կազմակերպական կառույց, բայց նաև այն պատճառով, որ սովորաբար ինքը գտնվում է այլ սուբյեկտների բավական մեծ ազդեցության տակ: Սակայն նոր սերնդի դաստիարակության և մտավոր զարգացման վրա ունեցած մեծ և անընդհատ ազդեցության պատճառով այն թերևս պետք է դիտարկել որպես ԱԱ համակարգի խիստ կարևոր սուբյեկտ:

Դաստիարակություն սուբյեկտների շարքում ամենապարադոքսալը, թերևս, ընտանիքի ազգային հաստատությունն է: Ընտանիք ասելով տվյալ դեպքում նկատի ունենք ընտանիքի կայացած ավանդույթը՝ իր պատասխանատվության նորմերով, օրենքներով և ներքին ու հասարակական արգելքներով: Ազգային բոլոր ընտանիքները ունեն իրենց հավաքական շահերը, իսկ նրանց անկազմակերպ, բայց նույնարովանդակ գործողությունները ունենում են իրենց մեծ ազդեցությունների հնչանակ այլ հաստատությունների, այնպես էլ ազգային որոշումների կայացման գործում:

Դանդիսանու՞մ են արդյոք այս բոլոր հաստատությունները անպայմանորեն և նշտապես նաև ԱԱ սուբյեկտներ: Թերևս ոչ: Սակայն բոլոր նրանք այս կամ այն չափով ազդում են ազգային բոլոր որոշումների վրա, նրանց գործողություններով է մեծապես պայմանավորված ազգային զարգացումը: Այդ գործողությունները ԱԱ պահովման տեսակետից կարելի է գնահատել դրական կամ բացասական, սակայն նույնիսկ դրանցից դրականները կարող են իրականանալ ոչ անպայման այն պատճառով, որ տվյալ

հաստատությունները հանդես են եկել որպես ԱԱ սուբյեկտ: Հաստատ է միայն այն, որ այս հաստատությունները ազգ համակցության ներքին սուբյեկտներ են: Իսկ նրանց ներգրավվածությունը ԱԱ համակարգում կախված է թե իրենց և թե այլ հաստատությունների, առաջին հերթին պետության, վարչագծից:

Այս հաստատությունները ունեն կազմակերպվածության տարրեր աստիճաններ: Բանակը, որպես կազմակերպվածության ամենաբարձր աստիճան ունեցող կառույցի օրինակ, եապես գերազանցում է, ասենք, ֆինանսական համակարգին և բիզնեսին, նրանց գիշում է, ասենք, մամուլը, իսկ ընտանիքի ինստիտուտը կազմակերպվածության նշույլ անգամ չունի: Կազմակերպվածության աստիճանը, որպես ԱԱ ապահովելու պատասխանատվություն ստանձնելու համար անհրաժեշտ ռեսուրս, շատ կարևոր է: Չկազմակերպված, այսինքն՝ ապակենտրոն, հաստատությունները ունակ չեն ինքնուրույն ներգրավվել ԱԱ համակարգում որպես ակտիվ տարր: Նրանց այնտեղ կարող են ներգրավվել ավելի կենտրոնաձիգ կազմակերպված, այսինքն հիմնականում պետական հաստատությունները: Չներգրավվելու դեպքում ԱԱ համակարգը չի լինի ամբողջական, որոշակի ոլորտներ դուրս կմնան այդ համակարգի կողմից սահմանված պայմանակարգից: Անվտանգության համեմատաբար փոքր խնդիրներ ունեցող երկրների համար դա մեծ վտանգ չի ներկայացնում, սակայն անթույլատրելի շռայլություն կարող է համարվել Յայաստանի պես բարդ իրադրության մեջ գտնվող երկրների համար:

Դրեական գործարար և ֆինանսական շրջանակները ողջ աշխարհով ներգրավվեցին Խրայելի պետության ստեղծման և կայացման գործում: Ամերիկյան մամուլը սեպտեմբեր 11-ից հետո ըմբռնումով մոտեցավ անվտանգության պահանջներին և երկար ժամանակ գոյություն ուներ հարցերի որոշակի շրջանակ, որտեղ խոսքի ազատությունը չէր գործում:

Այսպիսով, լայն իմաստով ԱԱ սուբյեկտ է ողջ ազգը իր բոլոր ներքին սուբյեկտներով, սակայն դրանցից իմնականները ազգային այն հաստատություններն են, որոնք ներգրավված են ԱԱ համակարգում: Ընդ որում, անվտանգության խնդրի բարդությունից կախված, ցանկալի է բոլոր հաստատությունների ներգրավվածությունը ԱԱ համակարգում:

## Փիլիսոփայությունը եվ հայեցակարգը

Հայեցակարգը ԱԱ ապահովմանն ուղղված քաղաքական ռազմավարության հիմքում դրված հայացքների, գաղափարների և սկզբունքների ամրողությունն է: Ազգային առաքելության, զարգացման ուղու և նպատակի սահմանումից է անմիջականորեն բխում ԱԱ հայեցակարգի բովանդակությունը, նրա հիմքում դրված փիլիսոփայությունը: Այն նաև հիմնված է տիրապետող աշխարհայացքի, ազգային զարգացման փուլի և հետագա զարգացմանը սպառնացող Վտանգմերի մասին պատկերացումների վրա:

Ազգերը իրենց զարգացման ճանապարհին ենթարկվելով արտաքին աշխարհի, այլ ազգերի ազդեցությանը, զնահատում են դրանք իրենց զարգացման տեսանկյունից: Ժամանակի ընթացքում այս արտաքին փոխազդեցություններում փոփոխության է ենթարկվում ազգային ինքնատիպ կենսաձևը, որը կարող է ընկալվել որպես սպառնալիք, կամ ընդհակառակը, զարգացման համար կարևոր, ազգայինը հարստացնող քաղադրիչ: Երբ այդ փոփոխությունների էռթյունը, դրանց պարտադրման ձևը և տեմպերը անընդունելի են և զնահատվում են որպես ազգային զարգացման ու մշակութային ինքնատիպության պահպանման սպառնալիք, կարող է գործել ազգի բնագդային ինքնապաշտպանական համակարգը և նպատակադրել ազգային հաստատություններին պայքարելու այդ Վտանգմերի դեմ:

Այդ բնագդային դրսերումը անմիջականորեն կապված է զարգացման պահպանի կամ իրավունքի հետ: Յարագատ կենսաձևը և հոգևոր-մշակութային (ամենալայն իմաստով) միջավայրը անպայմանորեն ապահովում են առաջընթաց զարգացում: Ինչպես որ փորձառու դերձակը չի կարող հաղթել կոչկարուներին կոչիկ կարելու մրցություն, այնպես էլ ազգերը իրենց հոգեհարազատ լեզուն, կրոնը, պետական ձևը, ընտանիքի ինստիտուտը, արժեքային համակարգը օտարով փոխելու դեպքում չեն կարող ապահովել այդ նույն օտարի հետ հավասար զարգացում: Պատահական չէ, որ երբեմն խոսում են ազգային բնավորությանը հատուկ կառավարման համակարգի և հասարակական կարգի, ազգային մասնագիտացումների և յուրահատուկ պահանջնունքների մասին: Յետևաբար ազգային-մշակութային ինքնուրթյան վերարտադրությունն է որոշում ազգի զարգացման ուղին և տեմպերը:

Այստեղ պետք է նկատել, որ անհատները օտար միջավայրում հաճախ հասնում են շատ ավելի լավ արդյունքների անհատական զարգացման, մասնագիտական կամ գործարար առաջնադաշտական հարցում: Սակայն այս փաստարկը չի կարող դիտարկվել որպես նախորդ պարբերության գաղափարի հերթում, քանի որ անհատի և ազգի զարգացումը միանգամայն տարբեր բաներ են: Այդպիսի անհատները օտար միջավայրում լուծում են վերապելու ու ինքնահաստատվելու խնդիր և դրսկորում են կամային հատկանիշներ այն լուծելու համար, իսկ մինչ այդ նրանք իրենց նոր հայրենակիցներից ավելի խնայողաբար են վերաբերվում սեփական պահանջնունքներին, հրաժարվում են հանգստից և վայելքներից:

Ազգային հատկանիշների կորուստը, տեղական լեզվի և բարբերի ընդունումը օտար միջավայրում անհատապես զարգանալու նախապայման է: Օտար լեզվի և բարբերի ընդունումը ողջ ազգի կողմից սեփական հայրենիքում միշտ պարտադրված քայլ է թուլության պատճառով, և իր հերթին պատճառ է հետագա թուլացման համար: Այն գավառականություն է հիշեցնում:

Եթե փորձենք լայն ձևով ձևակերպել ազգային նպատակը բոլոր ազգերի համար, ապա հենց զարգացման ճգոտումը և դրա համար նպաստավոր ազգային ինքնատիպությունը կարելի է ընդունել որպես այդպիսին: Ավելի ճիշտ՝ ազգային նպատակը հոգևոր-մշակութային ինքնության զարգացող վերարտադրությունն է:

Մարդկության պատմությունը կարելի է ներկայացնել որպես մշակույթների և կենսաձևերի պայքարի պատմություն, ուր փորձություն են բռնում դրանցից կենսունակները<sup>5</sup>: Հոգևոր-մշակութային ինքնության կտրուկ կորուստը վերարտադրության պրոցեսում ազգի համար նշանակում է օտար մշակույթի էքսպանսիա և աստիճանական ծուլում: Այդպիսի ազգերը չեն կարող դիմանալ մրցակցության այլ ձևերի նույնպես, չեն կարող լինել անկախ կամ բարգավաճ: Եվ հակառակը՝ հզոր և բարեկեցիկ ազգերը ոչ միայն վերարտադրություն են իրենց ինքնությունը, այլև պարտադրություն են իրենց հոգևոր-մշակութային արժեքները «պարտվող» ազգերին, հիմքեր ստեղծելով այդ ազգերի նկատմամբ ապագայում, մյուս բնագավառներում ևս, հաղթանակներ տանելու համար:

<sup>5</sup> Տես՝ Վահրապյան Վ.Գ., «Ազգային գաղափարախոսության հարցի առնչությամբ կամ ի՞նչ ամել»:

Կենսունակ նշակույթը չի նշանակում ավելի բարձր մշակույթ: «Բարձր» մշակույթի առկայությունն էլ չի ապահովագրում նրա կորստից: Ազգային զարգացման, այսինքն՝ մշակութային ինքնության այսպես կոչված ընդլայնված վերարտադրության համար անհրաժեշտ նախադրյալներն են.

1. Ազգային հոգևոր-մշակութային օջախի՝ հայրենիքի (պատմությունը կրող և կեցաղային առանձնահատկությունները թելադրող կենսատարածքի) առկայությունը:

2. Օջախում մշակույթը կրող ժողովրդի այնպիսի քանակի, գիտակցության և կազմակերպվածության առկայություն, որի դեպքում ներքին շփումների և փոխազդեցությունների բաժինը գերազանցում է արտաքին շփումներին և ազդեցություններին:

3.Մշակույթի արդիականացման և այլոց շահեկանորեն ներկայացնելու նախադրյալների առկայությունը:

Դայրենիքի բացակայությունը չի կարող լրացվել գաղութային կյանքով, քանի որ մշակույթի վրա միջավայրի ազդեցությունը մեծ է, թեև գաղութները ընդունակ են որոշ ժամանակ պահպանել մշակույթը:

Արեւստականորեն կարելի է փոքրաքանակ ժողովրդին մեկուսացնելով ստեղծել այնպիսի վիճակ, որպեսզի ներքին փոխազդեցությունները գերազանցեն արտաքին ազդեցություններին, սակայն այս դեպքում, նախ, չի լուծվի արդիականացման խնդիրը, քանի որ փոխազդեցությունները զարգացում են ապահովում և ազգերի գործակցությունը այդ զարգացումը ապահովող համաշխարհային միտուն է, և ապա հնարավոր չի լինի ներկայացնել մշակույթը, ինչը զարգացումը խթանող պահանջ է: Բացի այդ, հավերժ մեկուսացնել անհնար է և ապամեկուսացումը տվյալ մշակույթի համար կարող է կործանարար հետևանքներ ունենալ՝ նա չի դիմանա արտաքին ազդեցության մեծ չափերին:

Ազգային զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների առկայությունից որոշվում է ԱԱ խնդիրի տարողությունը: Եթե դրանք բավարար չափով առկա չեն կամ մասնակի կորստի վտանգ կա, պետք է որդեգրվի ԱԱ այնպիսի հայեցակարգ, որը հնարավորություն կտա եղածը պահել և պակասը վերականգնել: Դրանց առկայության և կորստի վտանգի անհավանականության դեպքում, երբ նախադրյալներ են ստեղծվում մշակութային ազդեցությունը տարածելու համար, ԱԱ հայեցակարգն էլ պետք է լինի այնպիսին, որպեսզի սպասարկի այդ տարածումը:

**ԱՄՆ-Ն և Եվրոպան իրենց ողջ արտաքին քաղաքականությունը կառուցում են սեփական կենսաձևի արտահաննան խնդիրը լուծելու համար:** Ուստաստանը չի կարողանում պահպանել խորհրդային ժառանգությունը, որովհետև ինքն էլ է հրաժարվել այն կենսաձևից, որը ԽՍՀՄ-ը փորձում էր արտահանել: Մահմեդական աշխարհը, որ ժամանակին ձևավորվել էր մշակութային արտահաննան ռազմական-կայսերական մեթոդներով, այսօր, ունենալով շատ ավելի սահմանափակ հնարավորություններ, փորձում է մեկուսանալ աշխարհից՝ ազատվելու համար արևմտյան արժեքների էքսպանսիայից:

Թե առաջին, թե երկրորդ դեպքում ԱԱ հայեցակարգը հնարավոր է ներկայացնել որպես ազգային զարգացման հեռանկարային ծրագիր կամ դրա մի մաս: Եվ դա իսկապես այդպես է: Սակայն չի կարելի դա ներկայացնել պարզապես որպես տնտեսական զարգացում կամ ժողովրդի կենսամակարդակի աճ: Այս դեպքում շատ ավելի կարևոր է զարգացման հենց ազգային կոնպոնենտը, որը բնորոշվում է հոգևոր մշակութային արժեքներով: Տնտեսական հարաբերական զարգացումը հնարավոր է նաև առանց և նույնիսկ ի հաշիվ ազգային զարգացման, հատկապես եթե խոսքը տնտեսապես հետամնաց երկրի մասին է: Սակայն նույն տնտեսական մրցապայքարում այլ ազգերի հաղթել հնարավոր է միայն հոգևոր-քարոյական զարգացման, և միայն որպես դրա անխուսափելի հետևանք՝ տնտեսական զարգացման պայմաններում:

Ազգերը պայքարում են հարևան և մրցակից այլ ազգերի համեմատ զարգացման ավելի մեծ տեմպեր արձանագրելու համար: Ազդեցության ընդարձակումը մեծապես ծառայում է այս նպատակին, քանի որ զարգացումը ունի ոչ միայն ներքին, այլ նաև արտաքին՝ այլոց հաշվին, դրսևորում:

Գաղութատիրության ծավալման արդյունքում առաջացան բազմաթիվ անգոլեզու, իսպանալեզու, ֆրանկոլեզու երկրներ և ազգեր, որոնք այս կամ այն չափով մայր երկրների մշակույթի կրողներն են դարձել և այդ տեսակետից շատ հարմար են որպես նրանց կողմից առաջնորդվող ընդհանուր դաշինքի և շուկայի մասնակից: Դետաքրքրական է, որ ոչ ազգային պետությունները իրենց առաքելությունը նույնպես ձևակերպում են, թեկուզ գաղափարախոսական, բայց նույնպես որպես հոգևոր-մշակութային ազդեցության ընդարձակում. ԽՍՀՄ-ի կոմունիզմը, ԱՄՆ-ի ազատու-

**թյունն ու ամերիկյան կենսաձևը և այլն:**

Եթե նման ընդարձակումը տեղի է ունենում այլ ազգերի սահմանափակման հաշվին, ապա ծագում է հակառակ խնդիրը՝ փրկել, պահպանել ու մրցումակ դարձնել ազգային ինքնատիպությունը և այն կրող ազգը: Իհարկե, այս խնդիրը տարբեր սրությամբ է դրված թանգարանային նմուշների վերածված հնդկացիների, Ուստաստանում ծուլվող, բայց իրենց հայրենիքում ինչ որ չափով ինքնավար ժողովուրդների, կամ զարգացող (երկրների) բազմաթիվ ազգերի դեպքում:

Այս ազգերի նպատակը առաջին հերթին ազգային իրավունքների պաշտպանությունն է կամ օտարված ազգային իրավունքներին տիրացումը, եթե առկա են դրա հնարավորությունները: Եթե ազգերի զարգացման և ինքնատիպության պահպանման իրավունքը ոչ մեկի կողմից ուղղակիորեն չի վիճարկվում, ապա դրա կոնկրետ դրսևորումները ավելի վիճարկելի են որպես իրավունք, քանի որ զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը հաճախ հնարավոր է լինում միայն ի հաշիվ ուրիշների զարգացումը սահմանափակող գործողությունների:

**Պետրոս Ա-Ա,** դուքս բերելով Ուստաստանը դեպի ծովեր և բացելով «պատուհան» դեպի Եվրոպա, զրադարձ էր զավթումներով, որոնք սակայն անհրաժեշտ էին, այսինքն՝ արդարացվում էին Ուստաստանի առաջնորդացումն ապահովելու իմաստով: Գերմանիան սկսեց երկու համաշխարհային պատերազմ, համարելով, որ ինքը նույնպես իրավունք ունի զաղութներ ունենալու և զարգանալու այլ Եվրոպացիներին հավասար ու հանգստացավ միայն զաղութային համակարգի փլուզումից և երկրորդ աշխարհամարտի ավարտին իր ստարտային պայմանների բարելավումից հետո միայն:

Փաստորեն տեղի է ունենում ազգ-սուրբեկտների պատկերացրած (զարգացման) իրավունքների տիրույթների հատում: Որքան էլ փորձեն կանոնակարգել սուբյեկտների փոխարաբերությունները (միջազգային իրավունքը փորձում է կանոնակարգել պետությունների հարաբերությունները, միաժամանակ ազգերի համար ճանաչելով պետություն ստեղծելու իրավունքը), դրանք, միևնույն է, մնում են մինչև վերջ և մեծամասն չկանոնակարգված: Իրավունքների հարցը բաց մնալով՝ պատճառ է դառնում ազգերի միջև բաքնված կամ անթաքույց պայքարի: Ավելին, հաճախ այդ կանոնակարգումը, կամ գոնե նրա գործադրման առանձին

կոնկրետ դեպքերը, արդյունք են նման պայքարների:

Որպես ընդհանուր նպատակ ունենալով ազգային զարգացումը և ձգտելով այդ ուղղությամբ հասնել առավելագույնին, այսինքն՝ մաքսիմալ գործնական նպատակ սահմանելով, ազգերը զբաղվում են սեփական ռեսուրսների մեծացմամբ: Դեմք այդ ռեսուրսների մեծացումն էլ մի կողմից թույլ է տալիս իրականացնել օրվա նպատակադրումները, իսկ մյուս կողմից՝ սահմանել ավելի մեծ նպատակներ վաղվա համար: Սահմանափակ ազգային նպատակ սահմանելով և պոտենցյալի առավելագույնը մի օր չօգտագործելով, սերունդները ազդում են նաև հաջորդ սերունդների զարգացման տեմպերի վրա:

Ազգային զարգացման վրա ազդող գործոնները բազմազան են: Դրանք իրենց ծագումով կարող են լինել ներքին և արտաքին սուրյեկտների գործողությունների կամ օբյեկտիվ զարգացումների արդյունք: Սակայն դրանցից բացասականներին հակառելը, իսկ դրականները զարգացնելը տեղի է ունենում ազգային ռեսուրսները մեծացնելու (նաև սահմանափակումներից ազատվելու) միակ ճանապարհով:

Եթե ԱԱ հայեցակարգը պատասխանելով «որո՞նք են ազգային իրավունքները» հարցին սահմանում է ազգային նպատակը, ապա պատասխանելով «ինչպե՞ս պետք է իրագործել (տեր կանգնել) այդ իրավունքները» հարցին, ըստ երթյան, ընտրություն է կատարում ռեսուրսների միջև և որոշում ընդունելի սահմանափակումները: Եթե հաշվի առնենք, որ հենց ազգային նպատակի սահմանումը նույնպես մեծապես հիմնված է նրա իրականացման հնարավորությունների վրա, ապա այս երկու հարցադրումները ԱԱ կոնցեպցիայի հիմնական «որո՞նք են ռեսուրսները» հարցի տարրեր մոտեցումներն են միայն:

Քանի որ ազգերը տարբերվում են իրենց չափերով, հատկանիշներով, նրանց սպառնացող վտանգներով և ներուժով, ապա ի սկզբանե գտնվում են անհավասար պայմաններում: Սակայն, քանի որ նրանց միջև պայքարը ընթանում է միայն այն կանոնների սահմաններում, որոնք իրենք են պատրաստ ընդունելու, իսկ մրցավարի պարտականությունները հաճախ կատարում է նրանցից հաղթողը, ապա երբեք չի կարելի պնդել, որ հակամարտող կողմերից մեկը մյուսից միանշանակ ուժեղ է: Ռեսուրսների մեկ տեսակից աղքատ կողմը կարող է կոնդանացնել այն մեկ այլ տեսակով, իսկ պայմանականորեն ասած՝ գումարային աղքատությունը կարող է

կոմպենսացնել սահմանափակումներն ու «կանոններն» անտեսելու ճանապարհով: Այսինքն, ծայրահեղացնելով միտքը, պետք է ասենք, որ ռեսուրսներն իրականում անսահման են, և միայն հասարակության կողմից ընդունված սահմանափակումներն են, որ խոչընդոտում են անսահման պոտենցիալից անհրաժեշտ չափի օգտագործմանը:

Ազգային զարգացումը մեծապես կախված է այն հարցից, թե որքանով է ազգը կարողացնել իրականացնել առկա վտանգներին համարժեք ռեսուրսների հավաքագրում: Եշմարիտ է ԱԱ հայեցակարգի հիմքում դրված այն փիլիսոփայությունը, որը ունակ է ապահովելու վտանգների և ռեսուրսների այդ համարժեքությունը:

## Սկզբունքները

Եթե ԱԱ սուբյեկտ է դիտարկվում միայն պետությունը, իսկ ԱԱ խնդիրը միախառնվում է պետության այլ պատասխանատվությունների հետ, որոնց թվում են իր քաղաքացիների անվտանգությունն ապահովելու և անվտանգության գծով ստանձնած միջազգային պարտավորությունները կատարելու նրա պատասխանատվությունները, ապա անվտանգության ապահովման սկզբունքները բնականորեն պետք է ներառեն այն դրույթները, որոնք տեղ են գտել նաև Հայաստանի անվտանգության նաև օրենքի նախագծում:

- օրինականությունը,
- անձի, հասարակության և պետության անվտանգության հաշվեկշռվածության ապահովումը,
- անձի, հասարակության և պետության փոխադարձ պատասխանատվությունը,
- միջազգային անվտանգության համակարգերի հետ համագործակցությունը:

Օրինականությունը, որպես սկզբունք, ընդհանրական է պետության համար: Սակայն բոլոր երկրները, որոնք քիչ թե շատ ձևավորված գաղտնի ծառայությունների համակարգ ունեն, մշտապես խախտում են սեփական և օտար երկրների օրենքները: Պետական և առևտրական գաղտնիքների գողությունը, մարդկանց առևանգումները և սպանությունները,

չթույլատրված գաղտնալսումները և վարկարեկող նյութերի հավաքը սովորական գործելակերպ է: Այս գործողությունները հաճախ իրականացվում են հատուկ այդ նպատակով ստեղծված մարմինների կամ նրանց ստորաբաժանումների, իսկ երբեմն էլ քողարկվածների կողմից: Սա անհմաստ է դարձնում օրինականության սկզբունքը:

Հաշվեկշռվածության սկզբունքը իր մեջ ակնարկ է պարունակում, որ մի կողմից քաղաքացիների, իսկ մյուս կողմից՝ հասարակության և պետության միջև կարող է շահերի խաչածնում լինել: Այդ դեպքում շահերի մի մասը պետք է զիջվեն: Եթե դա արվում է ազգը ներկայացնողների կողմից, ապա անհասկանալի է, թե ինչու բազմաթիվ քաղաքացիներ պետք է զիջեն մեկին: Այս ձևով սկզբունքի կիրառումը հատուկ է անվտանգության եւկան խնդիրներ չունեցող պետություններին, իսկ եթե կան այդպիսիք, ապա այս հանգանանքը պետությանը կարող է զգալիորեն թուլացնել: Եթե անձերի իրավունքներն են սահմանափակվում, ինչպես հաճախ լինում է, ապա գործ ենք ունենում ԱԱ հարցերի առաջնայնության սկզբունքի հետ, որը միանգամայն հակասում է հավասարակշռության պետական սկզբունքին:

Փոխադարձ պատասխանատվության սկզբունքը ինչ-որ բանով ննան է ստորև ներկայացվելիք այն սկզբունքին, որով սահմանվում է ԱԱ պահովումը որպես հասարակության իրավունք և պարտականություն: Միայն այն տարբերությամբ, որ այստեղ սուբյեկտը միայն պետություն է, իսկ հասարակությունը պարտավոր է ենթարկվել, եթե պահանջվում է: Պատասխանատվության պետության բաժինը, պետք է ենթադրել, անձի անվտանգությունն ապահովելն է:

Միջազգային անվտանգության համակարգերի հետ համագործակցությունը շատ բնական է այն չափով, որ չափ այդ համակարգերը ստեղծված են նաև տվյալ երկրի կողմից, այսինքն՝ դաշինքների դեպքում, քանզի դա ԱԱ բնական մասն է: Սակայն, եթե խոսքը գնում է այլ երկրների կողմից ստեղծված և մյուսներին պարտադրված համակարգերի մասին է, ապա ննան համագործակցությունը կարող է դիտվել որպես պարտադիր պայման, սակայն այդ սկզբունքով ԱԱ չի կարող ապահովվել:

Այսիսով, վերոհիշյալ սկզբունքները չեն կարող լինել ԱԱ ապահովելու կանոններ, նույնիսկ երբ խոսքը միայն պետություն-սուբյեկտի մասին է: Փոխարենը ԱԱ-ն ամբողջությամբ ապահովելու մասին կարելի է խոսել,

երբ պահպանված են հետևյալ սկզբունքները.

**Առաջնայնության սկզբունք** - Անհատական կամ այլ ազգային ենթասուրյանեկտների զարգացումը հարաբերականորեն սահմանափակ է և նրա սահմանները որոշվում են ազգային զարգացման աստիճանով: Մարդիկ դաստիարակվում ու կատարելագործվում են ազգային միջավայրում, գործում և հաջողության են հասնում օգտվելով նրա ընձեռած բազային հնարավորություններից: Այս իմաստով ազգային առաջընթաց զարգացումը շատ ավելի կարևոր է, քան անհատական զարգացումը:

ԱԱ մենք փաստորեն ծևակերպեցինք որպես ազգային զարգացումը ապահովող համակարգ: Յետևաբար ԱԱ պահանջների կատարումը առաջնային չափանիշի են վերածվում հասարակության ողջ կենսագործունեության համար՝ հետին պլան մղելով տնտեսական արդյունավետության, հարմարավետության, արդարության, մարդու իրավունքների, ժողովրդավարության, խմբային և անհատական շահերի, ներքին, բնապահպանական և այլ չափանիշները:

Վերը թվարկվածներից բնապահպանական խնդիրները պետք է դասակարգել գլորալ բնապահպանականի և ազգային բնապահպանականի: Թե բնապահպանական և թե այլ գլորալ խնդիրների հետ կապված նպատակադրումները ազգերը ընդունում են որպես մարդկության ընդհանուր զարգացման նկատմամբ ունեցած պարտը: Կախված պրոբլեմի սրությունից և այդ պարտքի գիտակցությունից, բնապահպանական չափանիշները ունակ են վերածվելու ԱԱ-ն պահանջներից էլ ավելի կարևոր (մարդկության ոչնչացումը կանխելու տիպի) պահանջների: Մյուս կողմից՝ ազգային էկոլոգիական խնդիրները, երբ նրանք գնահատվեն որպես ԱԱ (ռեսուրսները կրծատող տիպի) վտանգներ, ինքնարերաբար վերածվում են ԱԱ պահանջի և ծեռք բերում համապատասխան առաջնահերթություն: Քանի դեռ նրանք, պարունակելով որոշակի վնասներ, առայժմ իրենցից մեծ վտանգ չեն ներկայացնում, ապա նրանց լուծումը կարող է հետաձգվել և այս չափով սերմնի շահը զիջում է ազգային շահին:

Ազգային նպատակներին ինչ-որ իմաստով հակադրվում է տվյալ սերունդի շահը ընդհանրապես և յուրաքանչյուր անհատի շահը մասնավորապես: Կառավարման խնդիրներ լուծելիս, ազգային որոշումներ կայացնելիս այս հակադրությունը հաշվի առնելով է որոշչը: Ազգային նպատակը և ազգային զարգացումը, այնքանով, որքանով կարևորվում են յուրա-

քանչյուր սերնդի կողմից, ընդունվում են որպես պարտք, որպես մյուս սերունդների հանձնարարություն, որպես պապերի կտակ կամ թոռների ապագայի մասին մտածում, հետևաբար՝ առաջնայնություն են ծեռք բերում ընթացիկ շահերի նկատմամբ:

ԱԱ համակարգի առկայությամբ կառավարումը ազգային հաստատությունների համար բաժանվում է երկու առանձին մակարդակների<sup>6</sup>, ընդունում ԱԱ կոնտուրը գերակայում է ընթացիկի նկատմամբ: ԱԱ պահանջների առաջնային լինելը տրամաբանական այլ չափանիշների նկատմամբ արդարացվում է ավելի մեծ չափի կանխման տրամաբանությամբ: Դրանց անտեսումը ազգը վերածում է միայն մեկ քայլ հաշվարկող շախմատիստի:

Առաջնայնության սկզբունքը ունի նաև իր երկրորդ կողմը: ԱԱ-ը հասարակական հարաբերությունների արդի մակարդակում փաստորեն առաջնայնություն ունի մի կողմից անհատական, իսկ մյուս կողմից՝ գլոբալ անվտանգության նկատմամբ: Այս դրույթը խստորեն վիճարկվում է ԱԱ մասին բոլոր պաշտոնական և հրապարակային նյութերում: Միջազգային իրավական նորմերի հիմքում մի կողմից դրված են մարդու իրավունքները, իսկ մյուս կողմից՝ գլոբալացման միտունները առաջին պլան են նշում համամարդկային շահը: Ավելին, ազգային շահերը, ազգայնականություն որակումնով, դիտվում են որպես հակամարտությունների և պատերազմների գլխավոր պատճառ, և գլոբալ քարոզական դաշտում տիրապետում են ազգային շահերը առևտորական շահերով, իսկ սահմանները ինտեգրացիայով փոխարինելու տենտենցները: Ազգային օրենսդրությունները, որպես կանոն, ճգոտում են չհակադրովել այս հիմնադրույթներին և լավագույն դեպքում փորձում են հավասարակշռություն ապահովել քաղաքացու, պետության և միջազգային հանրության շահերի ապահովման գործում:

Սակայն, թե ԽՀ դարի պատմությունը և թե ԽՍՀ դարի իրական միտումների վերլուծությունը ցույց են տալիս, որ ազգերը շարունակում են մնալ համաշխարհային քատերաբենում հիմնական գործող անձինք, իսկ այդ ազգերի, այդ թվում նաև ֆինանսական, շահերը ներկայացնող պետու-

<sup>6</sup> Կառավարման երկու կոնտուրների մասին տես՝ Ի. Բաղրյանի հոդվածներում. “Экономической безопасности” և «Стабильная экономика и национальная безопасность в международном контексте»:

թյուններն իրենց գործողություններում որպես կանոն հաշվի չեն առնում ոչ անհատների և ոչ էլ մարդկության շահերը: Գլոբալացումը այս համատեքստում և իր իրական բովանդակությամբ ոչ այլ ինչ է, քան մեկ ազգային մշակույթի և հոգևոր-արժեքային համակարգի ձգտումը հասնել համաշխարհային տիրապետության: Ինչ վերաբերում է մարդու իրավունքներին, ապա այն մի կողմից, իր սահմանված տեսքով, մաս է կազմում վերոնշյալ արժեքային համակարգին, իսկ մյուս կողմից՝ հիմք է հանդիսանում բաժանելու աշխարհը «լավ» և «վատ» ազգերի, նրանց բարեկամությամբ պարզեցնելու կամ պատժելու համար:

Եթե վերացական ձևով դիտարկենք մարդու, ազգի և մարդկության անվտանգության հաշվեկշիռը, ապա իհարկե, ինչպես մարդու իր անվտանգության խնդիրները լուծելիս պետք է հաշվի առնի ազգային և համամարդկային անվտանգության պահանջները, նույնպես և ազգը պետք է հաշվի առնի անհատականը և համամարդկայինը, իսկ մարդկությունը՝ անհատականը և ազգայինը: Մարդը, թերևս, իր պատասխանատվության գիտակցությանը համապատասխան, այդպես էլ վարվում է: Ազգերը նույնպես նժվար թե գիտակցարար դիմեն քայլերի, որ վտանգի մարդկության ապագան, իսկ մարդկանց որպես կանոն նրանք վտանգում են շատ ուրիշների ավելի մեծ վտանգից ազատելու համար: Թերևս մարդկությունը նույն կերպ պետք է վարվի ազգերի հետ:

Սակայն մարդկությունը, որպես համակեցություն, բացի ազգերից, գոնե այսօր չունի ձևավորված ներքին սուբյեկտներ, իսկ ունեցածներն ել ձևավորված են ազգերի հիմքի վրա: Այդ պատճառով դրանցից ազդեցիկները սեփական շահը որպես մարդկության շահ ներկայացնելու ավելի մեծ հնարավորություն ունեն: Բնականաբար մարդկության շահերի այդպիսի ընկալումը դժվար ընդունելի պետք է լինի մյուս ազգերի համար: Բացի այդ, երկրորդ մարդկության բացակայությունը համամարդկային անվտանգությունը վերածում է խիստ հարաբերական կատեգորիայի՝ սահմանափակելով բնապահպանական, տեխնոլոգիական, համաճարակային կամ նման տիպի աղետներով: Մարդկությանը սպառնացող վտանգները փաստորեն կարող են ծագել միայն բնության հետ նրա ունեցած փոխհարաբերություններում: Բնությունը, որպես «թշնամի» վիճակում է մարդ կենսաբանական տեսակի կենսունակությունը միայն: Այս ամենի մեջ ոչ մի կերպ չեն տեղավորվում, ասենք, ժողովրդավարությանը,

Եկամուտների արդար բաշխմանը կամ սեռերի հավասարությանն ուղղված սպառնալիքները: Այս և նման կատեգորիաները ինքնին վիճարկելի են որպես նպատակ հենց մարդկության համար, և որպես այդպիսին կարող են սահմանվել միայն ազգային չափանիշներին համապատասխան: Դամանարդկային ընդհանուր շահի այս բացակայությունն է, որ պատճառ է հանդիսանում ազգային շահերի գերակայության համար:

Միաժամանակ ազգային շահերը գերակայում են նաև անհատական շահերի նկատմամբ, այն պատճառով, որ յուրաքանչյուր անհատի ազդեցությունը անչափ փոքր է և մոտավորապես հավասար մյուս անհատների ազդեցությանը, ինչի արդյունքում ձևավորվում են ազգային հաստատություններ, այդ թվում՝ պետություններ, որոնք ունակ են ազգային շահը պարտադրել անհատներին: Անհատները չեն կարող ազատվել իրենց ազգային պատկանելությունից, լավագույն դեպքում կարող են փոխել այն, հետևաբար չեն կարող ազատվել պետության և այլ ազգային հաստատությունների՝ իրենց կյանքում ունեցած որոշիչ դերից: Պատահական չէ, որ մարդիկ հաճախ են իրենցից իրենց դժբախտությունների մեղավոր համարում կառավարությանը, հարուստներին, ազգի թշնամիներին, սակայն երբեք ՄԱԿ-ին:

Այսպիսով, որքան էլ հայտարարվեն մարդու և մարդկության շահերի գերակայության մասին, ազգային շահերը դեռ երկար ժամանակ շարունակելու են գերակայել և թելադրել մարդկության զարգացումը: Իսկ անհատի զարգացումը հնարավոր է միայն դիտարկել ազգային զարգացման համատեքստում:

**ԱԱ ապահովության հասարակության իրավունքն է և պարտականությունը** - Այս սկզբունքը պայմանավորված է հասարակության՝ ԱԱ սուբյեկտ լինելու հանգամանքով: Բացի այն, որ այս սկզբունքը նպաստում է ամբողջ ազգի լայն, թեկուզ միջնորդավորված, ներգրավվածությանը ԱԱ խնդիրների լուծմանը, այն նաև փաստորեն յուրաքանչյուրին իրավունք է վերապահում հանդես գալու որպես նեղ իմաստով ԱԱ սուբյեկտ, եթե պահանջվում է գործել անկախ և կատարել քայլեր ԱԱ ապահովելու ուղղությամբ՝ ստանձնելով ողջ պատասխանատվությունը, երբ այդ քայլերը չեն կատարում դրան կոչված այլ կառույցներ:

Դասարակության լայն ներգրավվածությունը նաև ապահովում է ԱԱ համակարգի զարգացումը այն դեպքերում, երբ պետությունը և համա-

կարգին նաև կազմող մյուս հաստատություններն իրենց ներքին կազմակերպական ու գաղափարախոսական կաղապարվածության պատճառներով ունակ չեն լինում համարժեք արձագանքել օրվա մարտահրավերներին:

Դաճախ պետությունները, որպես ազդեցիկ ներազգային սուբյեկտներ, հակված են «ուղղությանը» ԱԱ սուբյեկտի իրավունքը և հաճախ էլ դա նրանց հաջողվում է: Սակայն նույնիսկ պետության ունեցած համեմատաբար մեծ ազդեցության խիստ սահմանափակության, իսկ դուրս մնացած հատվածում ԱԱ համակարգի բացակայության պատճառով, ազգային զարգացմանը վերաբերող բազմաթիվ հարցեր, որպես կառավարման ազգային խնդիր, մնում են չլուծված: Այսինքն, ԱԱ համապարփակ համակարգի բացակայությունը հանգեցնում է նրան, որ ազգային խնդիրները կամ լուծվում են ըստ իներցիայի, կամ արտաքին (ազգայինից դուրս) միջավայրի ազդեցությամբ: Այլ կերպ ասած՝ մենք մեզ չենք կառավարում:

Այս սկզբունքից ածանցվում է փոխադարձ հակողության սկզբունքը: Յուրաքանչյուր մարդ, կազմակերպություն և ազգային հաստատություն իրավունք ունի և պարտավոր է հակել բոլոր մյուսների գործունեությունը՝ ԱԱ շահերին համապատասխանության տեսանկյունից:

**Ամբողջականության սկզբունք –** ԱԱ խնդիրները ամբողջական են, անկախ նրանց դրսևորման բազմաթիվ ձևերից: Գոյություն չունեն առանձին ռազմաքաղաքական, ֆինանսատնտեսական, կրթամշակութային և այլ անվտանգություններ, քանի որ դրանց օբյեկտ վտանգները ինքնուրույն գոյություն չունեն: Եթե փորձենք քննել մեկ, ապա մյուս ոլորտի վտանգները, կտեսնենք, որ դրանց ցանկը բոլոր դեպքերում համընկնում է:

**Արտաքին պարտի վտանգավոր մեծությունը վտանգածին է,** որովհետև երկիրը կախվածության մեջ է գցում պարտատեր ազգերից, կրթամշակութային անկախությունը վտանգաված է, որովհետև նոյն պարտատերը, օգտվելով տնտեսական ծանր վիճակից, սովորական չափորոշիչներն են պարտադրում երկրին, միաժամանակ մեծացնում իրենց ռազմաքաղաքական ներկայությունը, որի հետևանքը երկիրը կարող է կորցնել իր անկախ զարգանալու հնարավորությունն ընդհանրապես: Ամեն դեպքում՝ վտանգն այն ազգը կամ ազգերն են, որոնց համեմատ տվյալ ազգը հետ է մնում իր զարգացմամբ և որոնք իրենց իրավունքն են համարում պարտադրել այն հարցերում, որոնք տվյալ ազգը տեսնում է իր իրավունքների

## ՄԵՏՈՎԵՐՈՒՄ:

Ուսուլսների պակասի կամ այլ պատճառով ԱԱ խնդիրները չի կարելի լուծել մասնակի, առանձին Ենթառողությունների կամ ոլորտների համար: Առանձին օդակներում խնդիրը չլուծելու դեպքում ԱԱ ողջ շղթայում ընդհանուր խնդիրը մնում է չլուծված: Յետևաբար այն չլուծված է մնում նաև առանձին ոլորտների համար: Ուսուլսների պակասը պետք է հանգեցնի իրատեսական նպատակների և ռազմավարական խնդիրների սահմանման, որոնց հնարավոր կլինի համալիր լուծում տալ, կամ պետք է հանգեցնի ռեսուլսների կամ սահմանափակումների վերանայման:

Ամբողջականության սկզբունքը ունի նաև հետևանքային սկզբունք: Այն է Նպատակների նույնության սկզբունքը: Ազգի բոլոր հաստատություններում, որոնք այս կամ այն չափով ներգրավված են ԱԱ համակարգի մեջ, չի կարող լինել հակասություն նպատակադրումների միջև: Ծիշտ է, այդ հաստատությունները, անգամ պետության ճյուղերը, որպես ներազգային սուբյեկտներ, ունեն շատ մեծ ինքնուրույնություն: նաև ավորապես, ինքնուրույն են որոշում ազգային նպատակը, գիտակցում վտանգները և նույնիսկ ինքնուրույն են սահմանում իրենց խնդիրները ԱԱ ապահովելու գործում, սակայն ԱԱ համակարգի գոյությունը պահանջում է, որ որոշվի նույն նպատակը, գիտակցվեն նույն վտանգները և յուրաքանչյուրը ստանձնի լուծվելիք խնդիրների հենց իր բաժինը:

Առաջին հայացքից աներևակայելի է նաև առաջադրանք սահմանելը խիստ ապակենտրոնացված մի համակարգի համար, սակայն այլ կերպ ԱԱ համակարգ պատկերացնելը անհնար է: Միաժամանակ պետք չէ մոռանալ, որ ազգային բոլոր հաստատությունները փոխկապակցված են և գործում են փոխազդեցությունների հզոր դաշտում: Ավելին, ազգային արժեքային համակարգը, որով պայմանավորված են ազգային հաստատությունների բոլոր քայլերը, ձևավորվում է միասնական ինֆորմացիոն միջավայրում: Այս տեսակետից խնդիրը բոլորովին էլ անհրականանալի չէ: Սակայն պետք է հաշվի առնել, որ նաև այս դեպքում կարող է լինել այլակարծություն: Այսինքն, միևնույն ինֆորմացիոն միջավայրում պատկերացվեն երկու կամ երեք համարժեք լուծումներ: Ընդ որում, այս նպատակներից յուրաքանչյուրը կարող է հարազատ լինել որոշակի հաստատությունների համար, որոնցում ավելի վառ են արտահայտված հատվածական շահերը: Այս դեպքում ոչ միայն չի ձևավորվի ազգային ընդհանուր

նպատակ և ծրագիր, այլև կարող են կատարվել հակասական գործողություններ:

**Արտաքին ազդեցությունից անկախության սկզբունքը** - Այս սկզբունքը ամբողջությամբ իրականանալի չէ: Ազգը, որպես ամբողջություն, փոխադարձաբար ազդվում է այլ ազգերից՝ նրանց հետ ունեցած հարաբերությունների ընթացքում: Դա հանդես է գալիս որպես գումար այն ազդեցությունների, որոնց Ենթարկվում են անհատները, նրանց կազմակերպված խնբերը և վերջին հաշվով ազգային բոլոր հաստատությունները: Իսկ անհատները կամ նրանց խմբերը Ենթակա են արտաքին աշխարհի ինֆորմացիոն, տնտեսական և այլ տիպի բազմաթիվ ազդեցությունների: Դրանց արդյունքում փոխվում է մարդկանց նտածողությունը, ազգային ռեսուլսները, ուստի նաև ազգային նպատակի և վտանգների մասին պատերազումները ողջ հասարակության մեջ:

Խոսելով արտաքին ազդեցություններից անկախության մասին, թերևս, պետք է նկատի ունենալ հարաբերական անկախություն: Մասնավորապես, անհատների վրա առկա ազդեցության ֆոնը, օրինակ, պետք է դիտարկել որպես օրվա օբյեկտիվ պայման: Այդ ազդեցությունը բնականորեն փոխանցվում է ԱԱ համակարգի հիմքը կազմող հաստատություններին, այդ թվում պետությանը: Քանի որ նեղ իմաստով հենց ազգային հաստատություններն են կազմում ազգային անվտանգության համակարգի ամբողջությունը, ապա եական են ուղղակիորեն նրանց ուղղված ազդեցությունները: Այդ ազդեցությունները էապես ավելի պակաս օբյեկտիվ են, քանի որ հասարակությունը մշտապես բարեփոխում է ազգային հաստատությունների իր համակարգը: Յետևաբար ցանկացած պահի ազգային անվտանգության համակարգի ձևավորման գործում առկա է շեղման հնարավորություն: Միշտ կարելի է պատկերացնել, որ հնարավոր է գտնել այն երկու ծայրահեղ տարբերակները, որոնցից մեկի դեպքում արտաքին ազդեցությունները (նրանց արդյունավետության գործակիցները) ամենամեծն են, իսկ մյուսի դեպքում ամենափոքը: Հասարակական ընկալման մեջ դրանցից առաջինը կընկալվի որպես արտաքին ազդեցության տակ, իսկ երկրորդը՝ ազդեցություններից անկախ համակարգեր:

Կերպիհյալ սկզբունքները պահպանելու դեպքում միայն կարելի է խոսել ԱԱ համակարգի գոյության մասին և վստահել նրա արդյունավետությանը:

## ԱԱ համակարգը եվ նրա Ներքին դասակարգումը

Խոսելով ազգ համակցության ներքին սուբյեկտների մասին, մենք առանձնացրինք հաստատություն (ինստիտուցիոնալ) սուբյեկտները որպես ԱԱ համակարգի պոտենցիալ սուբյեկտներ: ԱԱ ցանկացած սուբյեկտի, ի մասնավորի պետության և նույնիսկ ինքնակազմակերպվածների, տեսանկյունից ազգային հաստատությունները հանդես են գալիս նաև որպես ԱԱ համակարգի օբյեկտներ, քանի որ անհրաժեշտ է դառնում պատասխանել այն հարցին, թե «ի՞նչ հաստատություններ են անհրաժեշտ և ինչպիսի՞ն պետք է լինի դրանցից յուրաքանչյուրն իր կառուցվածքով»:

Ժամանակի ցանկացած պահին, անկախ այն բանից, թե ինչքանով են ազգային հաստատությունները ներգրավված ԱԱ համակարգում, նրանք որպես համակարգ կան և գործում են: Այլ կերպ ասած ԱԱ համակարգը զնահատելիս մենք պատասխանում ենք այն հարցերին «թե որքանո՞վ է հաստատությունների ազգային համակարգը գործում ԱԱ պայմանակարգում» և «որքանո՞վ է այն իր կառուցվածքով արդյունավետ ԱԱ խնդիրները լուծելու և ազգային հեռանկարային զարգացումը ապահովելու տեսանկյունից»:

Ազգային հաստատությունների համակարգը գործում է որոշակի իներցիայով: Այլ կերպ ասած, եթե մի պահ տեսականորեն ընդունենք, որ բոլոր ազգային վտանգները բացակայում են, ապա ազգային հաստատությունները գործում են իրենց սովորական վիճակում և չեն մտածում ոչ միայն վտանգների այլև ազգային նպատակի և զարգացման ռազմավարության մասին: Զգալով և գիտակցելով վտանգի առկայությունը, ազգային համակարգը, ինքնարերաբար, իր տրամադրության տակ եղած միջոցներով փորձում է հակազդել: Եթե այդ պահին առկա ԱԱ պայմանակարգը հնարավորություն չի տալիս գիտակցելու վտանգը, ապա նրա նասին հայտնի կրաօնա միայն հասցված վնասի ակնառու դառնալուց հետո:

Երբ վտանգը գնահատվում է այնքան մեծ, որ առկա պայմանակարգը և հաստատությունների համակարգի հնարավորությունները բավարար չեն դրան հակազդելու համար, ապա կարող է դրվել ազգային հաստատությունների որակական կատարելագործման հարց, ինչը հնարավորություն կտա հաստատել ԱԱ խնդիրները ողջ տարողությամբ լուծելու նոր պայմա-

նակարգ: Մասնավորապես, պետական անկախության հասնելու դեպքերում, երբ ազգային հիմնական հաստատությունները (ինչպիսիք են պետությունն իր ճյուղերով, ազգային շուկան իր ֆինանսական համակարգով) նոր են ձևավորվում, իսկ մյուսները, օրինակ, կրթական համակարգը, եապես փոփոխություններ են կրում կամ հարմարեցվում են նոր պայմաններին, ինքնարերաբար առաջանում է հաստատությունների համակարգի ԱԱ պահանջներին համապատասխանեցնելու խնդիր: Ազգային հաստատությունների համակարգում գործող պայմանակարգի խստությունը և տարողությունն, իհարկե, կախված է վտանգների ընդհանուր գնահատվող մեծությունից, առաջադրված խնդիրների բարողությունից և զարգացման ռեսուրսների առկայությունից:

Ապակենտրոն և միաժամանակ ամբողջական անվտանգության համակարգը ըստ գործառնական նշանակության կարելի է բաժանել մի քանի մակարդակի:

Վերին մակարդակում պետք է լինեն անվտանգության բաղաքականությունը տնօրինող մարմինը կամ մարմինները, որոնք իրականացնում են ռազմավարական կառավարում: Երբ պետությունը դիտարկվում է որպես ԱԱ պահովող միակ սուբյեկտ, նման մարմին է դիտարկվում ԱԱ խորհուրդը գործադիր իշխանության կազմում, որը գործում է օրենսդիր մարմին զննումած անվտանգության հայեցակարգի հիման վրա: Եթե ուշադրությունը դարձնենք նման խորհուրդների կազմներին, ապա կարելի է նկատել հետևյալ միտումները:

Խորհուրդները լինում են ներկայացուցական: Նրանցում որպես կանոն ներկայացված են լինում պետական մեքենայի քիչ թե շատ ինստիտուցիոնալ ինքնուրույնություն ունեցող ոլորտները, բաղաքական համակարգում զգալի ազդեցության հասած բաղաքական ուժերը:

Հաջորդը, մարմինը հենց խորհուրդ (կոլեգիա) է, այլ ոչ, ասենք, վարչություն կամ նախարարություն, հաճախ խորհրդակցական ձայնով, սակայն կարևորագույն որոշումների կայացման ժամանակ վճռական դեր է խաղում:

Խորհուրդները չունեն իրենց որոշումները գործադրելու իրական լծակներ և նրանց որոշումները գործադրվում են հիմնականում պետության միջոցներով:

Եթե իսկապես ընդունենք, որ պետությունը ԱԱ միակ երաշխավորող

սուբյեկտն է, ապա ազգային օպերատումը ապահովող այս կարևորագույն մարմինը, լինելով պետական, պետք է լիներ առնվազն կառավարության գլխին, կամ վավերացներ նախագահի որոշումները: Նախագահը, միայն այն պատճառով, որ նա ընտրվում և վերընտրվում է, արդեն չի կարող փոխարինել այդ մարմնին, նույնիսկ եթե նրա հետ անընդհատ խորհրդակցի:

**ԽՍԴԱ-ում և ԻԻԴ-ում ԱԱ հիմքում դրված էր/է գաղափարախոսական համակարգ, որը ուներ/ունի իր կրող՝ Այարովաթը և ԽՄԿ-ն: Այս դեպքերում անվտանգության ռազմավարությունը փաստորեն որոշվում է պետությունից դուրս, իսկ ազգային հաստատությունների ազտությունը էապես սահմանափակվում է: ԱԱ-ում ֆինանսական օլիգարխիական խմբերը պետության ողջ ընթացքի գլխավոր թելադրողներն են և այդ պատճառով ապահովվում է ռազմավարական գծի շարունակականությունը:**

Համաձայն օրենսդրության, բոլոր պետությունների կազմում միշտ կան մեկ մարմին (որպես կանոն նախագահը), որին վերագրվում է անվտանգության երաշխավորի պարտականությունը: Անվտանգության խորհուրդները գործում են նրա մանդատով միայն: Խորհուրդների ներկայացուցական բնույթը սակայն հնարավորություն է տալիս ինչ-որ չափով ապահովել պետության ներքին և պետությունից դուրս հաստատությունների ներկայացվածությունը: Դրանով իսկ ԱԱ խորհուրդը վերածվում է ազգային հաստատությունների (որոնք միաժամանակ նաև ԱԱ քիչ թե շատ ինքնուրույն սուբյեկտներ են) գործունեության համադրող կամ համաձայնեցման մարմնի:

Սա միանգամայն համապատասխանում է ապակենտրոն և ամբողջական համակարգի վերին մարմնի պատկերացումներին: ԱԱ բոլոր սուբյեկտներն ինքնուրույն են և գիտակցելով իրենց գործողությունները համադրելու հրամայականը՝ խորհրդակցական մարմնին են ձևավորում, որի որոշումները փաստորեն կարող են ընդունվել միայն ընդհանուր համաձայնությամբ: Սկզբունքային հարցերում նման համաձայնության չկայացումը կարող է հանգեցնել ներազգային պայքարի՝ ավելի ուշ համաձայնության գալու հեռանկարով:

Կարելի է պայմանականորեն ընդունել ԱԱ հարցերում ընդհանուր համաձայնության գալու ավելի բարդ, օրինակ, բազմամարմնին կամ լիազորված մարմնով, համակարգեր, սակայն էությունը կմնա անփոփոխ: Այն է.

ազգային նպատակը, զարգացման հեռանկարային ծրագիր-պատկերացումները և ԱԱ պահանջները ձևակերպվում են ԱԱ սուբյեկտների կողմից և համադրվում մյուս հաստատություն-սուբյեկտների պատկերացումների հետ այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է դրանց վերջնական համաձայնեցման, հայեցակարգի ձևավորման համար: Համաձայնեցման իիման վրա յուրաքանչյուր հաստատություն-սուբյեկտ ընդունում է պատասխանատվության իր չափը կամ հատվածը:

Այս պատճառով անվտանգության համակարգը չի կարելի պատկերացնել որպես բուրգ, որի գագաթին կանգնած է մի կանոնակարգված մարմին՝ իր որոշումներն ընդունելու և դրանք պարտադրելու մեխանիզմներով: Նման մարմին առանձնացնելը ընդհանրապես սխալ է, քանի որ այն իրենից ներկայացնում է միայն համաձայնեցման մեխանիզմ:

Որպես մարմին, ԱԱ խորհուրդը (այս իմաստով չեն բացառվում մեկից ավելի խորհուրդների առկայությունը) գրաֆիկորեն պետք է պատկերացնել համակարգային բուրգի հարթությունից դուրս: Որպես համաձայնեցման մեխանիզմ այն կարելի է նաև պատկերացնել որպես սուբյեկտները միմյանց կապող երկողմանի սլաքներ: Եթե խորհուրդը առանձնացնում ենք որպես մարմին, դրանով ընդամենը միջնորդավորում ենք այդ կապերը:

Եթե ԱԱ սուբյեկտ սահմանում ենք միայն պետությունը, ապա վարչական բուրգը ակնհայտ է դառնում: Այս դեպքում ԱԱ խորհուրդը բուրգի բարձրագույն մարմնին կից խորհրդակցական մարմին է և այն դաշտն է, որտեղ համաձայնություն է կայացվում պետության մեջ ազդեցիկ ենթասուբյեկտների միջև:

Երկու դեպքում էլ անվտանգության քաղաքականությունը տնօրինում է ոչ թե ԱԱ խորհուրդը, այլ սուբյեկտների (կամ պետության) դեկավար մարմինները (պետության դեպքում նախագահը):

Ինչպես նշել ենք, ազգային նպատակի սահմանումից սկսած հայեցակարգը կարիք ունի մասնագիտական կանխագուշակումների և նախագծային առաջարկությունների: Նման կանխագուշակումների և առաջարկությունների պարտականությունն, իհարկե, ընկնում է ֆունկցիոնալ երկրորդ մակարդակի վրա: Հետազոտական-վերլուծական այդ աշխատանքները կարող են կատարել ինչպես պետության և այլ հաստատությունների կողմից հատուկ այդ նպատակի համար ստեղծված, այնպես էլ հասա-

րակական կամ բիզնեսի սկզբունքներով կազմակերպված մասնագիտական ընկերությունների կողմից: Նրանց խորհրդատվությունները կարող են ուղարկվել համանանա այլ ընկերություններ՝ փորձաքննության, կարող են ժամանակ առ ժամանակ կազմակերպվել համատեղ քննարկումներ, սակայն այս աշխատանքի արդյունքները կմնան զուտ տեսական, եթե չորդեգրվեն ազգային հաստատությունների և վերջին հաշվով ողջ ժողովորդի կողմից:

Ոչ պետական մասնագիտական կառույցների ներգրավումը չպետք է մեժվի նաև այն դեպքում, եթե ԱԱ սուբյեկտ ենք դիտարկում միայն պետությունը: Դա միայն կազմակերպական ձևի ընտրության հարց է: Միաժամանակ չպետք է մերժվի, և նույնիսկ պետք է խրախուսվի նաև հասարակության սիրողական, կամավոր և շահագրգիռ մասնակցությունը այս գործընթացին: ԱԱ արդյունավետ քաղաքականություն և համակարգ ձևավորելու հարցում սա կարևոր նախապայման է:

Կողմնորոշվելով քաղաքականության հարցերում, համաձայն ընդունված ԱԱ հայեցակարգի, այն իր մասով իրագործելու կոչված յուրաքանչյուր սուբյեկտ, և առաջին հերթին պետությունը, կարող են ստեղծել գործադիր մարմններ, ստորաբաժանումներ, ծառայություններ: Բոլոր այդ գործադիր ստորաբաժանումները իրենց գործունեության մեջ ղեկավարվում են ԱԱ հայեցակարգով, հաշվետու են սուբյեկտին (նրա ղեկավարմարնին) և պատասխանատու են նրա կողմից սահմանված ԱԱ պայմանակարգի պահպանման համար:

Փոքր-ինչ դժվար է պատկերացնել նման ստորաբաժանումների առկայությունը պետությունից դուրս: Եվ, իսկապես, ոչ պետական բազմաթիվ սուբյեկտներ կարող են և չունենալ հստակ առանձնացված նման կառույցներ կամ չլինի դրա անհրաժեշտությունը: Սակայն բերենք մի քանի օրինակներ, եթե նման ոչ պետական ստորաբաժանումները հնարավոր են և նույնիսկ պետության համար՝ ցանկալի:

Կարող են գոյություն ունենալ բազմաթիվ հասարակական կազմավորումներ, որոնց ծրագրային գործունեությունը կարող է վերաբերվել ԱԱ պահումանը տարբեր բնագավառներում: Ուազմա-հայրենասիրական արտադրողակ դաստիարակությունը՝ կրթական համակարգում, սպառողների և ներքին արտադրողների շահերի պաշտպանությունը՝ տնտեսությունը, կամավորականների միությունները՝ բանակին կից, դրա օրի-

նակներ են: Եկեղեցին կարող է ունենալ աղանդավորական թափանցումների դեմ պայքարող կառույց, սփյուռքյան սուբյեկտները՝ մի կողմից ազգապահանձնան, մյուս կողմից՝ հայրենիքի ազդեցությունը իրենց երկրներում ուժեղացնելու կառույցներ: Օրինակները բազմազան են:

Դիտարկելով պետությունը ԱԱ միակ սուբյեկտ, այս դեպքերի համար, ստիպված պետք է ընդունենք, որ պետությունը ինքն է որոշում նման կազմակերպությունների նպատակահարմարության հարցը, ստեղծում կամ աջակցում է դրանց, իսկ բոլոր ինքնարության առաջացանցները, որոնց գործողությունները չեն տեղավորվում պետության պատկերացումների մեջ, նրա կողմից մղվում են լուսանցքային դաշտ:

Վերջապես, ստորին մակարդակում ողջ հասարակությունն է, նրա բոլոր, այդ թվում՝ անհատ և ինքնակազմակերպվող սուբյեկտները, որոնք որևէ իրավական պատասխանատվություն չունեն ԱԱ ապահովելու ինաստով, սակայն ունեն բարոյական պատասխանատվություն: Անկախ այդ բարոյական պատասխանատվության գիտակցման, այս ազգային փոքր սուբյեկտները՝ ընկերությունները, ընտանիքները, միությունները, պետական ծառայողները, աշակերտները, նույնիսկ հանցագործները գործում են ԱԱ պահպանման (կամ խախտման) ռեժիմում, որը նրանց համար սահմանել են ազգային հաստատությունները: Նրանց աջակցող կամ դիմադրող վերաբերմունքից կախված է ԱԱ համակարգի գործունեության արդյունավետությունը:

ԱԱ համակարգի բուրգից բացի կարելի է առանձնացնել ըստ վտանգի թիրախների դասակարգումը:

Վտանգը, որը ծագում է ներքին և արտաքին գործընթացների պատճառվ, կամ այլ ազգերի ակտիվության արդյունքում, որպես կանոն ունենում է մի քանի թիրախ: Այդպիսի թիրախներ են ազգային ռեսուրսները, որոնք կարելի է բաժանել ըստ տեսակների՝ նյութատեխնիկական, ֆինանսական, մարդկային, ինֆորմացիոն, կազմակերպչական, ռազմական, հոգևոր-մշակութային և այլն: Սրանք էլ իրենց հերթին կարող են ունենալ իրենց ենթատեսակները: Համապատասխանաբար կարող են դիտարկվել անվտանգության ենթահամակարգեր՝ տնտեսական, կրթամշակութային, ինֆորմացիոն անվտանգություն և այլն: Այս դեպքում նույնպես համակարգի հիմքում նույն (թեկուզ ավել կամ պակաս չափով, բայց տեսականորեն բոլոր) ազգային հաստատություններն են: Պարզապես դրանք դի-

տարկվում են որոշակի դիտանկյունից:

Այսպես, դաստիարակության հարցերով գրաղվում են ինչպես դպրոցը, այնպես էլ ընտանիքը, մամուլը, բանակը, կրոնական կազմակերպությունները, հասարակական կազմակերպությունները, ոստիկանությունը և այլն: Դետնաբար, եթե ազգային վտանգը դրսնորվում է դաստիարակության բնագավառում, ապա դա զգացվում է ողջ համակարգում: Նույնպես և վտանգների մյուս դրսնորումները՝ ֆինանսական կախվածություն, ինֆորմացիոն վտանգավոր ազդեցություն և այլն, արձանագրվում են ողջ համակարգի կողմից:

Այս դասակարգումը կարևոր է հենց այդ՝ վտանգները արձանագրելու տեսակետից: Ինդիկատորների մեխանիզմները կարող են սահմանվել յուրաքանչյուր բնագավառի ռեսուրսների համար, որոնց միջոցով հնարավոր կլինի վերահսկել դրանց քանակական և որակական պատկերը՝ որքանով են դրանք համապատասխանում անվտանգության խնդիրների լուծմանը այսօր և աճի կամ նվազման ինչ միտում ունեն: Նման ձևով պետք է դիտարկվեն նաև օտարների ռեսուրսների կազմում ընթացող փոփոխությունները, հատկապես, եթե նրանց հետ առկա է իրավունքների և կենսական շահերի խաչաձևում:

Սկզբունքորեն անհնար է անվտանգության խնդիրների լուծումը ըստ բնագավառների: Նույնիսկ երեմն հակառակը. ռեսուրսների անխուսափելի կրծատումը մի բնագավառում կարող է մնել այլ ռեսուրսների ծավալման հաշվին կորուստը վերականգնելուն: Այս իմաստով ԱԱ համակարգի առանձին հաստատություններ համեմատարար ավելի մեծ դերակատարություն են ծեռք բերում, ունենալով ազդեցություն որոշակի բնագավառում: Այսպես, ֆինանսական ռեսուրսների պակասը կամ կրծատումը, կարող է փոխհատուցվել կազմակերպական և մարդկային հոգևոր ռեսուրսների մեծացունով: Իսկ ահա հենց ֆինանսական ռեսուրսների մեծացման հարցում, իհարկե, ֆինանսական համակարգի հաստատությունները ավելի մեծ դերակատարություն ունեն, սակայն ընտանիքի ինստիտուտը, որն ուղղակիորեն է մասնակցում սպառման և կուտակման հարաբերակցության ձևավորմանը, նույնպես անմասն չէ հարցի լուծումից:

Այսիսով, ըստ բնագավառների ԱԱ դասակարգումը չի ենթադրում դրան համապատասխան կառույցների ձևավորում: Բոլոր հաստատությունները գրաղվում են ԱԱ խնդիրների լուծմամբ և իրենց ունեցած ազդե-

ցության չափով դա ամդրադառնում է առանձին բնագավառներում խնդիրների լուծման վրա:

Իսկ ահա անմիջականորեն կառույցներ ձևավորելու անհրաժեշտություն է առաջանում, եթե թշնամական (ակտիվ) գործողությունների թիրախ են դառնում ազգային հաստատությունները և նրանց նորմալ կենսագործությունը՝ լինի դա պետությունը, նրա առանձին թևերը, թե որևէ այլ համակարգ կամ հաստատություն: Ընդ որում, թշնամական գործողությունները կարող են լինել ոչ միայն արտաքին, այլ նաև ներքին՝ գիտակցված կամ անգիտակից: Դաստատությունների դեմ գործողությունները կարող են նպատակ ունենալ դրանց կազմաքանդումը, անարդյունավետ գործությունները կամ դրա ժամանակավոր խափանումը, վերահսկելիությունն ու ուղղորդումը և այլն:

Ըստ այս դասակարգման են կազմակերպվում ակտիվ գործողությունների արդյունքում ծագած վտանգներին հակագործ համակարգերը՝ անվտանգության մարմիններն ու հատուկ ծառայությունները: Պետությունը, որում կենտրոնացված են դրանց հիմնական մասը, այդ մարմինները դիտում է որպես անվտանգության սուբյեկտներ՝ իշխանության մարմինների և ԱԱ խորհրդի ենթակայության տակ:

Կազմակերպվածության շատ ավելի ցածր մակարդակ ունեցող ոչ պետական հաստատությունները նույնպես կարող են ունենալ և հաճախ էլ ունեն իրենց անվտանգության ծառայությունները: Խոշոր ընկերությունները, քաղաքական կուսակցությունները և այլն, որպես կանոն, կազմակերպում են իրենց ինֆորմացիոն և ֆիզիկական պաշտպանությունը: Անվտանգության այս ծառայությունները դժվար է դիտարկել որպես ԱԱ համակարգի մաս, քանի որ մի կողմից դրանք ողջ համակարգի (բիզնեսի, քաղաքական դաշտի) անվտանգության ծառայությունները չեն, մյուս կողմից կարող են ընդհանրապես չդնել ԱԱ խնդիրներ, այլ նույնիսկ գործեն դրա դեմ: Սակայն պետության անվտանգության ծառայությունները նույնպես գրաղվում են ոչ միայն ազգային, այլ նաև ուրիշ (քաղաքացիների, կազմակերպությունների, միջազգային և այլն) անվտանգության խնդիրներով, իսկ ԱԱ խնդիրներ չդնելը կամ դրանց դեմ գործելը նշանակում է, որ տվյալ ոչ պետական հաստատությունը դուրս է մնացել ԱԱ համակարգից: Ապակենտրոն համակարգում անվտանգության ծառայությունների ձևավորմանը հնարավոր է շատ մեծ վտանգի առկայության, դրա գի-

տակցման և դրա դեմ պայքարը կազմակերպելու հարցում համաձայնության կայացման դեպքում միայն:

Ըստ վտանգների թիրախների դասակարգված ԱԱ համակարգի գործադիր կառույցն ինքը կարող է դասակարգվել ըստ վտանգի աղբյուրների և կոնկրետ տեսակների: Օրինակ, բանակային հակահետախուզությունը կարող է ունենալ բաժիններ ըստ երկրների կամ հետախուզության առանձին տեսակների դեմ պայքարողներ, և այլն:

Անվտանգության համակարգի ծևավորումը և ներքին դասակարգումը ԱԱ յուրաքանչյուր հաստատություն-սուբյեկտ իր մասով իրականացնում է ինքնուրույն: Այս ենթահամակարգերից յուրաքանչյուրը չի կարող լինել ավելի բարդ, քան իրեն ստեղծող հաստատության կազմակերպական կառույցն է: Նրանց միջև գործակցությունն էլ տեղափոխվում է հաստատությունների փոխազդեցությունների շրջանակում:

## Պետությունը

Ինչպես որ ազգերը հանդիսանում են մարդկություն համակցության սուբյեկտներ, այնպես էլ պետությունները համաշխարհային հանրության իրավական կառույցի սուբյեկտներ են: Համակցությունների այս երկու հիերարխիաները իմանականում համընկնում են միմյանց հետ, սակայն ի տարբերություն ազգերի, պետությունները իրավական հստակ կարգավիճակ ունեցող սուբյեկտներ են: Ծայրագույն համակցությունը, որին անդամակցում են պետությունները այսօր, ՍԱԿ-ն է, որը կարելի է դիտարկել որպես «մարդկություն» ծայրագույն համակցության իրավական կարգավիճակ: Մյուս կողմից ազգերի ներքին փոքրագույն սուբյեկտները՝ անհատ մարդիկ, պետության ներքին սուբյեկտների են վերածվում քաղաքացու կարգավիճակ ստանալու դեպքում: Սա է նաև պատճառը, որ երբ ԱԱ հարցը դիտարկում ենք իրավական հարթությունում, ապա այն ինքնաբերաբար վերածվում է պետության խնդրի:

Պետության քաղաքացիների ամբողջությունը և ազգը ըստ մեր սահմաննան նույնը չէ: Հատերը պնդում են, որ պետության համաժողովրդական մանդատը անհնար է դարձնում նրա համար մեկ, թեկուզ մեծամասնական, ազգի անվտանգությունը միայն ապահովելու պարտականության

սահմանումը: Այսինքն, ինչու՞ պիտի Դայաստանի քուրդ հարկատու վճարի ամերիկահայի ազգային անվտանգությունը ապահովելու համար:

Թեև հայտնի են բազմազգ պետությունների բազմաթիվ օրինակներ, սակայն յուրաքանչյուր դեպքում կարելի է պնդել, որ պետությունը որևէ ազգի սեփականությունն է: ԱԱ-ն էլ ազգի յուրաքանչյուր անդամի անվտանգությունը չէ, այն ազգի անվտանգությունն է ընդհանրապես, որպես հավաքականության: Պետությունը, որը հյուրընկալել է որևէ ազգային փոքրամասնություն, ստեղծվել է ոչ թե այդ փոքրամասնության, այլ պետականակերտ (մեծամասնական) ազգի կողմից, որպես կանոն, իր հայրենիքում: Եթե ազգային փոքրամասնությունը համաձայն է այլ պետությունում իր գոյության «հյուրի» կարգավիճակի հետ, ապա նա որևէ իմքը չունի առարկելու «տանտիրոջը»: Երկու դեպքում էլ ազգային փոքրամասնությունները կարող են ունենալ իրենց անվտանգության խնդիրները, որոնք առաջին դեպքում պետք է լուծվեն հենց իր կողմից ազատագրման միջոցով, իսկ երկրորդ դեպքում կարող են լուծվել նաև «հյուրընկալող» պետության օժանդակությամբ:

Բացի այդ, պետությունն իր բովանդակությամբ համաժողովրդական մանդատ ունեցող կառույց է: Եվ որպես ներազգային հզորագույն սուբյեկտ այն ունի կամ կարող է ստեղծել բավարար լծակներ ԱԱ ապահովելու համար: Ի տարբերություն այլ ազգային հաստատությունների, պետությունը նաև ունի իր կամքը պարտադրելու օրինական իրավունք: Քիչ կամ շատ ինքնուրույնություն ունեցող ազգային հաստատությունների գգալի մասը այս կամ այն չափով պետական է: Մյուս հատվածի համակարգերի վրա պետությունը, որպես բավականին հզոր սուբյեկտ, ազդեցություն ունի:

Ֆինանսական և գործարար աշխարհը պետության վրա ամենամեծ ազդեցություն ունեցող հաստատություններն են և պետության համապատար դժվար կառավարվող են: Սակայն օրենսդրական դաշտը, որում նրանք գործում են, և մակրոտնտեսական լծակները ունեն ոչ պակաս հակառակ ազդեցություն, ինչը հնարավորություն է տալիս պետությանը ազդելու նրանց վրա նաև ուղղակի՝ առաջատար անձերի մակարդակով:

Բանակը և իրավապահ մարմինները երբեմն ինքնուրույն, էական և որոշիչ ազդեցություն են ունենում հասարակական կյանքում, սակայն

ինչպիսին կլիմի վճռական պահերին այդ ազդեցությունը՝ որոշվում է նախապես, նրանց կառուցվածքով, պետական ֆինանսավորումով և կադրային քաղաքականությամբ:

Մարդկանց ինքնակազմակերպված խմբերը և ազգային հաստատությունները պետության դիտանկյունից զանազան իրավական կարգավիճակ ունեցող օրենքական են, որոնց գործողությունները այս կամ այն չափով պետության կողմից կանոնակարգվում են կամ կառավարվում: Սակայն պետք է միշտ հիշել, որ պետությունը հասարակական համակարգ է, որի կայացրած որոշումները ամբողջությամբ պայմանավորված են անհատների, խմբերի և այլ հաստատությունների ունեցած ազդեցությամբ:

Այս ամենը, իհարկե, բավարար հիմք չէ, դիտարկելու համար պետությունը որպես ազգ սուբյեկտի դրսնորման միակ ձև (այդ դեպքում մենք պետությունը դիտարկած կլիմենք որպես հաստատությունների հաստատություն կամ կույնացնենք ազգի հետ), քանի որ նույնիսկ ամենաուժեղ պետության որոշումները, քազմաթիվ այլ՝ ազդեցիկ և հարաբերականորեն անկախ, սուբյեկտների առկայության պատճառով, խիստ սահմանափակ ազդեցություն ունեն ազգային ընդհանուր վարչագծի վրա: Սակայն անվիճարկելի է, որ պետությունը ԱԱ գլխավոր, հաճախ էլ միակ գործող սուբյեկտն է:

ԱԱ ապահովելու պետական գործառությը պետք է տարբերել նրա երկու այլ գործառություններից: Պետությունը պետք է նաև ապահովի հենց իր անվտանգությունը, որպես ազգային հաստատություն (1): Նա նաև պարտավոր է ապահովել իր քաղաքացիների անվտանգությունը, ինչպես նաև կատարել միջազգային անվտանգությունը ապահովելու գծով իր ստանձնած պարտավորությունները (2): Երբ պետությունը սահմանափակվում է միայն այս գործառությներով կամ դրանցից մեկով, ապա նրա գործողությունները չեն կարող դիտվել, որպես ԱԱ խնդիրների սպասարկում պետության կողմից: Պատահական չեն, որ ազգային օրենսդրություններում երբեմն նույնիսկ բացակայում է ազգային անվտանգություն տերմինը և խոսք է գնում միայն անվտանգության մասին (անհատի, հասարակության և պետության):

Երբ պետությունը ապահովում է միայն իր անվտանգությունը՝ գործող պետական կարգի անսասանությունը, ապա այդպիսի դեպքերում գործ ենք ունենում բռնատիրությունների հետ, որոնք պաշտպանվում են նույ-

նիսկ իրենց քաղաքացիներից: Որպես կանոն, այդպիսի պետություններ ունեցող ազգերը հետ են մնում իրենց զարգացման մեջ և խոցելի են դաշնության արտաքին ազդեցություններից: Դրա դասական օրինակ էր ԽՍՀՄ-ը՝ իր գոյության երկորորդ կեսին, անձնավորված դիկտատորական վարչակարգերը: Բռնատիրության տարրերը, խիստ անհրաժեշտության դեպքում, կարող են կիրառվել նաև ԱԱ ապահովելու, թիշքային կամ հեղափոխական զարգացում ունենալու նկատառումներով՝ համեմատաբար կարծ ժամանակահատվածի համար:

Այս դեպքում, երբ ապահովում է պետության՝ գումարած նաև քաղաքացիների անվտանգությունը, իսկ դրան էլ գումարած, անվտանգության գծով միջազգային համագործակցությունը, ապա կարելի է հաստատել, որ սրանցով սահմանափակվող պետության ժողովուրդը կամ չունի ազգային սպառնալիքներ և/կամ դեռ չի ստեղծել ԱԱ համակարգ, կամ ամբողջությամբ վստահում է միջազգային որևէ համակարգի: Այսպիսի երկրների թիվը քիչ չէ Եվրոպայում:

Որոշակի շփոթ կա նաև այն իմաստով, որ ազգային (պետության) օրենսդրությունները միշտ չեն, որ ուղղակի խոսում են ԱԱ խնդիրի առկայության մասին (նույնիսկ երբ օգտագործվում է ազգային բառը), այլ խոսում են քաղաքացիների, հասարակության կամ պետության անվտանգության մասին: Միաժամանակ, դա չի խանգարում այդ պետություններին ամբողջ ծավալով սպասարկել ազգային կենսական շահերը՝ անհրաժեշտության դեպքում նույնիսկ շրջանցելով օրենքը՝ պետական քաղաքականության և մարմինների նակարդակով:

Եական է առանձնացնել նաև պետական անվտանգություն և իշխանության անվտանգություն հասկացությունները: Պետությունը, որպես հասարակական օրգանիզմ, իր մեջ պարունակում է որոշակի ինքնապաշտանական մեխանիզմ: Բոլոր սահմանադրություններում առկա են դրույթներ սահմանադրական կարգը բռնությամբ փոխելու անթույլատրելիության մասին և միաժամանակ սահմանադրական իներցիա սահմանող դրույթներ: Բացի դրանցից պետական անվտանգության խնդիրներ են պետական մեքենայի նորմալ կենսագործունեությունն ապահովող խնդիրները: Պետության, որպես ազգային կարևորագույն հասկացության, անվտանգությունը իհարկե պետք է մաս կազմի ԱԱ-ն համակարգին: Սակայն իշխանության անվտանգությունը, այսինքն, կոնկրետ թիմի իշխանությունը

պահպանելուն ուղղված անվտանգության համակարգը չի կարող դիտվել ոչ պետական և ոչ էլ ԱԱ կազմում: Ծիշտ հակառակը. պետական անվտանգության խնդիրն է ապահովել իշխանությունների սահմանադրական անցնում փոփոխություն և իշխանական այլընտրանքների ազատ ձևավորման հնարավորություն:

Եթե պետությունը, օրենսդրությամբ և փաստացի, դիտարկում ենք որպես ԱԱ միակ սուրբեկու, ապա անխուսափելիորեն ԱԱ լավագույն դեպքում դրվում է անձի, հասարակական կառույցների, պետության և միջազգային անվտանգության կողքին՝ առանց որևէ նախապատվության: Վատագույն դեպքում այն ընդհանրապես տեղ չի ունենում այնտեղ, այն պարզ հիմնավորումով, որ ազգի (էթնիկ) իրավաբանական ձևակերպում չկա, կամ այն տվյալ պետության քաղաքացիների ամբողջությունն է, որի ներկայացուցիչը հենց պետությունն է:

Իսկ երբ պետությունն ազգը իրենով չի սահմանափակում, ԱԱ սուրբեկումներ են դիտարկվում ազգային բոլոր հաստատությունները, ապա այդ դեպքում ԱԱ ապահովելու պետական գործառույթը կայանում է նրանում, որ նա որպես ազգային ամենահզոր և բազմայուղ հաստատություն, որպես «իրավահավասարների» մեջ բնական առաջնորդ, նախաձեռնում, կազմակերպում և մասնակցում է ԱԱ հայեցակարգի ու դրանից բխող համակարգի ձևավորմանը, այնուհետև իրականացնում է հայեցակարգից բխող իր պարտականությունները և վերահսկում պարտականությունների կատարումը այլ ազգային հաստատությունների կողմից, իր հերթին ինչ որ չափով վերահսկելով նրանց կողմից:

ԱԱ ապահովելու պետության գործառույթները կարելի է դիտարկել բաժանելով դրանք ըստ ԱԱ համակարգի հիերարխիկ դասակարգման: Միաժամանակ, յուրաքանչյուր մակարդակում անհրաժեշտ է դիտարկել պետության հնարավորությունները և պատասխանատվությունը հասարակական մյուս ինստիտուտները ԱԱ ապահովման գործառույթում ներգրավելու, նրանց վրա ազդելու և վերահսկելու ուղղությամբ:

Օրինականության սկզբունքին համապատասխան, ԱԱ համակարգի պետական հատվածի հստակ կանոնակարգումը և արտապետական հատվածի հետ համագործակցաբար աշխատելու պետական նարմինների պարտավորության և դրանց իրականացման ձևերի օրենսդրական սահմանումը հնարավորություն կտա խուսափել բազմաթիվ թվայցալ հա-

կասություններից, որոնք, իբր, ծագում են, երբ պետությունից բացի այլ հաստատություններ ևս դիտարկվում են որպես ԱԱ սուբյեկտներ:

Պետության տեսանկյունից ԱԱ ապահովելու իր հիմնական գործառույթներն են:

• ԱԱ համակարգի ձևավորումը և կատարելագործումը, հայեցակարգի ձևավորումը և ընդունումը պետության և հասարակության կողմից, պետական քաղաքականության հիմնական ուղղությունների որոշումը,

• Հայեցակարգում ընթացիկ փոփոխությունների առաջարկությունների պատրաստման, հիմնավորման և քաղաքականության նշակման մասնագիտական աշխատանքների կազմակերպումը, պետական պատվերի սահմանումը և ֆինանսավորումը,

• Անվտանգության պետական գործադիր մարմինների և ծառայությունների ստեղծումը (կատարելագործումը), դրանց միջոցների, պատրաստականության և փոխգործակցության ապահովումը, ընթացիկ կառավարումը և ֆինանսավորումը;

• Անվտանգության պետական պայմանակարգի ապահովման խնդիրներում քաղաքացիների և հասարակության ակտիվ աջակցության ապահովումը:

ԱԱ համակարգի ձևավորման, իսկ ձևավորված համակարգի կատարելագործման պետական գործառույթի իրականացումը ենթադրում է գործունեության երկու ուղղություն:

Առաջինը ազգային հաստատությունները ներգրավելու ճանապարհով ԱԱ համակարգի արդյունավետության և կառավարելիության, մասնավորապես պետության կողմից կառավարելիության, մեծացումն է: Ներգրավելով գործարար-ֆինանսական, բանակային-ուժային, քաղաքական-քարոզական և գիտա-մշակութային ազդեցիկ վերնախավերը, որոնց գործունեության պայմանները, ներքին կառուցվածքը և ավանդույթները ենթադրում են տարաբնույթ շահերի գերազանցություն ազգային կենսական շահերի նկատմամբ, պետությունը փորձում է առնվազն հաշվարկելի և գոնե ինչ-որ չափով ուղղորդելի դարձնել նրանց ազդեցությունը ազգային որոշումների կայացման վրա:

Երկրորդ ուղղությունը պետական հնարավորություններով հիմնարար ազդեցություն է ազգային հաստատությունների վրա, դրանց ձևի կամ բովանդակության փոփոխության նպատակով՝ ԱԱ պահանջներին նրանց

վարքագիծը համապատասխանեցնելու նկատառումներով:

Եթե առաջին ուղղության խնդիրը հենց տվյալ պահին ազգային որոշումների վրա ազդող, պետությունից անկախ և կիսանկախ, բոլոր ազգային հաստատությունների ընթացիկ գործողությունները հաշվարկելը, վերահսկելը, դրանց վրա ազդելն է, ապա երկրորդ ուղղության խնդիրը ապագա ժամանակաշրջանի համար ազգային հաստատությունների այնպիսի համակարգ, իսկ յուրաքանչյուր հաստատության համար այնպիսի կառուցվածք ձևավորելն է, որը առավելագույնս կիամապատասխանի ԱԱ խնդիրների տարրողությանը, օրյեկտիվորեն՝ առանց պետական լծակներով սուրբեկտիվ միջանտության, կապասարկի դրանք:

Բանակի կառուցվածքով (զինապարտություն, կադրային առաջխաղացում, դաստիարակչական մթնոլորտ և այլն) պայմանավորվում է նրա ազդեցության ոչ միայն մեծությունը, այլև բնույթը (ազգայնական կամ շովինիստական ուժ, ֆինանսական օլիգարխիայի կամ բռնակալների կամակատար, կայունության երաշխավոր և այլն): Տնտեսության ճյուղային կառուցվածքը և կապիտալի կենտրոնացվածության աստիճանը, եկամուտների բաշխման կառուցվածքը և կոռուպցիայի չափերը, օրենսդրական դաշտը և ստվերային տնտեսության չափերը, բոլորը ազդում են գործարար-ֆինանսական ոլորտում յուրօրինակ իշխանության և տնտեսավարողների որոշակի վարքագիծ ձևավորմանը, որոնց նպատակները ԱԱ ապահովման տեսակետից կարող են և չքավարարել հասարակությանը (պետությանը): Քաղաքական իշխանության ձևավորման մթնոլորտից և մեխանիզմներից կախված, կարող են ընտրվել մարդիկ, որոնք առավել կամ պակաս չափով են իրենց գործունեության մեջ դեկավարվում ազգային շահերով: Կրթական-դաստիարակչական համակարգում տիրապետող ծրագրերով որոշվող ապագա սերունդների վարքագիծը նույնպես կարող է չհամապատասխանել ԱԱ պահանջներին:

Բոլոր դեպքերում օրենսդրական փոփոխությունները և պետական քաղաքանությունը կարող են փոխել ապագայի պատկերը և նշված հաստատությունները գործեն որպես ԱԱ լիարժեք համակարգ, սակայն ժամանակի գործոնը կարող է նաև ստիպել պետությանը դիմելու պարտադրանքի իրեն հասու տարբեր միջոցների՝ ստանալու համար մասնակի դրական արդյունքներ արդեն այսօր:

Ձևավորելով ԱԱ հայեցակարգի համաձայնեցման իր մեխանիզմը՝ կոլե-

գիալ խորհրդակցական մարմինը՝ պետության գործադիր և օրենսդիր իշխանություններին կից (ԱԱ խորհուրդ), կառավարությունը պետք է փորձի ներգրավել ազգային որոշումների վրա ազդող բոլոր ազդեցիկ ուժերի ներկայացուցիչներին: Ցանկալի է, որ դա լինի պետության օրենսդրական պարտականությունը, քանի որ պետության առկայության պայմաններում միայն նա է ունակ նախաձեռնել ներկայացուցչական և արդյունավետ հասրակական քննարկում՝ սահմանելու ազգային նպատակը և ձևավորելու դրա իրականացման համար անհրաժեշտ համակարգը:

Եթե, ըստ կառավարության, ԱԱ համակարգը դեռ ձևավորված չէ կամ կարիք ունի էական բարեփոխման, ապա դա նշանակում է, որ ԱԱ խորհուրդը վերածվում է ազգային հաստատությունների համակարգում կառուցվածքային բարեփոխումների պետական ծրագրի համաձայնեցման մեխանիզմի:

Կառավարության առաջարկած ԱԱ հայեցակարգը կարող է փաստացի հակագիտության արժանանալ հատվածական շահեր հետապնդող բազմաթիվ ուժերի, վերացվող համակարգերի տարրերի կողմից: Այս դեպքում, եթե չի գոյանում համաձայնություն, կառավարությունը հայտնվում է այդ ուժերի հետ պատերազմական վիճակում՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Ընդ որում, միշտ չէ, որ ուժեղ է պետությունը, միշտ չէ, որ իրավացի է կառավարությունը:

Կառավարությունը (գործադիր իշխանությունը) ինքն է որոշում ԱԱ ապահովման գծով իր քաղաքականության հիմնական ուղղությունները և այս իմաստով ԱԱ խորհուրդի գործառույթը իսկապես խորհրդակցական է:

ԱԱ հայեցակարգի հետ կապված մասնագիտական աշխատանքների, ինչպես նաև դրանց հասարակական քննարկման, կազմակերպման հետ կապված պետության գործառույթները ստեղծում են էլ ավելի լայն հնարավորություն հասարակության ներգրավման համար: Առավելագույն արդյունավետության հասնելու նպատակով պետության խնդիրն է խրախուսել, այդ թվում՝ կազմակերպականորեն և ֆինանսապես, ոչ պետական կազմակերպությունների մասնակցությունը, ինչպես նաև ապահովել նրանց և պետության տարբեր ճյուղերում իրականացվող մշակումների համադրումն ու փոխադարձ փորձաքննությունը:

Հայեցակարգի համաձայն, գործադիր (մասամբ նաև օրենսդիր) իշխանության օղակները, իրենց սահմանադրական իրավասությունների շրջա-

նակներում, մասնակցում են ԱԱ ապահովմանը: ԱԱ պայմանակարգի գոյությունը պետական կառավարման համակարգը բաժանում է Երկու՝ ընթացիկ և հեռանկարային կառավարման կոնտուրների: Այս բնագավառում պետության գործառույթները ենթադրում են ինչպես սովորական մարմինների աշխատանքների կազմակերպումը ԱԱ պայմանակարգի պայմաններում, այնպես էլ հատուկ այդ պայմանակարգը իրականացնող մարմինների և ծառայությունների ստեղծումը գործադրի համակարգում:

Դակառակ նրան, որ պետությունը ԱԱ խնդիրներից բացի պարտավոր է ապահովել նաև, ասենք, քաղաքացիների ազատություններն ու իրավունքները, հատուկ մարմիններին տրամադրված միջոցները վերջիններիս հաճախ հնարավորություն են տալիս չարաշահել իրենց տրված իշխանությունը: Ավելին, երբեմն կառավարությունը այդ չարաշահումը վերածում է քաղաքականության: ԱԱ պահովելու իրավական բազան անհրաժեշտ է նաև այս հատուկ մարմինների պարտավորությունների և լիազորությունների սահմանները ճշտելու համար: Միաժամանակ, սահմանափակման խստությունը կարող է համակարգի անարդյունավետության պատճառ դառնալ:

Մասուրի ազատության սահմանափակումը անթույլատրելի է, սակայն այնտեղ որոշակի թենաների արծարծումը կարող է վնասել ԱԱ-ը: Եթե այս խնդիրը լուծելու համար սահմանվում է ինչ-որ գրաքննություն, ապա մեծ է այդ գրաքննությունը քաղաքական նպատակներին ծառայեցնելու կառավարության գայթակղությունը: Կամ թշնամական գործողությունները վնասազերծելու համար անհրաժեշտ է միջամտել կասկածյալ և նրանց հետ կապված անձանց անձնական կյանքին, սակայն վտանգ կա որ այդ իրավունքից ծառայությունները կարող են օգտվել նաև առանց որևէ հիմքի: Քանի որ հատուկ ծառայությունները ինչ-որ իմաստով խաղաղ ժամանակներում պատերազմող ծառայություններ են, ապա նրանց հաճախ թույլատրվում է չկանգնել միջոցների խորության առաջ: Սակայն որոշ դեպքերում արդարացված համարվող սպանությունները, շանտաժը, գորությունները, տեռորիստական և խափանարար (ասենք օտար երկրներում) գործունեության ֆինանսավորումը, մեկ այլ դեպքում կազմակերպված հանցագործություններ են: Օրենքով բացառության բոլոր դեպքերը սահմանելու անհնար է:

Եթե ԱԱ շահերի տեսանկյունից առանձին դեպքերում ընդունում ենք

օրենքից նման կարգի բացառությունները, ապա դրանց հնարավորության սահմանման կողքին անհրաժեշտ է հստակ վերահսկող մեխանիզմների գոյությունը:

Բացի վերահսկող մեխանիզմներից, «ազգի անունից կատարված հանցագործությունները» անպատճառ պետք է ունենան իրապարակայնության որոշակի աստիճան նույնպես, դրանց մասին պետք է տեղեկացված լինեն հնարավորին չափ շատ մարդիկ, պետք է արձանագրվեն հիմնավորումները և անհրաժեշտության դեպքում կազմակերպվի տեղեկատվական արտահոսք և այլն, ինչը սպանությունը կվերածի դատավճռի իրականացման, խափանարարությունը՝ վտանգի կանխարգելման, գողությունը՝ բռնագրավման:

Վերջապես, ԱԱ պայմանակարգի արդյունավետ ապահովման համար պետության գործառույթների մեջ է մտնում այդ պայմանակարգի նկատմամբ քաղաքացիների ակտիվ աջակցությունն ապահովելը: Եթե բացակայում է հասարակության աջակցությունը, և հատկապես, եթե դրա փոխարեն առկա է որոշակի հակագդեցություն, կարելի է վստահությանը ասել, որ ԱԱ համակարգը դեռևս չի գործում:

Եթե զինապարտները խուսափում են բանակում ծառայելուց, եթե քաղաքացիները նախընտրում են արտագաղթել կամ երեխաներին օտարալեզու ուսման տալ, եթե առևտրականների համար ընդունելի է ազգային հարստության փոշիացման ճանապարհով հարստանալը, պետությունը չի կարող ստեղծել պարտադրանքի այնպիսի ապարատ, որը կհաղթի ողջ հասարակությանը:

Սա, իհարկե, ենթադրում է քարոզական և դաստիարակչական աշխատանքների մեջ ծավալ, որում պետության դերը փոքր-ինչ սահմանափակ է, սակայն խիստ արդյունավետ կարող է լինել, եթե նա խսկապես հասարակությանը մասնակից է դարձնում ԱԱ ապահովման ողջ գործընթացին քաղաքականության մշակումից մինչև պայմանակարգի պահպանում: Եթե քաղաքական և հասարակական կազմակերպությունները մասնակցում են ԱԱ պետական քաղաքականության մշակմանը, ապա նրանց պատկանող քարոզական ռեսուրսները նույնպես ներգրավվում են: Եթե եկեղեցին, սփյուռքը, ազդեցիկ գործարարները կառավարության հետ միասին համաձայնեցնում են ԱԱ հայեցակարգը, ապա նրանց քարոզական-դաստիարակչական գիծը համընկնում է պետության գծի հետ: Եթե

դպրոցական ծրագրերը, նաև բանակային դաստիարակությունը կառուցվում են ԱԱ պահանջների հիման վրա, ապա վստահաբար կարելի է ասել, որ հաջորդ սերունդը կապահովի ազգային զարգացման հնարավորությունների առավելագույնը:

Չնավորվող ԱԱ օրենսդրությունը պետք է հանապատասխանի պետական գործառույթների այս չորս խմբերին: Նպատակահարմար է նաև ԱԱ մասին օրենսդրությունն առանձնացնել ընդհանրապես անվտանգության մասին օրենսդրությունից: Այլ կերպ ասած՝ քաղաքացիների, նրանց հասարակական միավորումների, իրավունքների և ազատությունների պաշտպանության, և այդ գծով միջազգային համագործակցության, ըստ էության, ուստիկանական խնդիրները չի կարելի խառնել ԱԱ խնդիրների հետ: (ԱԱ պահովման գծով միջազգային գործակցությունը կամ կոլեկտիվ անվտանգության համակարգերուն ցանկալի և կամավոր ներգրավումն իհարկե ԱԱ խնդիր է):

Ազգային վտանգների մեծությունից և հասարակական ներուժը համախմբելու անհրաժեշտությունից կախված՝ պետք է ԱԱ օրենսդրության մեջ բոլոր մակարդակներում սահմանվի հասարակության հետ համագործակցության պետական պարտականությունը, ինչպես նաև քաղաքացիների իրավունքները այդ ուղղությամբ:

Պետությունը որպես ԱԱ սուբյեկտ հանդես գալու նպատակ ունեցող հասարակության ինքնակազմակերպված խմբերի համար մնում է ամենացանկալի հաստատությունը, որում իրենց ազդեցությունը մեծացնելու ճանապարհով նրանք փորձում են ԱԱ համակարգի ձևավորման կամ բարեփոխման իրենց առաջարկությունն ազգի կողմից ընդունված իրողություն դարձնել:

## ԱԱ համակարգի գործունեության մեթոդաբանությունը

ԱԱ համակարգի նկատմամբ հասարակական պահանջարկը ձևավորվում է ազգային ինքնատիպ զարգացմանը սպառնացող վտանգներին համապատասխան՝ ազգային գիտակցության մեջ անցնելով որոշակի փուլեր:

Զրոյական փուլում ազգային զարգացման իներցիան միանգամայն բավարարում է կամ թվում է, թե բավարարում է, նաև չկամ չեն գիտակցվում էական վտանգներ, որոնք կարող են խաթարել այդ զարգացումը: Այս պայմաններում ԱԱ համակարգի անմիջական անհրաժեշտություն չկա, այն կարող է պետք գալ միայն ապագայում, եթե առաջանան այսօր չհաշվարկվող սպառնալիքներ: Այս փուլում ազգային կառավարման հեռանկարային կոնտուրը փաստորեն անգործության է մատնված և ազգային բոլոր սուբյեկտների գործողություններն ընթացիկ խնդիրներ են հետապնդում, որոնք ազգային բնույթ չունեն:

Եթե (հաջորդ փուլը) ազգային զարգացման ինդիկատորները վկայում են սպառնալիքների գոյության մասին, ապա ԱԱ առկա համակարգը իր հնարավորությունների սահմաններում փորձում է հակազդել դրանց: Այս փուլին հատուկ խնդիրները օպերատիվ արձագանքման բնույթ ունեն:

Երբ այդ հակազդեցությունը կամ համակարգի հակազդելու հնարավորությունները գնահատվում են ոչ բավարար, ազգային գիտակցությունը սահմանում է ԱԱ համակարգ ձևավորելու կամ գոյություն ունեցողը առկա սպառնալիքներին համապատասխանեցնելու պահանջարկ (Երրորդ փուլ): Այս փուլում, ի տարբերություն նախորդի, առաջանում է «ինչ անել» հարցը, և սահմանված խնդիրները ավելի ստեղծագործական աշխատանք են պահանջում, որի արդյունքում հիմնովին վերանայվում է ոչ միայն հայեցակարգը, այլև ինքը ԱԱ համակարգը:

Ազգային գիտակցությունը բոլոր այս երեք փուլերում գործում է իրեն ձևավորած միջավայրին և պայմաններին համապատասխան: Երբեմն ազգային գիտակցության ստերեոտիպերը թույլ չեն տալիս տեսնել այն սպառնալիքները, որոնք ավելի ուշ, իրականացվելուց հետո կգնահատվեն որպես այդպիսին, կամ հակառակ՝ տեսնում է վտանգներ այնտեղ, ուր դրանք չկան: Մյուս կողմից՝ գիտակցելով հանդերձ վտանգը, ազգա-

յին ստեղծագործական միտքը կարող է և ունակ չլինելու լուծումներ և պարտադրված կատարել պատահական կամ ինտուիտիվ քայլեր:

Դամակարգը ազգային ապառնալիքներին համապատասխանեցնելուց հետո տեղի է ունենում վերադարձ երկրորդ փուլին, ուր առկա համակարգը օպերատիվ ձևով հակագրում է վտանգներին: Երկար ժամանակ վտանգների չհայտնաբերումը համակարգի կողմից տեսականորեն կարող է վերադարձնել մեզ զրոյական վիճակի:

Որպես տարրեր փուլերի խնդիրներ առանձնացնենք ԱԱ հայեցակարգի ընթացիկ վերանայումները և հենց իր համակարգի ձևավորումը կամ վերանայումը, քանի որ երկու դեպքերում կիրառվող մեթոդները սկզբունքուն տարրեր են:

ԱԱ նոր համակարգ ձևավորելու կամ եղածը կատարելագործելու դեպքում մեթոդաբանական առաջին քայլը ազգային զարգացման իներցիայի գնահատումն է: Ազգային վարքագծի որոշակի կայացած տիպի և ձևավորված հանգամանքների պայմաններում զարգացման էվոլյուցիան ունի իր իներցիոն ուղղությունը: Եթե չստեղծենք կամ չփոխենք ԱԱ համակարգը, այլ հավասար պայմանների դեպքում, մենք կունենանք որոշակի արդյունք՝ արդյունքների ժամանակագրական շարք: Գնահատել ազգային զարգացման իներցիան՝ նշանակում է պատասխանել հարցին, թե քավարարո՞ւմ է արդյոք մեզ այդ արդյունքը, որքանո՞վ է նա համապատասխանում մեր ազգային նպատակին: Դրական պատասխանի դեպքում ԱԱ համակարգը բարեփոխելու կամ նորը ստեղծելու անհրաժեշտությունը վերանում է: Բացասական պատասխանի դեպքում առաջանում է ազգային նպատակի կամ ԱԱ համակարգի վերանայման հարց՝ համապատասխանեցնելու նպատակով, որը դառնում է անվտանգության համակարգի ձևավորման մեթոդի առաջին քայլը:

Ազգային նպատակի սահմանափակող տարրերը երը գործնականում հաշվարկելի չեն և մարդկային գործոնի մեջ ազդեցության պատճառով ունեն զգալի առաձգականություն: Դետևաբար՝ նպատակը սահմանվում է մաքսիմալիստական: Ուստի ազգային գիտակցության մեջ առաջին հերթին անվտանգության համակարգն է, որ փորձ է կատարվում համապատասխանեցնել ազգային նպատակին: Իսկ հակառակ տեղի է ունենում միայն այն դեպքում, երը ազգային նպատակը գնահատվում է ոչ իրատեսական՝ այդ թվում համապատասխան անվտանգության համակարգ

ձևավորելու անհնարինության պատճառով: Այսինքն՝ երբ դրված է ԱԱ համակարգ ձևավորելու խնդիր, ապա ինքնաբերաբար փորձ է կատարվում ձևավորել հնարավորին չափ ավելի հզոր համակարգ, որը կապասարկի ավելի մաքսիմալիստական ազգային նպատակի: Այդ հզորության աճեցման փաստացի սահմանների գիտակցումը սահմանափակում է նաև նպատակը:

Ազգային նպատակը ենթադրում է ազգային զարգացման նոր իներցիայի հաստատում, որը կայանում և այնուհետև պաշտպանվում է ԱԱ համակարգի միջոցով: Այդ նոր իներցիայի հաստատմանը և պահպանմանը խոչնդուտող բոլոր վտանգների (ազգային սպառնալիքների) հայտնաբերումը մեթոդի երկրորդ քայլն է:

Վտանգների հայտնաբերման համար պետք է ուսումնասիրել տվյալ ազգի նաև ակցությամբ բոլոր տարածաշրջանային, աշխարհաքաղաքական, պատմամշակութային, տնտեսական, դաշնակցային և այլ համակցությունները և դրանցում նրա գլխավոր հակառակորդներին, գործակիցներին և այն նշանակալի սուբյեկտներին, որոնք անխուսափելիորեն աղդում են մնացածների վրա: Պետք է նաև որոշվեն այդ սուբյեկտների նպատակները՝ ներկայումն և հեռանկարում, նրանց կշիռը համակցության մեջ, ինչպես նաև, թե որտեղ կարող են հատվել նրանց շահերը տվյալ ազգի շահերի հետ:

Ընթացիկ ծագող վտանգների հայտնաբերման համար անհրաժեշտ անվտանգության ինդիկատորների մեթոդի կիրառումը այս դեպքում օժանդակ բնույթ կարող է ունենալ միայն, քանի որ ինդիկատորները նաև կազմում այդ պահին գործող հանակարգին, որը և փոխելու խնդիր է դրված: Բացի այդ, ինդիկատորները սահմանված են ըստ ոլորտների և բնութագրում են ոչ թե վտանգը, այլ նրա դրսևումը որոշակի տեսանկյունից: Եվ քանի որ ոլորտ առ ոլորտ վտանգներ գոյություն չունեն, հետևաբար հնարավոր չեն որևէ վտանգ հայտնաբերել միայն ինդիկատորների միջոցով:

Յուրաքանչյուր դեպքում, երբ առկա է շահերի խաչաձևում, վտանգը գնահատվում է երկու հիմնական չափանիշներով: Որքանով են վտանգված շահերը մեզ համար կենսական (1) և որքանով է ռեսուրսների հարաբերակցությունը հակառակորդի օգտին (2): Ըստ այդմ սահմանվում է վտանգների հաղթահարման կարևորությունը և առաջնահերթությունը:

շահերը	համեմատելի են	ռեսուրսները հակառակորդի օգտին են	անհամամատելի են՝ նրա օգտին
նվազ կենսական	ոչ առաջնահերթ	պակաս առաջնահերթ	միջին առաջնահերթ
միջին կենսական	պակաս առաջնահերթ	միջին առաջնահերթ	բարձր առաջնահերթ
խիստ կենսական	միջին առաջնահերթ	բարձր առաջնահերթ	խիստ առաջնահերթ

ԱԱ համակարգի նպատակի որոշումը հաջորդ քայլն է, որն անմիջականորեն բխում է ազգային սպառնալիքների ամբողջությունից՝ վերոնշյալ առաջնահերթությունների համակարգի հիման վրա սահմանված։ Նրանով և պայմանավորվում են ծևավորվող անվտանգության համակարգի կառուցվածքը, բնույթը, նրան ներկայացվող պահանջները։ ԱԱ համակարգը և նրա նպատակը ամբողջական պետք է դիտարկել։ Անվտանգության համակարգերը չեն կարող սահմանվել առանձին վտանգներ կանխելու և հակազդելու համար, թեկուզ այն պատճառով, որ դրա համար անհրաժեշտ ազգային ռեսուրսները ընդհանուր են և սահմանափակ։

Նպատակից նաև բխում է ԱԱ համակարգի ընդհանուր ռազմավարությունը։ Այն, ընդհանուր առնամբ, կախված ռեսուրսների մեջությունից, կարող է լինել ներքին և արտաքին հնարավորությունների օգտագործման միջոցով առաջխաղացման, իսկ հակառակ դեպքում՝ հնարավորին չափ փոքր կորուստներ բերող անվտանգ նահանջի։ Ռազմավարությունը, կախված նպատակից, կարող է տևական ժամանակաշրջանի համար ուժենալ նաև տեխնոլոգիական առանձնահատկություններ։ Այսպես, արտաքին մեծ հնարավորությունների և ներքին սահմանափակ ռեսուրսների պայմաններում կարող է ընտրվել արտաքին հնարավորությունների օգտագործումով ներքին ռեսուրսների համալրման ռազմավարություն, և հակառակ դեպքում, ներքին ռեսուրսների օգտագործումով կարող են բարելավվել արտաքին պայմանները։ Ռեսուրսների պակասի պայմաններում կարող է ընտրվել ցածր ակտիվության և ռեսուրսների կուտակման ռազմավարություն, իսկ բավարար չափով կուտակումից հետո՝ դրանց

իրացման և որոշակի արդյունքների ծեռք բերման ռազմավարություն։

ԱԱ համակարգի նպատակը և ռազմավարությունը նպատակ և ռազմավարություն են նաև այդ համակարգին մաս կազմող ազգային բոլոր հաստատությունների համար, որից բխող նրանց հեռանկարային ռազմավարական խնդիրների սահմանումը մեթոդի հաջորդ քայլն է։ Այս խնդիրները ունեն շատ ավելի կոնկրետ բնույթ և չեն կարող սահմանվել ողջ համակարգի համար նույնությամբ։ Յուրաքանչյուր ազգային հաստատություն ունի իր յուրահատուկ ոլորտը և գործառույթը, ինչպես նաև որոշակի ռեսուրսներ, որոնք ազգային նյութ ռեսուրսների հետ փոխկապակցված լինելով հանդերձ, որոշակիորեն պատկանում են նրան։

Յետևաբար խնդիրները սահմանելիս շատ կարևոր է հիշել, որ այդ հաստատությունները իրենք են վերջիվերջո որոշելու։ Լուծե՞լ այդ խնդիրները, թե՞ ոչ, և ավելին, իրենք են իրենց համար սահմանելու այդ խնդիրները։ Այսինքն, ազգային հաստատությունների համար խնդիր սահմանել, առաջին հերթին, նշանակում է համարել տվյալ հաստատության համակարգային շահերը ազգային շահերով թելադրված նրանց հանձնարարականի հետ, ինչպես նաև գնահատել այդ հանձնարարականը կատարելու՝ հաստատության հնարավորությունները։

Ազգային հաստատությունների համակարգը, ըստ յուրաքանչյուրի կառուցվածքի և բնույթի, կարող է առաջարկել ԱԱ ռազմավարական խնդիրների լուծման տարբեր հնարավորություններ։ Յետևաբար, անհրաժեշտ է գնահատել յուրաքանչյուր ազգային հաստատության համար կառուցվածքային առաջարկության տարրերակները, ԱԱ համակարգի նպատակին ծառայելու և իրենց համար սահմանված ռազմավարական խնդիրները լուծելու տեսանկյունից։ Սա մեթոդի հաջորդ քայլն է։

Տարրերակները պետք է բավարարեն որոշակի չափորոշիչների, որպեսզի պիտանի լինեն որպես կառուցվածքային բարեփոխման առաջարկություն։ Առաջինների թվում այն չափորոշիչներն են, որոնք դիտարկում են առաջարկության իրականանալիությունը, քանի որ ազգային հաստատության կառուցվածքի փոփոխությունը պետք է ենթադրի փոփոխողի առկայություն և ռեսուրսային կարողականություն։ Ենթադրությունը կարող են չբավարարել բոլոր չափորոշիչներին, սակայն կարող են արդարացված լինել այլ արդյունքներով։ Առաջարկության ընդունման կամ մերժման ալգորիթմը կարելի է պատկերացնել որպես չափորոշիչների շաբթ՝

ըստ կարևորության, որոնցից հաջորդին կարելի է անցնել, եթե բավարարում ես ավելի կարևոր չափորոշիչն, եթե ոչ՝ ապա (հատկապես ալգորիթմի ստորին հատվածում) գնահատվում են կողմնակի արդյունքները, որոնք կարող են թույլ տալ անցնել հաջորդ չափորոշիչն: Դրանց շարքը ավարտելով՝ տարբերակը համարվում է ընդունելի տարբերակ, որը դեռ պետք է համեմատել այլ տարբերակների հետ:

Հաստատությունների համար առաջարկվող կառուցվածքները, այս կամ այն հաջողությամբ առաջարկելով ռազմավարական խնդրի լուծումներ, պետք է համեմատվեն արդյունավետության, այլ հաստատությունների հետ գործակցության, կողմնակի ազդեցությունների ենթարկվելու և համակարգի նպատակից շեղվելու ռիսկի, հարակից խնդիրներ լուծելու, այլ կողմնակի արդյունքներ ունենալու և այլ տեսանկյուններից:

Յուրաքանչյուր հաստատության համար կառուցվածքային լավագույն տարբերակի որոշումից հետո մեթոդ եզրափակիչ քայլը **ԱԱ համակարգի ընդհանուր կառուցվածքի** որոշումն է: Այն ենթադրում է իրենց նոր կառուցվածքով ազգային հաստատությունների համատեղելիության ճշտում, փոխադրեցության և գործակցության մեխանիզմների գնահատում: Ընդ որում, այդ մեխանիզմները պետք է դիտարկվեն որպես յուրաքանչյուրի կառուցվածքի մաս, քանի որ ԱԱ համակարգը կենտրոնացված չի կարող լինել: Բացասական գնահատականը կարող է պատճառ հանդիսանալ մեթոդի նախորդ քայլերին վերադառնալու համար:

Այս մեթոդի գլխավոր թերությունն այն է, որ նրա պատասխանատուն կարող է լինել ազգային հաստատություններից մեկը (պետությունը), իսկ որպես օբյեկտ դիտարկվում է ողջ համակարգը: Սա դեռ մեծ թերություն չէ, երբ այդ մեկը շատ ազդեցիկ է, սակայն հայտնի չէ, թե որքանով են նրա ներսի ազդեցիկ ուժերը դեկավարվում ազգային և որքանով՝ սեփական շահերով: Ամեն դեպքում, նույնիսկ երբ գործ ունենք ԱԱ նորահայտ սուրյեկտի կողմից ներկայացված առաջարկության հետ, դրանում ներկայացված ԱԱ համակարգի ձևավորման մեթոդը շարադրվածից շատ չի կարող տարբերվել:

Եթե փորձենք անձնավորել ցանկացած առաջարկություն, ապա հարց է ծագում, թե ինչպես այն պետք է ընդունվի ընդհանուրի կողմից: Սա իրենից ենթադրում է առանձին մեթոդ:

Անձը կամ ինքնակազմակերպված համախոհների խումբը նույնպես

գնահատում է ազգային զարգացման իներցիան, ԱԱ գործող համակարգը՝ ազգային նպատակներին բավարարելու տեսակետից (ըստ իրենց պատկերացման):

Եթե այն չի բավարարում՝ անձը կամ ինքնակազմակերպված խումբը կարող են որոշել հանդես գալ որպես ԱԱ սուրյեկտ և **ներկայացնել բարեփոխումների սեփական առաջարկը**:

Առաջարկությունը կարող է ընդունվել գործող ազգային հաստատությունների կողմից և վերածվել արդեն նրանց բարեփոխման ծրագրի: Սակայն կարող է և անմիջապես ընդունվել: Այդ դեպքում նորահայտ սուրյեկտի առջև խնդիր է դրվում **մեծացնել իր ազդեցությունը**, փորձել առաջնորդել ազդեցիկ հասարակական խմբեր:

Եթե ազդեցության աճը չի նպաստում առաջարկության ընդունմանը կամ ընդունվում է մասնակիորեն, որը չի բավարարում սուրյեկտին, նա կարող է որոշել խաղի կանոնների համաձայն գրավել դեկավար դիրքեր բոլոր ազգային հաստատություններում կամ դրանցից առավել ազդեցիկներում:

Այս ճանապարհով էլ անհաջողության հասնելու դեպքում ԱԱ սուրյեկտը իրեն կարող է իրավունք վերապահել շրջանցել խաղի կանոնները, որոնք սահմանված են ազգային հաստատություններում, սակայն դրա համար նրան անհրաժեշտ է ստեղծել այլընտրանքային ազգային հաստատությունները, որոնք եղանակը կիերացնեն ասպարեզից:

Այս քայլերից յուրաքանչյուրում ԱԱ սուրյեկտը հաշվարկում է իր հնարավորությունները: Ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ քայլում նրան մի կարգ ավելի շատ ռեսուրսներ են անհրաժեշտ և ավելի պակաս սահմանափակումներ են անդունում: Ավելին, հենց ինքը սուրյեկտը քայլից քայլ փոխվում է հաջորդ քայլով միավորվելով իր նման այլ սուրյեկտների հետ: Հակառակ դեպքում նրա առաջարկությունը մերժվում է:

Սակայն, եթե որևէ առաջարկություն ընդունվում է և ձևավորվում է ԱԱ նոր համակարգ (քարեփոխվում է գործողը), ապա սահմանվում են այն նոր ինդիկատորները, որոնցով առկա սպառնալիքներին համապատասխանեցված նոր համակարգը պետք է հայտնաբերի ընթացիկ վտանգները (հիմնական սպառնալիքների ընթացիկ դրսւորումները) և հակազդի դրանց:

Վտանգների ինդիկատորները սահմանվում են ըստ ոլորտների և ան-

րաժեշտ է ունենալ դրանց այնպիսի համակարգ, որը հնարավորություն տա բաց չքողնել ոչ մի վտանգ, ճշգրիտ բնութագրել այն և այդ մասին վաղորոր հայտնել:

Այսպիսով, ԱԱ ձևավորված համակարգի գոյության դեպքում, եթե այն ընդհանուր առմանք բավարարում է ազգային սպառնալիքների դեմ պայքարելու տեսանկյունից, քննարկվում է ԱԱ հայեցակարգը: Այդ նպատակով տեղի են ունենում հետևյալ ներդրական քայլերը:

Դրանցից առաջինը տվյալ սերնդի իրատեսական և գործնական նպատակի ծշտումն է նոր սպառնալիքներին հակազդելու լույսի ներքո: Այս դեպքում խնդիրը սերունդի նպատակը հնարավորին չափ ճշգրիտ սահմանելն է: Քանի որ ազգային նպատակը հաստատում է սահմանված, ապա շեղումները կարող են լինել մյուս երեք էլեմենտների գծով՝ գերազահատող և թերագնահատող:

Էլեմենտներ	Ներկա սերնդի շահը	ռեսուրսները	Սահմանափակումները
գերազանցահող շեղումներ	հանուն ազգային առաքելության ներկա սերունդը պատրաստ չեղ այդ աստիճան գրկանքների	այդ ծավալի ռեսուրսներ մորիլիգացնել անհնար է	սահմանափակումները հաշվի չեն առնվել
թերագնատահող շեղումներ	ներկա սերունդը պատրաստ էր ավելին վճարել հանուն ազգային առաքելության	կարելի է մորիլիգացնել ավելի մեծ ռեսուրսներ	ենթադրյալ սահմանափակումներ են ընդունվել

Ներկա սերնդի շահը կարելի է նույնացնել ազգային նպատակի հետ այնքան ժամանակ, քանի դեռ նպատակի իրագործումը տվյալ սերնդից չի պահանջի այնպիսի գին, որը նա չկարողանա վճարել: Չկարողանալ ասելով էլ պետք է հասկանալ ոչ այնքան ֆիզիկական անկարողություն, որքան դաստիարակությամբ և քարոզչական միջավայրով ստեղծված հոգեվիճակ: Ուսուրսները, թվում է, ամենահաշվառելի տարրերն են: Սակայն միշտ առկա են քողարկված ռեսուրսներ, որոնք սովորաբար հաշվարկի մեջ չեն մտնում, սակայն դրսևորվում են որպես ռեսուրս առանձնահա-

տուկ պայմաններում և ունակ են բազմապատկելու դրանք: Դրա օրինակ է մասսայական անձնագործությունը: Սահմանափակումները երբեմն հանդես են գալիս որպես ստերեոտիպեր: Իրադրության արմատական փոփոխությունը, հատկապես մեծ վտանգի առկայությունը ընդունակ են ոչնչացնել շատ այդպիսի սահմանափակումներ:

Վերը նշվածը խոսում է երեք էլեմենտների որոշակի առաձգականության մասին և հնարավորություն է տալիս, որպեսզի ազգային նպատակը ունենա որոշակի ազդեցություն սերունդի նպատակը պայմանավորող էլեմենտների վրա:

ԱԱ համակարգի գործունեության մեթոդի երկրորդ քայլը ազգային սպառնալիքի ընթացիկ արձանագրումն է տարբեր բնագավառների ինդիկատորների միջոցով, որոնք սահմանված են ԱԱ գործող համակարգի կողմից և ընթացքում կարող են բարեփոխվել: Առանձին ռեսուրսների վտանգավոր կրծատումը կամ այլ ազգերի ռեսուրսների վտանգավոր աճը, նրանց գործողությունները, որոնք ակնարկում են նպատակների փոփոխության մասին:

Այս աշխատանքի ընթացքում պետք է ուսումնասիրվեն տվյալ ազգի մասնակցությամբ բոլոր տարածաշրջանային համակցություններում ընթացող փոփոխությունները և դրանցում նրա գլխավոր հակառակորդների, գործակիցների և այլ նշանակալի սուբյեկտների վարքագիծը: Պետք է որոշվեն այդ սուբյեկտների նպատակներում, համակցության մեջ նրանց կշռի, ընթացիկ և հնարավոր առաջիկա փոփոխությունները, ինչպես նաև,

սպասվող բարձր հավանականություն	միջին	առաջնահերթ	հրատապ
սպասվող միջին հավանականություն	ոչ առաջնահերթ	միջին	առաջնահերթ
սպասվող ցածր հավանականություն	ոչ եական	ոչ առաջնահերթ	միջին
	փոքր վտանգավորություն	միջին վտանգավորություն	բարձր վտանգավորություն

թե ինչ նոր հարցերում կարող են հատվել նրանց շահերը տվյալ ազգի շահերի հետ:

Այս փոլուում ԱԱ համակարգը պետք է (համատեղելով ինդիկատորներից ստացված ինֆորմացիան), ապառարկայացնի պրոբլեմը՝ փորձելով այն տեսնել մաքուր վիճակում, այլ ոչ թե իր առանձին դրսնորումներով։ Կարևոր խնդիր է նաև բոլոր վտանգների հավանականության և վտանգավորության աստիճանի որոշումը՝ սահմանելու համար նրանց առաջնահերթությունը։

Եապես նոր սպառնալիքի հայտնաբերումը կարող է ենթադրել ԱԱ համակարգի վերագնահատում՝ դրանց հակագողելու ունակության իմաստով։ Եթե այն անբավարար է գնահատվում, ապա առաջնում է համակարգը բարեփոխելու հարց։ Իսկ եթե այն բավարարում է, ապա անցնում ենք ԱԱ հայեցակարգի ձևավորման մեթոդի հաջորդ քայլին՝ ընթացիկ խնդիրների սահմանմանը։

ԱԱ հայեցակարգում, փաստորեն, տեղ պիտի գտնեն մի շարք հիմնական որոշումներ՝ այս կամ այն վտանգը, ըստ իրենց առաջնահերթության, չեզոքացնելու խնդիրը լուծելու համար, հիմնված հնարավորությունների իրատեսական հաշվարկի վրա։ Ընդ որում, այս որոշումների իրականացնողը տարբեր ազգային հաստատություններ են, որոնք ձևականորեն ինքնուրույն են որոշում իրենց լուծելիք խնդիրները։ Երբ այդ գործը ԱԱ սուբյեկտներից մեկը փորձ է կատարում անել նրանց փոխարեն, ապա խնդիրը սահմանելուց բացի պետք է սահմանի նաև ազգային հաստատություններից յուրաքանչյուրի բաժին խնդիրը։

Ոեսուրսների հիմնական տեսակները գնահատվում են։ Նախ՝ անցյալի համեմատ և ապա՝ խնդիրների հավանական լուծումների ներկայացրած պահանջի համեմատ։ Որպես ոեսուրս է գնահատվում նաև արտաքին նպաստավոր իրադրությունը։

Յուրաքանչյուր հաստատության համար սահմանված խնդիրները պետք է համապատասխանեն ԱԱ համակարգի ընդհանուր ռազմավարությանը, այլ ոչ թե դրանցում որդեգրվի այլ ռազմավարություն՝ հաշվարկված տվյալ հաստատության ռեսուրսների հաշվարկի վրա։

Մեթոդի հերթական քայլերում, ազգային հաստատությունների համար, սահմանված խնդիրների համար առաջարկվում են լուծման ընդունելի տարբերակներ և ենթարկվում համեմատական գնահատականի։ Սրանց

ալգորիթմները ընդիանուր առմամբ կարող են համընկնել ԱԱ համակարգում հաստատությունների համար կառուցվածքների որոշման ալգորիթմին։ Լուծումների տարբերակները այս կամ այն հաջողությամբ առաջարկելով խնդիրի լուծումներ, պետք է համեմատվեն արդյունավետության, ժամկետների, ռիսկայնության, հարակից խնդիրներ լուծելու, այլ կողմնակի արդյունքներ ունենալու և այլ տեսանկյուններից։

Մեթոդի վերջին քայլը *հայեցակարգը, որպես միասնական քաղաքականություն, ձևակերպելն է*։ Այն ներառում է առանձին հաստատությունների համար սահմանված խնդիրների համատեղումը և ընդհանուր համակարգային քաղաքականության համաձայնեցումը։

Այս մեթոդներով ձևավորված ԱԱ համակարգը կարող է ԱԱ սուբյեկտների (հատկապես պետության) կողմից կազմվել որպես միասնական փաստաթուղթ, որը ներառում է ազգային նպատակը, ազգային վտանգները՝ ըստ առաջնահերթության, դրանք չեզոքացնելու նպատակված ռազմավարական խնդիրները և դրանց լուծումների ռազմավարությունը։ Բացի այդ, այն կարող է սահմանել լուծման պատասխանատվություն։ Միաժամանակ, չկա որևէ պարտադրանք այդ փաստաթուղթը անբողջությամբ և իրապարակայնորեն ունենալու համար։

ԱԱ հայեցակարգը՝ և որպես քաղաքականություն, և որպես փաստաթուղթ, ենթակա է ընթացիկ վերանայման ամենատարբեր մակարդակներում։

## ՀԱՅԱՍՏԱՆԸ (Վերջաբանի փոխարեւն)

Յայ ժողովրդի պատմությունը հարուստ է եղել վերելքներով և անկումներով: Հազարամյակներ առաջ հայերին հարևան ազգերից շատերը այսօր ջնջված են աշխարհի երեսից: Ու թեև մեծ են նաև մեր կորուստները, սակայն հայ ազգը ապրում է մնալով տարածաշրջանային քիչ թե շատ ազդեցիկ գործոն: Դրանում, իհարկե, պետք է փնտրել նաև անվտանգության ազգային համակարգի դերակատարությունը:

Անկախության կորստից հետո Քաղկեդոնի ժողովի առիթով Յայոց Եկեղեցին կատարեց մի քայլ, որը անգնահատելի է ԱԱ տեսակետից: Աստվածաբանական վեճում հակադրվեց Բյուզանդական կամ ողջ արևմտյան Եկեղեցուն, մասամբ նաև մնացյալ միաբնակ Եկեղեցիներին: Մինչ այդ, քրիստոնեությամբ հակադրված լինելով զրադաշտական Պարսկաստանին և ունենալով սեփական այրութեն, հայ ժողովուրդը առանց պետության, երկու կամ երեք կայսրությունների միջև բաժանված հայրենիքով, կարողացավ դարեր շարունակ պահպանել և զարգացնել իր կրոնա-լեզվա-մշակութային ինքնատիպությունը:

Թրքակեզրու քոչվորների ներխուժումով ծննվեց թուրքական վտանգը, որը պանթուրանիստական ծրագրերի ի հայտ գալով ձեռք բերելով նոր որակ, դեռ երկար ժամանակ շարունակելու է մնալ մեր ազգային անվտանգության առանցքային հարցը: XIX դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունում հայերի անվտանգությունը ապահովելու հրամայականից ձևավորվեց ազգային հեղափոխական շարժումը, որը ծնեց Եկեղեցուց հետո ԱԱ առաջին կազմակերպված հասարակական սուբյեկտները՝ հեղափոխական կազմակերպությունների տեսքով:

Թշնամիների համեմատ իր անվտանգությունը ապահովելու խղճուկ ռեսուլսներ ունեցող հայ ժողովրդի հնարավորությունները մեծացնելու համար հսրայել Օրին և ուրիշներ փորձեցին ապահովել դաշնակիցներ և կազմակերպեցին դեսպանություններ դեպի քրիստոնյա Եվրոպական պետություններ: Ռուսաստանի առաջխաղացումը և Արևելյան Յայաստանի անցումը նրան, իհարկե, գործնականում ջնջեց կրոնական տարբերության տված առավելությունները, մեծացրեց ձուլման և արտագաղ-

թի հնարավորությունները, սակայն մշակութային զարդոնքի և զարգացման նոր հնարավորություններ նույնպես տվեց: Ռուսական ազդեցությունից ազատվելու ցանկությունը հայ ժողովրդի մոտ ի հայտ եկավ միայն խորհրդայնացումից հետո և այսօր էլ շարունակվում է վիճարկվել:

Յայաստանի առաջին հանրապետությունը ԱԱ առաջին պետական սուբյեկտն էր, որը որպես այդպիսին գործել է խիստ ինտենսիվ, հնարավոր է, նաև՝ սխալներով: Նրա գլխավոր արդյունքը արդեն մի քանի տասնամյակ ազգային պետականության պահպանումն է և հայրենիքի մի կարևոր հատվածի հայացումը: Խորհրդային հանրապետությունը իր նվազ հնարավորություններով հանդերձ կարողացավ ապահովել հոգևոր՝ մշակութային վերելք, տալ սերունդներին ազգային դաստիարակություն, և հզոր հիմք ստեղծեց անկախ պետության կայացման համար:

Նորանկախ հանրապետության առջև նորից կանգնեց ԱԱ խնդիրը իր ողջ սրությամբ: ԱԱ ապահովման իմաստով նրա կարծատև գործունեության արդյունքները դեռ վաղ է գնահատել, սակայն առաջխաղացումը Արցախյան հարցում առաջին անառարկելի ներդրումն է: Եվ սա Յայաստանի ազգային անվտանգության մասին խիստ հակասական պատկերացումների և դրանց համապատասխանող հակասական գործողությունների պայմաններում:

Դառնալով ազգերի համակցության մի կարգ ավելի բարձր (պետականակերտ ազգ) սուբյեկտ, հայ ժողովուրդը որպես օբյեկտիվ հանգամանքներ ընդունեց հզոր ազգային-պետական սուբյեկտների սահմանած խաղի կանոնները: Աստիճանաբար գիտակցելով դրանց մի մասի վնասակար կողմները, հասկացավ, որ բացի հայ-թուրքական հարաբերությունների հարցից, գոյություն ունեն ԱԱ այլ և ոչ պակաս էական վտանգներ նույնպես:

Նոր քաղաքական ուժերը արդեն 1989-ից շտապեցին պատասխանել գլխավոր հայ-թուրքական հարաբերությունների հարցին. ...չկան մշտական թշնամիներ և մշտական բարեկամներ..., ...մենք կողմնակից ենք Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերությունների հաստատմանը..., Թուրքիայի կողմից Յայաստանի բլոկադան տարեկան ...միլիոնի վնաս է հասցնում մեր տնտեսությանը...: Այսպիսով, նորովի վերակենդանացավ անցյալից ծանոթ թուրքական շրջապատի հետ

համերաշխ ապրելով անվտանգության խնդիրը լուծելու գիծը<sup>7</sup>:

1989-ին հայ-քուրքական բարեկամության կոչք շատ վաստ կընդունվեր՝ ժողովուրդը տեսնում էր երկու թշնամի՝ ազերի-քուրքը և կոնունիստական ռեժիմը: Սակայն անկախություն ուզելու համար պետք էր նրան ազատել Թուրքիայի հզորության նկատմամբ տածած վախի բարդությունը: Անկախությունից հետո հայ-քուրքական հարցը վերածվեց տնտեսական շրջափակման և դիվանագիտական հարաբերություններ հաստատելու նախապայմանների հարցի: Այսինքն, դրա լուծումը դիտվում է որպես անցում թշնամանքից համագործակցության:

Որքան էլ որ տարօրինակ է, սակայն հայ-քուրքական հաշտեցման այս քարոզչությունը հնչում էր Ղարաբաղյան շարժման գործիչների շուրջերից, այն ժամանակ, երբ հայկական բանակը ազատում էր տարածքներ, որոնք Թուրքիայի պահանջով էին ժամանակին տրվել Ադրբեյջանին: Այս հակասությունը ուներ իր բացատրությունը՝ ժողովրդական շարժումը (որն անհրաժեշտ էր ԽՍՀՄ վիլուգման համար) ուներ նաև իր ներքին տրամաբանությունը, որը կողավորված էր ազգային շահի և նպատակի մասին անցյալի պատկերացումներում, և իրականացնում էր դրանք: Իսկ որպեսզի նոր գաղափարների քարոզչությունը արդյունքի հասներ, ժամանակ էր պետք:

Նոր սերունդը տեսնելով անկախացման ցնցումի և պատերազմի բազում դժվարությունները, այլևս պատրաստ չէր հավելալ գին վճարելու հանուն ազգային իրավունքների: Ավելի հեշտությամբ նա պատրաստ էր իրաժարվելու այդ իրավունքներից՝ կարևորելով իր անձնական բարեկեցությունը, շուկայական միջակցությունում իր հաջողությունը: Ազգային իրավունքներից իրաժարվելու գնով շրջապատի հետ համերաշխ ապրելու այս գիծը համապատասխանում է նաև նոր քաղաքական վերնախավի շահերին, քանի որ զգալիորեն թերևացնում է նրա պատասխանատվության չափը:

Ի հակադրություն շրջապատի հետ համերաշխ զարգանալու գծին, 1988-ից սկսած հայ ժողովուրդը փաստացիորեն որդեգրեց նույն այդ քուրքական շրջապատին հակադրվելու կամ նրանից պաշտպանվելու ավանդական համարվող գիծը նույնպես՝ ազատագրելով Արցախը և չմոռանալով Եղեռնը: Սակայն պատերազմի հայրական ավարտից հետո, ոռւսա-

կան ներկայության պայմաններում, քուրքական վտանգի գիտակցությունը զգալիորեն թուլացավ: Մյուս կողմից, թեև պահպանվում է ունեցածը պաշտպանելու վճռականությունը, սակայն ռեսուրսների պակասը հեռու է պահում նոր իրավունքների պահանջներ դնելուց: Ժամանակի ընթացքում քուրքական վտանգի ավելի իրատեսական գնահատումը, թերևս, այս գծի կողմանակիցներին կստիպի վերանայել և արմատականացնել ազգային նպատակը:

Այս երկու ռազմավարությունների միջև ընտրությունն էլ այսօր հանդիսանում է մեր ԱԱ գլխավոր հարցերից մեկը: Մյուս հարցը, թերևս, Հայաստանի զարգացումն է, կամ ավելի ճիշտ, հետամնացության վերացման ուղղու ընտրությունը: Այս հարցում առկա կարծիքների բազմազանությունը նույնպես կարելի է խմբավորել երկու ուղղությունների մեջ՝ տնտեսական կապերի ազատականացման և տարածաշրջանային ինտեգրման (1), և ներքին ռեսուրսների կարևորման (2): Ընդ որում՝ առաջինը համընկնում է հարևանների հետ համերաշխ ապրելու, իսկ երկրորդը՝ միջավայրը թշնամական համարող և ի հեճուկս նրան զարգանալու գծին:

Փորձենք տալ այս ռազմավարությունների համեմատական գնահատականը այսօրվա պայմաններում:

Հայ-քուրքական (հասկանում ենք Թուրքիա և Ադրբեյջան) հարաբերությունների խնդիրը ծագել էր այն պատճառով, որ երկու ազգերը նույն տարածքները դիտարկում են որպես իրենց հայրենիք, հետևաբար համարում են իրենց իրավունքը, և ձգտում են պաշտպանել այն կամ ազատագրել: Միաժամանակ, և մեր օրերում հատկապես, նրանք կարևորում են այդ տարածքները իրենց զարգացման տեսանկյունից:

Թուրքերի համար զարգացումը նրանց տարածաշրջանային դերի և քաղաքական կշռի մեծացումն է, ինչը փոխկապակցված է թե տնտեսական զարգացման և թե մշակութային ազդեցության տարածման հետ: Թուրքիան թուրքալեզու երկրներին առաջնորդելու և ինտեգրելու մեջ հնարավորություններ ունի: Ադրբեյջանը այդ առաջնորդի հետ որոշակի հույսեր է կապում իր զարգացման հարցերում: Ինտեգրման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու գործում Թուրքիային խանգարում է Հայաստանը, թե իր ճանաչված և թե չճանաչված սահմաններով և հավակնություններով:

Հայերի համար, եթե մի կողմ դնենք պատմական արդարությունը վերականգնելու հարցը, ավելի շուտ դրված է զարգացման խոչընդուտները վե-

7 Տե՛ս նաեւ Լ. Տեր-Պետրոսյանի «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն» հոդվածը

րացնելու խնդիր: Կենսական անվտանգ տարածքի և հաղորդակցությունների պակասից բացի, հայերը գիտակցված կամ անգիտակից զարգացման խոչընդոտ են դիտում նաև թուրքերի կամ ավելի ծիշտ թրքական ավելի «ցածր», բայց «ագրեսիվ» մշակույթի հարևանությունը: Վտանգը ավելի մեծ է գնահատվում տնտեսական պոտենցիալների անհամեմատելիության պատճառով:

Առաջին գժի կողմնակիցները առաջարկում են տարածաշրջանային խաղաղության հաստատման և տնտեսական ինտեգրացիայի բոլոր խոչընդոտները (այդ թվում սահմանային, մաքսային, կոմունիկացիոն, օրենսդրական) վերացնելու միջոցով ազգային տնտեսությունը տեղափորել տարածաշրջանային շուկայում: Այս դեպքում ենթադրվում է, որ Հայաստանում կիրականացվեն ներդրումներ, կպակասեն առևտրական և տրանսպորտային ծախսերը, ամբողջությամբ կրեալիզացվի տնտեսության ներուժը և համեմատական առավելությունները: Եվ քանի որ «շնորհքով ազգ ենք»...: Այս գիծը լիովին տեղավորվում է գլոբալացման և համաշխարհային տնտեսական հաստատությունների ազատական գաղափարախոսության շրջանակներում և վայելում է նրանց գործնական աջակցությունը:

Երկրորդ գժի կողմնակիցները հանդես են գալիս քննադատողների դերում և ուշադրություն են դարձնում այն հանգամանքի վրա, որ այսօր տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիա Հայաստանի համար առաջին հերթին նշանակում է թուրքական կապիտալի ներխուժում և նրա կողմից հումքային և աշխատանքային ռեսուրսների ամբողջական շահագործում: Բնակչության (հատկապես որակյալ աշխատուժի, որի կարիքը թուրքական տնտեսությունը չունի) արտահոսքի աճի, կրթության նկատմամբ պահանջարկի կրծատման պայմաններում թրքական հոգևոր մշակության արժեքների էքսպանսիան ենթադրվում է, որ կործանարար հետևանքներ կունենա և Հայաստանը կդադարի հայ ազգի գեներացիայի համար արեալ ծառայելուց: Այլ կերպ ասած Հայաստանը այլևս չի լինի հայերի հայրենիքը:

Այս ինաստով, իսկապես, անհեթեթ են թվում արցախյան հաղթանակը և ցեղասպանության հիշատակումները: Սահմանների բացությունը, առևտրի շահավետությունը, բնակչության օբյեկտիվ (շուկայական պահանջներով թելադրված) միգրացիոն գործընթացները անհմաստ են դարձ-

նում տարածքային վեճերը: Այսինքն, առաջին գժի կողմնակիցները այսօր իրենց նպատակը սահմանելիս նրա տարրերը գնահատում են այսպես.

1. Ազգային հատուկ նպատակ չկա կամ բոլոր ազգերի նպատակը մեկն է մարդկանց երջանկությունը: Սրանով հանդերձ, նրանք ազգային անվտանգություն ասելով հասկանում են ազգի առանձին անդամների անվտանգություն և ազգային ինքնատիպության պահպաննան փոխարեն նպատակ են դիտարկում զարգացումը (տնտեսական իմաստով առաջին հերթին)
2. Ներկա սերունդը հույս չի կապում ազգային ջանքերի հետ և ազատություն է ուզում իր սոցիալական հարցերը ինքնուրույն և արագ լուծելու համար:
3. Ուսուրամերը լինում են միայն տնտեսական և մեզ մոտ խիստ սահմանափակ են:
4. Ժողովրդավարության, մարդու իրավունքների, ազգերի համակցության կանոնների (հզոր սուբյեկտների կողմից սահմանված) միջազգային ստանդարտները Հայաստանի համար պարտադիր են: Չի կարելի պահանջել մեծ զոհողություն սերունդներից հանուն ազգային իրացիոնալ նպատակների:

Երկրորդ գժի կողմնակիցները ներկա սերունդին առաջարկում են նպատակը սահմանելիս նրա էլեմենտները գնահատել այսպես.

1. Ազգային նպատակը կամ առաքելությունը հայկական հոգևոր-մշակութային ինքնատիպության և արժեքային համակարգի պահպաննամբ և զարգացմամբ աշխարհը հարստացնելն է:

2. Ներկա սերունդը, մարդիկ իրենց մաշկի վրա կամ համապատասխան մթնոլորտում օգալով ազգային միջավայրի կորստի վտանգը, և դրա բացասական ազրեցության չափը իրենց ընտանիքների վրա, պատրաստ են լինելու դիմադրելու՝ գնալով ավելի մեծ զոհողությունների:

3. Վտանգի մեծությունը թույլ է տալիս անտեսել բազում սահմանափակումներ: Մարդու իրավունքները և միջազգային կանոնները գերակա չեն ազգի իրավունքների նկատմամբ:

4. ԱԱ ապահովելու բարոյական և գաղափարախոսական ռեսուրսները կարող են ստեղծել այնպիսի արժեքային և կազմակերպական համակարգ, որը ազգի մարդկային ռեսուրսը էապես կուտեղացնի:

Այլ կերպ ասած, նրանք գտնում են, որ հայ ազգը նպատակի և խնդրի ճիշտ սահմաննան դեպքում ունակ է դիմանալ ազգերի մրցակցությանը՝ պահպանելով ազգային ինքնատիպությունը: Ավելին, հենց պայմանների բարդությունն է, որ ապահովում է զարգացման ռազմել արագ տեմպեր:

Այս տեսակետի առավել ծայրահեղ դրսերումն է այն կարծիքը, որ եթե ազգը դատապարտված է ձուլվելու և վերանալու, ապա հանուն դրանից խուսափելու բույլ հույսի կարելի է գնալ անսահման զոհողությունների՝ այսինքն պետք է պայքարել մինչև վերջ:

Անկախ նոր-հարմարվողական և ավանդական-պաշտպանական այս գծերի ճիշտ կամ սխալ լինելուց, դրանցից երկրորդը հստակորեն սահմանված է որպես ԱԱ խնդիր և պարունակում է վերջինիս լուծման առաջարկ, որի իրատեսական լինելն է, որ վիճարկվում է: Իսկ առաջինը ԱԱ խնդիր չի դնում, քանի որ թերագնահատում է գոյության դեմ ուղղված վտանգը և անվտանգության օբյեկտը ազգային մակարդակից իջեցնում է պետության և քաղաքացիների մակարդակին: Եթևարար, հենց երկրորդ գիծն է, որ իրականում կարևորում է ԱԱ համակարգի գոյությունը, նրան վերապահում առաջնային դերակատարություն՝ բոլոր մակարդակներում որոշումների կայացման ժամանակ և փորձում քայլեր կատարել դրա հաստատման ուղղությամբ: Նույն ժամանակ նրանց ընդդիմախոսները, եթե նույնիսկ խոսում են ԱԱ մասին, ապա նկատի են ունենում կամ գլորալ անվտանգության համակարգ, որը չխանգարի ազատական տնտեսությունների միաձուլմանը տարածաշրջանային տնտեսության հետ, կամ էլ պետության ներքին կայունության պահպանումը, որը անհրաժեշտ է զարգացման համար:

Այս հակադիր ուղղությունների միջևն է, որ հայ ազգը պետք է կատարի իր ընտրությունն այսօր: Ընտրության հարցը Հայաստանում դրված է ինչպես հանրապետության, այնպես էլ հասարակական- քաղաքական ուժերի և անհատ քաղաքացիների առաջ: Նման ընտրության առջև են կանգնած նաև սփյուռքահայերը և նրանց հաստատությունները, այնքանով, որքանով գիտակցում են իրենց ազգային պատկանելությունը:

Հայաստանի զարգացման իներցիան, միասնական ազգային նպատակի և ԱԱ ամբողջական համակարգի բացակայության պատճառով, ներկայումն համապատասխանում է հարմարվողական գծին: Դրա պատճառը նրա նպատակային վեկտորի տիրապետությունը չէ հայկական գիտակցու-

թյան մեջ, այլ առարկայական պայմանները, որոնք որոշիչ են, երբ նրանց դեմ ոչինչ չի ծեռնարկվում: Յակառակ (շրջապատին հակադրվելով զարգանալու) վեկտորին է, որ անհրաժեշտ է տիրապետող դառնալ, որպեսզի հաստատվի ԱԱ իրական համակարգ, որը ունակ կլինի փոխելու զարգացման իներցիայի ուղղությունը: Յաշվի առնելով վեկտորների հակադիր բնույթը, իներցիայի ուղղության հավանական փոփոխությունը հեղափոխական կարող էր համարվել:

Ըստ ազգային ինքնատիպությունը պաշտպանել փորձող այս «հեղափոխական» վեկտորի կողմանակիցների, Հայաստանի ազատական զարգացման իներցիան անխուսափելիորեն բերելու է ազգային աղետի:

Որպես այդպիսին բնորոշվում է:

- Կայ բնակչության բազմապատիկ կրծատումը իր պատմական հայրենիքում, ինչը ազգային հոգևոր-մշակութային ինքնության վերարտադրություն այլևս չի կարող ապահովել:

- Քաղաքական և տնտեսական ինքնուրույնության կորուստը ազգային զարգացման ռեսուրսների կրծատման արդյունքում: Որպես հետևանք՝ հայ ազգի հեռանալը համաշխարհային քաղաքականությունից:

- Զարկադրված ինտեգրացումը թուրքական տնտեսական և մշակութային միջավայրին, թուրքական դրամագլուխի կողմից հայկական շուկայի շահագործումը:

- Երկրի հետամացությունը հաղթահարելու հեռանկարների բացակայությունը, ինչի արդյունքում անհատական զարգացման ձգտող շնորհականները պարզապես հեռանալու են գավառականի վերածված ազգային միջավայրից:

- Թուրքական և հայկական մշակութային բախումը: Արդյունքում՝ հայկական կողմի համար անբարենպաստ պայմաններում, ծայրահեղ դրսերումներով կողմից կատարված անվերջանալի շարքը:

Այս համատեքստում որպես Հայաստանի արտաքին վտանգներ են դիտվում:

- Հայկական և թուրքական ազգային շահերի խաչաձևումը, թուրքական ինտեգրացիայի տեսդենցից բխող թուրքիայի հավակնությունները, հայերին անհրաժեշտ կենսական տարածքների նկատմամբ թուրքիայի և թուրքերի քանակապես ծնշող մշակութային հարևանությունը ընդհանրապես:

- Աշխարհի ազատականացման և համաշխարհայնացման միտումները,

որոնք անուղղակիորեն հանգեցնում են զարգացած երկրների էլ ավելի հարստացմանը, իսկ հետամնացների աղքատացմանը, արևմտյան արժեքային եքսպանսիային: Մշաբեռ աշխարհակարգը և «միակ բների» շահերի խաչաձևումը հայկական ազգային շահերի հետ, այդ բների ստանձնած դատավորի կեցվածքը՝ հիմնված բացառապես ուժի և երկակի չափանիշների կիրառման վրա:

• Վրաստանի, որպես ներքնապես անկայուն տարածքի և արհեստածին բազմազգ պետության, գործոնը, ինչը ստիպում է վրացիներին որպես ազգային գլխավոր վտանգ դիտարկել Ռուսաստանի ընդարձակման ձգտումը դեպի Հարավային Կովկաս: Սա Վրաստանն այսօր վերածում է մի արևմտամետ երկրի, որը թուրքիային դիտում է որպես դաշնակից, իսկ իր ժողովուրդներին՝ որպես ռուսական գործակալներ:

• Ռուսաստանի հետ ռազմավարական դաշնակցության անհուսալիությունը, քանի որ հայ-ռուսական շահերի ընդհանրությունը այսօր ձևավորվում է ռուսների հակարենութք (հակամերիկյան) և Անդրկովկասը իրենց ազդեցության գոտի դիտելու միտունների հիմնան վրա, որոնք, սակայն, մի կողմից էապես կարող են թուլանալ կամ կորչել նրանց թուլացման շրջանում, քայլ երթեմն նաև ուժեղացման շրջանում, երբ Ասրբեջանը նույնպես հայտնվի Ռուսաստանի ազդեցության գոտում, որի գինը կարող են լինել հայկական իրավունքները:

• Իրամի և այլ հավանական աշխարհաքաղաքական դաշնակիցների թույլ ներկայությունը տարածաշրջանում:

Վերոհիշյալ արտաքին վտանգների կողքին հիմնական ներքին վտանգը ներքին ռեսուրսների ոչ ամբողջական օգտագործումն է ԱԱ խնդիրների լուծման և հեռանկարային զարգացումն ապահովելու ընթացքում: Ռեսուրսների ամբողջական օգտագործումը երկիմաստ խնդիր է: Ներ իմաստով խոսքը տվյալ պահին առկա ֆինանսական, նյութատեխնիկական, բնական, մարդկային մտավոր և ֆիզիկական, կազմակերպչական և այլ, իսկապես խիստ անբավարար, ռեսուրսների ուղղակի օգտագործման մասին է, ինչը խնդիրը տեղափորում է կառավարման հարթությունում: Լայն իմաստով խոսքը կարող է գնալ զանազան սահմանափակումների վերանայման և անտեսման, ազգային ուժականության վերարժերման և այն առավելացույնս օգտագործելու միջոցով մոտակա և հեռավոր ապագայում ռեսուրսների բազմապատկման հնարավորության մասին:

Այսինքն, ԱԱ ապահովելու հայ ժողովրդի միակ հնարավոր ռազմավարությունը «քրոյլի պատերազմն է», երբ կազմակերպված նահանջին զուգահեռ տեղի է ռեսուրսների կողմից առկա ռեսուրսների հավաքագրում, նոր ռեսուրսների կուտակում, իսկ մյուս կողմից փորձ է կատարվում արդյունքներ ստանալ «քրոյլատրված» ռեսուրսների օգտագործմանը: Նյութական ռեսուրսների ակնհայտ պակասի պատճառով հասկանալիորեն առաջին պլան են մղվում հոգևոր, դաստիարակչական, կազմակերպչական ռեսուրսները: Կազմակերպչական ռեսուրսի մեջ է մտնում նաև կուռ և արդյունավետ ԱԱ համակարգի առկայությունը, որը ունակ կլինի անվտանգության պայմանակարգ սահմանել բոլոր ազգային հաստատությունների համար:

Ո՞վ և ինչպե՞ս պետք է ձևավորի այդպիսի ԱԱ համակարգ:

Բոլոր նրանք, ովքեր ազգային սպառնալիքների ամբողջությունը չեն տեսնում, կամ տեսնելուց հետո սեփական շահերից պակաս են կարևորում դրանք, կամ կարևորում են, սակայն բավարար ռեսուրսներ չեն տեսնում դրանց հակազդելու համար, չեն կարող ունենալ ԱԱ համակարգ ձևավորելու նպատակ: Այս պայմաններից ցանկացածը լրացնելու դեպքում նրանք անմիջապես վերածվում են հարմարվողական և անգործությունը արդարացնող վեկտորի քարոզիչների և ԱԱ համակարգի գոյության հակառակորդների նույնիսկ երբ պատասխանատվություններ ունեն ԱԱ ձևական համակարգում, պետության մեջ և այլ հաստատություններում:

ԱԱ համակարգ հաստատելու, պետությունը, տնտեսությունը, կրթությունը, ընտանիքը, Սփյուռքը դրան համապատասխան կազմակերպելու փորձերի հաջողությունը կախված է բացառապես «հեղափոխական», իսկ ավելի ճիշտ ԱԱ կարևորությունների գծի կողմնակիցների սեփական հնարավորություններից, ռեսուրսներից, որոնք անհրաժեշտ են նրանց հայ ազգային այս հաստատություններում ազդեցիկ դիրքեր գրադեցնելու համար, այդ ճանապարհին սահմանափակումներից ազատվելու ունակությունից:

ԱԱ մասին վերջին շրջանում ակտիվացած շահագրգիռ քննարկումները ամենատարբեր մակարդակներում փաստում են, որ խնդիրը սկսել է գիտակցվել ողջ սրությամբ և վաղ թե ուշ կիանգեցնի ԱԱ համակարգի կայացմանը: Մեր աշխատությունը այս գործընթացին աջակցելու փորձ է:

## ԲՈՎԱՌՈՒԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ (ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ) .....	3
ՕԲՅԵԿՏԸ .....	9
ՍՈՒԲՅԵԿՏԸ .....	18
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ .....	27
ՍԿԶԲՈՒՄՔՆԵՐԸ .....	33
ԱԱ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱ ՆԵՐՁԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ .....	42
ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ .....	50
ԱԱ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՄԵՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	61
ՀԱՅԱՍՏԱՆԸ (ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ) .....	72

<sup>7</sup> Shu` և այլ L. Shk-Պետրոսյանի «Պատերա՞զմ, թէ խաղաղություն»  
հոդվածը:

## «ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Ժամանակակից աշխարհում սեփական ներուժի առավելագույն կենտրոնացումը, տարածաշրջանային և համաշխարհային հավասարակշռության համակարգերում կուտակված էներգիայի ռացիոնալ և նպատակային կիրառումը դառնում են ազգերի և պետությունների առջև ծառացած կենսական հիմնահարցեր:

Հայաստանն այսօր միջազգային ասպարեզում մրցունակ չէ բնական ռեսուրսների, տնտեսական ընդիհանուր վիճակի, ֆինանսական համարդված կարողականության չափորոշիչներով։ Փոխարենը հայկական գործոնն ուշագրավ և շահավետ դիրք է գրավում մտավոր ներուժի կարողականության կուտակման իմաստով։ Մտավոր ներուժի կուտակման և ռացիոնալ կիրառման հիմնահարցը բանալի է հայ ժողովրդի՝ ժամանակակից աշխարհում սեփական ամբողջական ներուժի գնահատման, տեղի ու դերի, հնարավորությունների հստակեցման համար։ Համահայկական կազմակերպված մտավոր ներուժը կոչված է դառնալու այն հզոր լծակը, որը Հայաստանին հնարավորություն կտա տեղ գրավել հանաշխարհային գործընթացների վրա ազդելու կարողականություն ունեցող երկրների թվում։

Այսպիսով անհրաժեշտություն է դառնում հայկական շարունակականության մոդելի նշակումը, որը հայ ժողովրդի ամբողջական պոտենցիալի պահպանման ու զարգացման ծրագիրն է և իր առանձին բաղադրիչներով օրգանապես շաղկապված ամբողջություն է։ Իրավիճակը և առաջիկա զարգացումների հրամայականն առաջնահերթ են դարձնում հիշյալ հիմնահարցը իրականացնելու կոչված, սկզբունքային առումով որակապես նոր միավորի ստեղծման անհրաժեշտությունը։ Այդպիսին կարող է դառնալ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, որն իրենից ներկայացնելու է գիտական, մշակութային, հոգևոր ներուժի կազմակերպման, համադրման, կառավարման և գործնական կիրառման մեխանիզմների մշակման կենտրոն։

Համաշխարհային փորձն ունի նմանատիպ կառույցների արդյունավետ աշխատանքի բազմաթիվ օրինակներ։ Քաղաքակրթական մրցակցության

արդի փուլ զարգացած շատ երկրներ (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ԳՖՀ, ճապոնիա, Իրան, Չինաստան) թևակրիսում են տասնամյակների, երբեմն հարյուրամյակների պատմություն ունեցող այդպիսի հաստատություններով: Այս կենտրոնների վրա են դրվում պետության մտավոր ներուժի կազմակերպման, նորագույն գիտական մշակումների օգտագործման, գիտական կառավարման տեխնոլոգիաների մշակման, պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում դրանց կիրառմամբ, կադրերի պատրաստման և վերապատրաստման գործառույթները:

Այսպիսի հաստատությունների ձևավորման և արդյունավետ գործունեության հարուստ փորձ ունի նաև հայ ժողովուրդը: Պատմական շրջադարձային փուլերում, երբ առավել ցայտուն, երբեմն ավերիչ էին դրսնորվում քաղաքակրթությունների շիման և փոխազդեցությունների գործընթացները, ի հայտ եկան Նորավանքի, Սանահինի, Գլաձորի, Տաթևի, Սսի համալսարանները՝ որպես մտավոր ներուժի պահպանման, հոգևոր և մշակութային արժեքների հավաքման, կուտակման և վերարտադրման ազգային գենոֆոնդի հետագա զարգացումն ապահովող կենտրոններ:

Դիմնադրամի հիմնական առաքելությունն է լինելու դառնալ այն փորձարարական կենտրոնը, որտեղից հայ իրականության ամենատարբեր ոլորտներ պետք է ձգվեն հայոց շարունակականությունն ապահովող ծրագրերն ու դրանց իրականացման մեխանիզմները: Այն միաժամանակ վեր է ածվելու միջազգային գիտահետազոտական և մտավոր կենտրոնի, որն ունակ կլինի արժանիորեն ներկայացնել մեր ժողովրդին համաշխարհային համրությանը, դառնալով քաղաքակրթությունների լավագույն ձեռքբերուների համադրման և երկխոսության վայր:

Դամալսարամի դասախոսներն ու սաները միջնադարի հայ ուսուցչապետերի օրինակով կդառնան հայկական ազգային նոր դպրոցի հիմնադիրներ, որոնք անկախ պետականության պայմաններում կլուծեն գլոբալ ներազեցություններով թելադրված նոր խնդիրներ և առաջադրանքներ:

## ԴԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՄԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Դիմնադրամն իրականացնելու է հետևյալ հիմնական գործառույթները.

- գիտական մտքի համախմբում,
- գիտահետազոտական գործունեություն,

- ռազմավարական հետազոտությունների իրականացում,
- մասնագետների պատրաստում և վերապատրաստում, կրթամեթոդական նոր մեխանիզմների մշակում և տարածում, տեղեկատվական ցանցի ստեղծում:

### ա) Գիտական մտքի համախմբումը ներառում է հետևյալ խնդիրները՝

- համապատասխան մթնոլորտի ձևավորում, հանրապետության և արտերկրի առաջատար մտավիրականների համախմբում, գիտական նորագույն մշակումների փոխանակում,
- գիտական կոնֆերանսներ, խորհրդակցություններ, քննարկումներ,
- գիտա-քաղաքական հետազոտություններ:

### բ) Գիտահետազոտական հայեցակարգային աշխատանքներ՝

- պետության նպատակների և իրական հնարավորությունների գնահատում, զարգացման մոդելների ձևավորում,
- գործադաշտերի և գործամիջոցների հստակեցում,
- հայ ժողովրդի մարդկային, նյութական և հոգևոր կարողության «գույքագրում» չորս միջոցներով՝ մարդկային, կազմակերպական, ֆինանսական և հոգևոր (մշակութային, քաղաքակրթական),
- հասարակության միասնության մոդելի կառուցում, որի հիմքում կընկնեն տարբեր գաղափարական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային ուղղվածություն ունեցող միավորների գործունեության համակարգումը և հասարակական համաձայնության առկա հիմնախնդիրների հստակեցումը,

- հետազոտությունների արդյունքների կիրառման մեխանիզմների ծցուում,
- կոնկրետ արդյունքների գործադրում առաջարկությունների ներկայացում:

### գ) Ռազմավարական հետազոտությունների իրականացում՝

- ռազմավարության և առաջնահերթությունների ծցուում,
- կոնկրետ նպատակներ հետապնդող ծրագրերի մշակում,
- տարբեր ոլորտներում գործող ծրագրերի և նրանց գործադրման ժամանակացույցերի համադրման մեխանիզմների ձևավորում,
- մարտավարական նշանակության խնդիրների առանձնացում և դա-

սակարգում,

• յուրաքանչյուր ծրագրի ենթատեքստում հնարավոր համախոհ և հակադիր ուժերի տեղաբաշխման քարտեզի կազմում և գործունեության մեջ խանդզների ճշգրտում,

• պետական անվտանգության բոլոր չափումներից բխող հատուկ ծրագրերի մշակում, վերջինիս արդյունքում պետական պատվերի մշակում և իրականացնան մեխանիզմների ճշգրտում,

• պետական կառավարման օպտիմալ հանակարգերի մոդելավորում:

#### Դ) Կրթամեթոդական աշխատանքներ և տեղեկատվական ցանցի ստեղծում

• հիմնադրամի իրականացրած հետազոտությունների հիման վրա մեթոդաբանական աշխատանքների իրականացում,

• դասախոսների և ուսանողների վարժանքի (training) ծրագրերի իրականացում,

• կրթական նոր մեխանիզմների մշակում և տարածում գիտակրթական հաստատություններում,

• տարբեր ոլորտների մասնագիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում,

• տեղեկատվական-քարոզչական ցանցի հայեցակարգի մշակում,

• քարոզչական համադրման մեխանիզմների ձևավորում,

• համալսարանի իրականացրած աշխատանքների մատուցում հանրությանը,

• հանրությանը մատչելի գրադարանի, համակարգչային ծրագրերի ստեղծում,

• գիտական նորագույն մշակումներին հանրության ծանոթացում:

#### ՀԻՄԱԿՐԱՄԻ ԱՌԱՋԻԿԱ

#### ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄԱԿԱՆ ՈՒՂՈՌԹՅՈՒՆՆԵՐԸ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների ոլորտը կարելի է բնութագրել որպես հայագիտություն, որի բովանդակությունն արդի փուլում էապես ընդլայնվել է, ներառելով միշարք հասարակական գիտությունների (սոցիոլոգիա, քաղաքագիտու-

թյուն, պատմություն, փիլիսոփայություն, ազգագրություն, մշակութաբանություն, հոգեբանություն և այլն) հատույթում գտնվող հարցադրումներ և դրանց համապատասխան լուծումներ: Եթե անցյալում հայագիտության ուղղվածության վեկտորն ուղղված էր դեպի անցյալը, ապա ներկայումս սուր անհրաժեշտություն է զգացվում վեկտորի սլաքն ուղղել ապագային: Բացի այդ, առաջանում է հայագիտության բովանդակային նոր վեկտոր՝ միտված համակարգված մարտահրավերներին համարժեք պատասխաններ գտնելուն:

Անկախ պետականության պայմաններում հասարակության մեջ աստիճանաբար ձևավորվել է անհրաժեշտություն պարզաբանել, թե որո՞նք են մեր ազգային շահերը, նպատակները, առաջնահերթությունները 21-րդ դարում, ինչպիսի՞ ռազմավարություն և մարտավարություն է պահանջվում նրանց պաշտպանության համար երկրի ներսում և միջազգային ասպարեզում:

Այս իրողությամբ է պայմանավորված հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների թեմաների առաջնահերթությունը: Որպես հիմնական ընտրվեցին երկու փոխսկապակցված հիմնախնդիրներ՝

ա. Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում

բ. Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ

«Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում» թեման ներառում է հետևյալ խնդիրների շրջանակը՝

• արդի գլոբալ գործընթացները և ազգային պետության գործառությունները,

• ազգային շահեր, նպատակներ, առաջնահերթություններ. Էռլեյուն, բովանդակություն,

• հայկական շարունակականության հայեցակարգը,

• ազգային և պետական շահ ըմբռնումների փոխհարաբերակցությունը,

• ազգային պետությունը, քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարությունը,

• ազգային համաձայնության և միասնականության գաղափարը որպես ազգային պետության ներքին կայունության և զարգացման գրավական, վերջինիս հասարակական, քաղաքական, տնտեսական, հոգևոր և

մշակութային ռեսուրսները,

• Հայոց Ցեղասպանության ճամաչումը և Պահանջատիրությունը որպես հայկական գործոնի կարևորագույն բաղադրանասեր,

• Հայրենիք-Սփյուռք առնչությունների մոդելավորման հիմնախնդիրները,

• Սփյուռքի ազգապահպանման գործոնները և հայոց անկախ պետականության գործառությները,

• ՀՀ արտաքին քաղաքականության և ռազմական դոկտրինայի հիմնադրույթները,

• ազգային պետության կառուցման տնտեսական հիմնավորումները,

• գիտակրթական և մշակութային քաղաքականությունը որպես ազգային պետության ձևավորման կարևորագույն բաղադրանաս,

• անկախ պետականության զարգացման ուղիներն ու հեռանկարները  
21-րդ դարում:

«Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ» թեման ներառում է խնդիրների հետևյալ շրջանակը.

• ազգային անվտանգության հանալիր ծրագրի հիմնադրույթները,

• հազեր-բարոյական անվտանգության հիմնադրույթներ,

• մշակութային անվտանգության հիմնադրույթներ,

• կրթական-դաստիարակչական անվտանգության հիմնադրույթներ,

• գիտատեխնիկական անվտանգության հիմնադրույթներ,

• տնտեսական (ֆինանսական) անվտանգության հիմնադրույթներ,

• կոնյունկուրսացիոն անվտանգության հիմնադրույթներ,

• տեղեկատվական անվտանգության հիմնադրույթներ,

• բնապահպանական անվտանգության հիմնադրույթներ,

• ժողովրդագրական անվտանգության հիմնադրույթներ,

• առողջապահական անվտանգության հիմնադրույթներ,

• սահմանամերձ շրջանների անվտանգության հիմնադրույթներ:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ՝

Անդրամիկ Մարգարյան - ՀՀ Վարչապետ

Մանուկ Թոփուլյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար

Կարինե Կիրակոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալ

Լևոն Մկրտչյան - ՀՀ Կրթության և գիտության նախարար

Տիգրան Մարգարյան - ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ

Արա Ավետիսյան - ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ

Իրավաբանական հասցե՝

Երևան-10, Կառավարական տուն, 1

Գրասենյակի հասցե՝

Երևան, Գարեգին Նժդեհի, 23

Հեռ. 44-04-72, 44-04-73

Ֆաքս (374 1) 44-04-73

E-mail: noravank@arminco.com